



Save the Children



Երևան 2015

**Երեխայի իրավունքների
իրավիճակի վերլուծություն.
Հայաստան**



Save the Children

**Երեխայի իրավունքների
իրավիճակի վերլուծություն.
Հայաստան**

Երևան 2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ	4
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ.	5
ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ	6
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	8
ԳԼՈՒԽ 1. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	10
ԳԼՈՒԽ 2. ԵՐԿՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ	12
2.1 ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ	12
2.2 ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ	13
ԳԼՈՒԽ 3. ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ	15
3.1 ԵՐԵԽԱՅԻ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ.	15
3.1.1 Իրավական բարեփոխումներ և երեխայի իրավունքների իրականացման ապահովում	15
3.1.2. Երեխայի քաղաքացիական իրավունքներ ու ազատություններ. գրանցման, անվան ու քաղաքացիության և ինքնության ապահպանման իրավունք	29
3.1.3. Երեխայի մասնակցություն	33
3.2 ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	35
3.2.1. Երեխայի պաշտպանություն՝ ներառյալ ընտանեկան միջավայրը	37
3.2.2 Երեխայի պաշտպանություն. պաշտպանության հատուկ միջոցներ	52
3.3 ԵՐԵԽԱՅԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	62
3.3.1 Երեխաների՝ նախադպրոցական կրթություն ստանալու իրավունքը	62
3.3.2 Երեխաների՝ դպրոցական կրթություն ստանալու իրավունքը	63
3.3.3 Խոցելի խմբերի երեխաների կրթությունը	68
3.3.4 Երեխաների մասնակցությունը մշակութային կյանքին	70
3.3.5 Երեխաների՝ նախնական և միջին մասնագիտական կրթություն ստանալու իրավունքը	71
3.4 ԵՐԵԽԱՅԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	73
3.4.1 Վերարտադրողական առողջության մատչելիություն և որակ	73
3.4.2 Երեխայի (6-18) առողջությունն ու սնուցումը	75
3.4.3 Դպրոցական առողջությունն ու սնուցումը.	77
3.4.4 Հատուկ կարիքներով երեխաների առողջությունը	79

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

Աղյուսակ 1: «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի հաշվետվության խմբերը	11
Աղյուսակ 2: Մանկական աղքատության ցուցանիշների դինամիկան 2008-2013թթ.-ին (տոկոսներով).	23
Աղյուսակ 3: Երեխայի դեմ հանցագործությունների վիճակագրություն	38
Աղյուսակ 4: Նախադպրոցական հաստատությունների քանակը և դրանք հաճախող երեխաների թիվը	42

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԾԽՄ	Առանց ծնողական խնամքի մնացած
ԱՀԿ	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
ԱՄՆ	Ամերիկայի միացյալ նահանգներ
ԱՆ	Առողջապահության նախարարություն
ԱՌՆ	Աղետների ռիսկի նվազեցում
ԱՍՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ԵԻԿ	Երեխայի իրավունքների կոնվենցիա
ԸՕ	Ընտանեկան օրենսգիրք
ԾՀՓ	Ծառայությունների հիմնական փաթեթ
ԿԱՊԿՈՒ	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող
ԿԳՆ	Կրթության և գիտության նախարարություն
ԿԳՆ ԾԻԳ	Կրթության և գիտության նախարարության Ծրագրերի իրականացման գործակալություն
ՀԺԱՀ	Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն
ՀՀ	Հայաստանի հանրապետություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՄԱԿ	Միացյալ ազգերի կազմակերպություն
ՄԻՊ	Մարդու իրավունքների պաշտպան
ՄՄՈՒՀ	Միջին մասնագիտական ուսումնական հաստատություն
ՄՊԾ	Միգրացիոն պետական ծառայություն
ՆԴ	Ներառական դպրոց
ՆԴՀ	Նախադպրոցական հաստատություն
ՍՓՀ	Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններ
ՊՆ	Պաշտպանության նախարարություն
ՔԿՀ	Քրեակատարողական հիմնարկ
ՔԿՕ	Քրեակատարողական օրենսգիրք

ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ

Երեխաներն առնչվում են բազմաթիվ խնդիրների հետ այն բոլոր երկրներում, որտեղ գործում է «Մեյվ դը չիլդրեն»-ը: Կարիքների վրա հիմնված ծրագրերի մշակման և իրականացման նպատակով անհրաժեշտություն կար իրականացնելու Հայաստանում երեխայի իրավունքների իրավիճակի վերլուծություն: Երեխայի իրավունքների իրավիճակի վերլուծությունը հնարավորություն է տալիս խորապես հասկանալու, թե որքանով են երեխաներն օգտվում իրենց իրավունքներից, և ինչպիսի խոչընդոտների ու դժվարությունների են հանդիպում դրանց իրացման ընթացքում: Հետազոտության նպատակն է ապահովել անհրաժեշտ վերլուծություն ռազմավարական որոշումների կայացման համար թեմատիկ տեղեկատվության հավաքագրման և համադրման միջոցով:

Գնահատման մեթոդաբանությունը ներառել է երկրորդային տեղեկատվության վերլուծություն և առաջնային տեղեկատվության հավաքագրում հիմնական տեղեկատվության հետ հանդիպումների միջոցով: Վերլուծության ընթացքում ուսումնասիրվել են «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի հետևյալ իրավունքները՝ Երեխայի իրավունքների կառավարում, Երեխայի պաշտպանություն, Կրթության և մշակույթի իրավունք, Առողջության և բարեկեցության իրավունք:

Երեխայի իրավունքների կառավարում

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է երեխաների իրավունքներին վերաբերող մի շարք առանցքային միջազգային փաստաթղթեր, սակայն որոշ կարևոր կամընտիր արձանագրություններ դեռևս վավերացված չեն: Մինևույն ժամանակ, Երեխայի իրավունքների վերաբերյալ ընդունված նոր իրավական ակտերի նախագծերի ազդեցության գնահատման պահանջ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ, թեև նման գնահատումներ նախատեսված են մի շարք այլ բնագավառներում: Ինչ վերաբերում է երեխայի իրավունքներին առնչվող ՀՀ օրենքին, ապա երեխայի իրավունքների պաշտպանության գործողությունները իրականացվում են տարեկան ծրագրերով նախատեսված ձևաչափով և ժամանակահատվածում, սակայն այս ծրագրերն ունեն բազմաթիվ բացթողումներ:

Երեխաների պաշտպանություն

Ուսումնասիրության արդյունքների համաձայն երեխային վիրավորանքից, հոգատարության բացակայությունից, անուշադրությունից կամ կոպիտ վերաբերմունքից զերծ պահելուն վերաբերող օրենսդրությունը հստակ չէ: Մասնավորապես՝ (ա) այս երևույթների ու դրանց դեմ պայքարելու նկարագրությունները դեռևս մշակման փուլում են, (բ) բռնության ոչ բոլոր դեպքերն են պատվում ՀՀ քրեական օրենսդրությամբ, (գ) երեխաների նկատմամբ բռնության դրսևորումները պայմանավորված են ընտանիքի և հասարակության կողմից երեխային որպես անհատ չընկալելու կամ մասնակի ընկալելու հանգամանքով, (ե) երեխայի նկատմամբ ֆիզիկական և հոգեբանական բռնությունը դեռ կիրառվում է որպես դաստիարակչական մեթոդ, (զ) չկա առանձին իրավական ակտ կամ մեկ ամբողջական փաստաթուղթ երեխաների ֆիզիկական և հոգեբանական ինտեգրացիայի և սոցիալական վերականգման վերաբերյալ, (է) ՀՀ-ում դեռևս չկա անչափահասների արդարադատության մասին առանձին օրենսդրություն:

Կրթության և մշակույթի իրավունք

Հետազոտությունը ցույց տվեց, որ դպրոցահասակ երեխաներին ընձեռված է դպրոց հաճախելու հնարավորությունը: Սակայն, ֆիզիկական պայմանների առումով անմխիթար է ներառական դպրոցների վիճակը, որոնք անբավարար կերպով են հարմարեցված հաշմանդամություն ունեցող երեխաների կարիքներին: Քաղաքային համայնքներում նախակրթարան-



ներ հաճախող երեխաների տոկոսը ավելի բարձր է քան գյուղական համայնքներում, քանի որ գյուղական համայնքներում երեխաները հիմնականում զրկված են նախակրթարաններ հաճախելու հնարավորություններից վերջինների բացակայության պատճառով: Ավելին, նկատվում է հաշմանդամություն ունեցող երեխաների համար հարմարեցված նախակրթարանների խիստ պակաս:

Առողջության և բարեկեցության իրավունք

Ուսումնասիրության տվյալների համաձայն, ՀՀ քաղաքացիները հիմնականում դժվարությունների չեն հանդիպում առողջապահական ծառայություններից օգտվելիս: Սակայն, առողջապահական ծառայությունները, բացառությամբ 7 տարեկանից ցածր երեխաների և որոշակի սահմանված խմբերի, վճարովի են: Միևնույն ժամանակ հաշմանդամություն ունեցող երեխաներն ու մեծահասակներն առնչվում են որոշակի խոչընդոտների՝ առողջապահական և վերականգնողական ծառայություններից օգտվելիս, հատկապես գյուղական համայնքներում: Այնուամենայնիվ, հատուկ կարիքներով երեխաների համար գործում են պետական անվճար առողջապահական և սոցիալական աջակցման ծրագրեր:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երեխայի իրավունքների պաշտպանությունն և անվտանգ ու բոնությունից զերծ միջավայրի ապահովումը հանդիսանում են յուրաքանչյուր երկիր առաջնահերթությունները: Այդ իսկ պատճառով, երեխաների նկատմամբ կիրառվող վիրավորանքի, բռնության, արհամարհանքի, շահագործման հետ կապված հիմնախնդիրները մտահոգում են պետությանը և բազմաթիվ կազմակերպությունների, այդ թվում «Մեյվ դը չիլդրեն»-ին, որոնք իրականացնում են բազմազան ծրագրային միջամտություններ և նպաստում են երեխաներին առնչվող քաղաքականության և ռեսուրսների բարելավմանը:

Սույն հաշվետվությունը բացահայտում է Հայաստանում՝ երեխայի իրավունքների պաշտպանության իրավիճակը՝ կիրառելով Երեխայի իրավունքների իրավիճակի վերլուծության մեթոդաբանությունը: Երեխայի իրավունքների իրավիճակի վերլուծությունը հնարավորություն է տալիս խորապես հասկանալու թե որքանով են երեխաներն օգտվում իրենց իրավունքներից, և ինչպիսի խոչընդոտներ ու դժվարություններ են հանդիպում դրանց իրագործման ընթացքում: Վերլուծության համար օգտագործվել է տեղեկատվություն՝ ստացված տարբեր խմբերից, այդ թվում՝ երեխաներից և երիտասարդներից: Այն վերլուծում է երեխայի իրավունքների հետ կապված հիմնախնդիրների, ներգրավված շահագրգիռ կողմերի, ինչպես նաև հիմնախնդիրների կանխարգելման և արձագանքման համար արդեն իսկ գործող քաղաքականությունների, ծրագրերի և ծառայությունների միտումներն ու օրինակները: Չնայած Երեխայի իրավունքների իրավիճակի վերլուծությունը շարունակում է ներդրում հանդիսանալ ռազմավարական պլաններում, այն ունի նաև պոտենցիալ արժեքայնություն իրականացվող աշխատանքների այլ ոլորտներում ևս: Այդ ոլորտները կարող են ներառել ծրագրերի պլանավորման գործընթացը, գործընկերների, կառավարությունների, դոնորների և քաղաքացիական հասարակության այլ մասնակիցների հետ համակարգման աշխատանքները, աջակցությունը երկրի տարբեր մակարդակներում քաղաքականությունների մշակմանն ու իրականացմանը, և այլն:

Հայաստանում երեխայի իրավունքների պաշտպանության խոչընդոտներից մեկը հանդիսանում էր և որոշ առումով շարունակում է մնալ տնտեսական վիճակն ու աղքատությունը: Հայաստանի տնտեսությունը քայքայվեց անկախության առաջին տարիների ընթացքում: Դրան հետևեց արժույթային համակարգի անկումը և նախկին Խորհրդային Միության երկրների հետ արտաքին առևտրի պայմաններից շեղումը: Այնուամենայնիվ, ամենաավերիչ հետևանքը բնակչության աղքատացումն էր և եկամտի անհավասարությունը: Ավելի ուշ, 1994-2005 թվականներին Հայաստանի տնտեսությունը ենթարկվեց կտրուկ կառուցվածքային տեղաշարժերի: Բարձր տնտեսական աճը դարձավ աղքատության նվազեցման հիմնական որոշիչ գործոնը, որը 1999-2005 թվականներին աղքատությունը կրճատեց 55.1%-ից մինչև 29.8%: Այնուամենայնիվ 2008թ.-ից սկսած, գլոբալ տնտեսական ճգնաժամի ազդեցության հետևանքով հանրապետության տնտեսությունը բախվել էր արմատական անկման՝ 2013թ.-ին աղքատության աստիճանը հասցնելով 32%-ի: Համարյա ամեն երրորդ անձն աղքատ էր, նրանցից 13.3%-ը՝ շատ աղքատ, իսկ 2.7%-ը՝ չափազանց աղքատ: Երեխաները կազմում են բնակչության 25%-ը: Երեխայի իրավիճակը ևս վատթարացել է վերջին տարիների ընթացքում: Համաձայն 2013թ.-ի պետական վիճակագրության, Հայաստանում երեխաների 3.3%-ը ապրում է խիստ աղքատության պայմաններում և 37.3%-ը՝ աղքատության:

Բոլոր երկրներում, որտեղ «Մեյվ դը չիլդրեն»-ը գործունեություն է ծավալում, երեխաները ենթարկվում են վիրավորանքի, բռնության, արհամարհանքի, շահագործման: Միլիոնավոր երեխաներ վատ վերաբերմունքի են արժանանում, և շատ-շատերը դիսկի տակ են: Սա առաջացնում է արգելքներ երեխաների իրավունքների հետագա զարգացման և նրանց քաղաքա-

¹ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2014, Մաս 1. Աղքատության պատկերը և աշխատանքի շուկայի զարգացումները Հայաստանում 2008-2013թթ., ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն և Համաշխարհային բանկ. վերցված է <http://www.armstat.am/en/?nid=82&id=1618> կայքից, հունիսի 22, 2015:



ցիական մասնակցության համար: Այս խնդիրները մտահոգում են ոչ միայն «Սեյվ դը չիլդրեն»-ին, այլ նաև շատ այլ կազմակերպությունների, որոնք իրականացնում են բազմազան ծրագրային միջամտություններ և նպաստում են երեխաներին առնչվող քաղաքականության և ռեսուրսների բարելավմանը: Սա նաև ուղղված է երեխաների շրջանում՝ իրենց իրավունքների վերաբերյալ իրազեկության բարձրացմանը:

1992 թվականին Գերագույն Խորհրդի որոշմամբ Հայաստանի Հանրապետությունը միացավ «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիային, որը ՀՀ-ում ուժի մեջ մտավ 22.07.1993թ.-ին: Կոնվենցիայի մուտքը և հետագա վավերացումը սկիզբ դրեց նոր անկախացած երկրում օրենսդրական դաշտի բարեփոխումների գործընթացին, ինչպես նաև ճանապարհ բացեց երեխաների պաշտպանության ոլորտի բարեփոխումներին: «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի վավերացումը պետության և քաղաքացիների միջև ստեղծում է այսպես կոչված սոցիալական պայմանագիր, որով երեխաները ստանում են օրենսդրական իրավունք՝ պահանջատեր լինելու պետությունից և հասարակությունից: Պետությունները և հասարակությունները հանդիպում են զգալի խոչընդոտների՝ երեխաների իրավունքների իրագործման համար համապատասխան միջոցներ գործածելիս, հատկապես արագ փոփոխվող և գլոբալիզացվող աշխարհում: Երեխայի իրավունքների իրավիճակի վերլուծության մեթոդաբանությունը հնարավորություն է տալիս ունենալու խոչընդոտների համակարգված վերլուծություն, ինչպես նաև մշակելու և տրամադրելու հիմնավորված և կիրառելի լուծումներ այն խնդիրներին, որոնց բխվում են երեխաները:

Վերջին տարիներին մի շարք տեղեկատվական հետազոտություններ են նախաձեռնվել Հայաստանում, որոնք վերլուծում են երեխաների վիճակը մասնավոր թեմատիկ և ոլորտային տեսանկյունից: Այսպիսի օրինակներ են «Հայաստանում երեխաների իրավիճակային վերլուծությունը» (ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ, 2012), «Հայաստանում այլընտրանքային խնամքի կարգավորման պատկերը» (ՍՕՍ մանկական գյուղեր, 2011) կամ «Երեխայի իրավունքները երեխաների խնամքի կենտրոններում և հատուկ կրթական հաստատություններում. համակարգված վերլուծություն»-ը (ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան, 2015): Չնայած նրան, որ այս բոլոր աշխատանքները նպաստում են երեխաների խնդիրների վերաբերյալ գիտելիքների ձեռքբերմանը, Հայաստանում կարիք կա «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի իրականացման վերաբերյալ գոյություն ունեցող հետազոտությունների մեկտեղում: Շատ կարևոր է երեխայի իրավունքների հարցերով զբաղվող բազմաթիվ գործիչների, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության և երեխաների ներառումն այս գործընթացում: Այդ նպատակով «Մեյվ դը չիլդրեն»-ի հայաստանյան ներկայացուցչությունը նախաձեռնել է Երեխայի իրավունքների իրավիճակի վերլուծությունը և ունի համակարգող դեր այս գործընթացում: Վերլուծությունը կարող է օգնել մեզ ստանալու երկրում երեխայի բոլոր իրավունքների իրականացման ամբողջական, լայն պատկերը, որը բավարար կլինի երկրի ապագա առաջնահերթությունների՝ ըստ թեմաների, շուրջ ավելի երկարաժամկետ որոշումների կայացման համար:

Հետազոտության հիմնական նպատակն է բավարար տեղեկատվության հավաքագրման միջոցով ռազմավարական որոշումների կայացման համար ամբողջական վերլուծության ապահովումը: 2015 թվականին Հայաստանում իրականացրած ուսումնասիրության նպատակը երկրում երեխաների խնդիրների ամբողջական գնահատումն է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների իրականացման լույսի ներքո: Ուսումնասիրության ժամանակ կիրառվել է նույն մեթոդաբանությանը, որը ստուգվել և օգտագործվել էր «Մեյվ դը չիլդրեն»-ի կողմից՝ 1990 թվականին «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց կարճ ժամանակ անց: Սույն վերլուծության համար անհրաժեշտ ուղեցույցներն ընդունվել են Հայաստանում: Հայաստանում երեխայի իրավունքների իրավիճակի վերլուծությունն իրականացվել է ազգային մակարդակով երկրում իրավիճակի պատկերը ձևավորելու համար:

Երեխայի իրավունքների իրավիճակի վերլուծության գործընթացը ներառում է երկրորդական տվյալների ուսումնասիրություն և հիմնական տեղեկատվությունների հետ՝ որպես առաջնային աղբյուրների, հանդիպումներ: Հայաստանում երեխայի իրավունքների իրավիճակի վերլուծությունը ձեռնարկվել է երեխաների և քաղաքացիական հասարակության գործընկերների հետ համագործակցության միջոցով, ովքեր մասնակցել և իրենց ներդրումն են ունեցել վերլուծության տարբեր փուլերում ու կիսվել իրենց գիտելիքներով և հայացքներով: Բացի այդ, ՀՀ-ներից և այլ շահագրգիռ կազմակերպություններից ստացվել է արձագանք առցանց հետադարձ կապի մեխանիզմների շնորհիվ: Ստացված արձագանքը վերանայվել է «Մեյվ դը չիլդրեն»-ի մասնագետների կողմից նախքան հաշվետվության մեջ ընդգրկվելը: Մենք հավատում ենք, որ այս մոտեցումը շատ առավելություններ ունի, ներառյալ՝ փորձի և գիտելիքների հոսք, ընդհանուր սեփականության գիտակցում, հարաբերությունների ձևավորում և ըստ միատեսակ առաջնահերթությունների հետագա գործողությունների հնարավոր համակարգում: Խորհրդատվական գործընթացների սահմանափակումն այն էր, որ առցանց հետադարձ կապի մեխանիզմով ստացված մեկնաբանությունները երբեմն անսանուն են, ինչը խոչընդոտում

է տրամադրված տեղեկատվության ստուգումը կամ արժանահավատության մասին դատողություններ անելը:

Երեխայի իրավունքների իրավիճակի վերլուծությունը ուղղակիորեն կապված է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի պարտավորությունների հետ, իսկ «Երեխայի իրավունքների իրավիճակի վերլուծություն. Հայաստան» ուսումնասիրության բովանդակությունը համապատասխանում է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով սահմանված զեկույցների ութ թեմատիկ խմբերին, ինչպես և ներկայացված է աղյուսակում.

**Աղյուսակ 1: «Երեխայի իրավունքների մասին»
ՄԱԿ-ի կոնվենցիայի հաշվետվության խմբերը**

Թեմա	ՄԱԿ-ի ԵԻԿ-ի զեկույցների ութ խմբերը	Մարդասիրական
Երեխայի իրավունքների կառավարում (ներառյալ երեխաների համար ներդրումները)	Իրականացման ընդհանուր չափանիշները (հոդվածներ 4, 42, 44.6)	Երեխայի իրավունքների իրավիճակի վերլուծությունը փորձում է դիտարկել առկա կամ հավանական արտակարգ իրավիճակների, կլիմայի փոփոխության, արտակարգ իրավիճակներում պատրաստվածության ազդեցությունը երեխաների իրավունքների իրականացման վրա:
	Ընդհանուր սկզբունքները (հոդվածներ 2, 3, 6, 12)	
	Քաղաքացիական իրավունքները և ազատությունները (հոդվածներ 7, 8, 13-17, 37)	
Երեխայի պաշտպանություն	Ընտանեկան միջավայր (հոդվածներ 5, 9, 10, 11, 18, 19, 20, 21, 25, 27)	
	Հատուկ պաշտպանական միջոցներ (հոդվածներ 22, 37-40)	
Կրթություն	Կրթություն և մշակույթ (հոդվածներ 28, 29, 31)	
Առողջապահություն և սնուցում, սով և ապրուստի միջոց	Հիմնական առողջության պահպանում և բարելավություն (հոդվածներ 6, 18, 23, 24, 26, 27)	

2.1 ԲՆԱԿԶՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ

Վերջին պաշտոնական մարդահամարի տվյալների համաձայն 2011 թվականին բնակչության թիվը Հայաստանում կազմում է 3,041,000 մարդ²: Առկա շեղման միտումը բնակչության թվաքանակում, որը 2013 թվականին կազմում էր 3,017,100 մարդ՝ ներառյալ 1,914,100 քաղաքային և 1,103,000 գյուղական, 2014 թվականի համեմատ, երբ այն 3,010,600 էր՝ ներառյալ 1,913,000 քաղաքային և 1,097,600 գյուղական: Դեպի արտագաղթ միտվածությունը և ցածր ծնելիության մակարդակը նպաստում են Հայաստանի բնակչության նվազմանը³: Ըստ 2013 թվականի տվյալների ընդհանուր պտղաբերության գործակիցը կնոջ վերարտադրողական կյանքի ընթացքում (15-49 տարեկան) կազմում էր յուրաքանչյուր մեկ կնոջ հաշվով 1.573 երեխա, ինչը նշանակալիորեն ցածր է 2.15 երեխա ցուցանիշից, որն անհրաժեշտ է բնակչության համալրման համար:⁴

Վերջին տարիներին երեխաների թիվը Հայաստանում նվազել է: 2011թ.-ի մարդահամարի տվյալներով, 16 տարեկանից ցածր երեխաների բաժինն ընդհանուր բնակչության մեջ կազմում էր 20.2%, 2001թ.-ի մարդահամարի համաձայն այն կազմում էր 26.3%, իսկ 1990 թ.-ին՝ 32.2%⁵: 2013-ին երեխաների ընդհանուր թիվը 723,490 էր՝ ներառյալ 209,890 երեխա 5 տարեկանից ցածր⁶:

Կառավարության աղքատության նվազման ռազմավարությունը նախատեսում է 2015 թվականին 5-ից ցածր տարիքի երեխաների մահացության թվի նվազեցում մինչև 10% (2002 թվականին արձանագրված 15.9%-ի փոխարեն), և 1 տարեկանից ցածր երեխաների մահացության թվի նվազեցում մինչև 8.5% (2002 թվականին արձանագրված 13.4%-ի փոխարեն): Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի ընդունումից հետո ՀՀ Կառավարությունը տարբեր քայլեր է ձեռնարկել, որոնք նպաստել են երեխայի մահացության թվի կրճատմանը և մայրերին ու երեխաներին տրամադրվող առողջապահական ծառայությունների որակի բարձրացմանը: Վերջին 20 տարիներին քաղաքական և սոցիալ-տնտեսական փոփոխությունները ազդեցություն են թողել Հայաստանում բնակչության վերարտադրողական վարքի վրա՝ առաջացնելով պտղաբերության գործակցի սաստիկ անկում՝ 1990 թվականին կազմելով 2.62 երեխա մեկ կնոջ հաշվով, իսկ 2010 թվականին՝ 1.56⁷:

² Հայաստանի Հանրապետության 2011թ. մարդահամարի արդյունքները, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, տես <http://www.armstat.am/en/?nid=337>

³ Հայաստանի բնակչության թվի անկումը (ճգնաժամի ակունքները և դրանց հաղթահարման ուղիները), հետազոտական ծրագիր (2013թ.), տես <http://www.depop.am/>

⁴ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2014, Մաս 1. Աղքատության պատկերը և աշխատանքի շուկայի զարգացումները Հայաստանում 2008-2013թթ., ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն և Համաշխարհային բանկ, տես <http://www.armstat.am/en/?nid=82&id=1618>

⁵ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2014, Մաս 1. Աղքատության պատկերը և աշխատանքի շուկայի զարգացումները Հայաստանում 2008-2013թթ., ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն և Համաշխարհային բանկ, տես <http://www.armstat.am/en/?nid=82&id=1618>

⁶ Աշխարհի երեխաների կարգավիճակը, 2015, երկրի վիճակագրական տեղեկատվություն, Հայաստան (2015), ՄԱԿ-ի ՄԱՆԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ, տես http://www.unicef.org/infobycountry/armenia_statistics.html

⁷ Սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների տարածվածությունն ու պատճառները Հայաստանում (2012), ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ:

2.2 ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Երեխաները մնում են հասարակության տնտեսապես ամենախոցելի խմբի մեջ: Գլոբալ տնտեսական ճգնաժամից սկսած աղքատության մակարդակը Հայաստանում աճել է 2013 թվականին մինչև 32%՝ համաձայն ազգային վիճակագրական ծառայությունների տվյալների: Համարյա ամեն երրորդ անձը աղքատ է, նրանցից 13.3%-ը՝ շատ աղքատ, իսկ 2.7%-ը՝ ծայրահեղ աղքատ: Երեխաները կազմում են բնակչության 25%-ը: Համաձայն 2014 թվականի Հայաստանի աղքատության պատկերի՝ մանկական աղքատությունը կազմում է 37.3%, և երեխաների 3.2%-ը ծայրահեղ աղքատության պայմաններում են ապրում: Աղքատության բարձր մակարդակը խոչընդոտ է հանդիսանում երեխաների կրթության համար, առողջապահական խնամք և սնուցում ստանալիս: Հաշմանդամություն ունեցող երեխաները նրանցից ամենախոցելին են:

Կրթության և առողջապահության պետական ֆինանսավորումն աննշան է⁸: Վերջին տարիներին առողջապահության ծախսերը կազմում են ՀՆԱ-ի 1.6-1.7%-ը, բայց 2013թ.-ին նվազել են մինչև 1.5%: Կրթության ծախսերն ընկել են սկսած 2009 թվականից, և 2013 թվականին կազմել են ՀՆԱ-ի 2.4%-ը: Առողջապահական և կրթության ծախսերի մասնաբաժինը նույնպես անկում է ապրել: 2007-ից մինչև 2013 թվականները կրթության ծախսերի տոկոսն ընկել է 14.98%-ից մինչև 9.02%՝ որպես պետական բյուջետային ծախսերի տոկոս, մինչդեռ առողջապահական ծախսերը 7.4 %-ից նվազել են մինչև 5.6%:

Կաշառակերությունը կարևոր գործոն է, որը խանգարում է Հայաստանում տնտեսական զարգացմանը: Համաձայն հակակոռուպցիոն կենտրոնի, Հայաստանը այն երկրների ցանկում է, որտեղ բարձր է կաշառակերության մակարդակը: 2003 թվականին Հայաստանը գտնվում էր 78-րդ հորիզոնականում կաշառակերության ցուցիչով, որը հրատարակվել է «Թրանսպերենսի Ինդեքսեյշնի» կողմից, բայց 2011 թվականին Հայաստանի դիրքն անկում էր ապրել մինչև 129-րդ հորիզոնական, որը ենթադրում է կաշառակերության աճ: Հրապարակավ՝ ներառյալ ՀՀ Կառավարության հակակոռուպցիոն ռազմավարությամբ, ընդունված է, որ Հայաստանում ամենակոռումպացված ոլորտներն են՝ կրթությունը, առողջապահությունը, դատական, իրավական, հարկային և մաքսային ծառայությունները: Կրթության և առողջապահության ոլորտներում կաշառակերությունն ազդում է առաջին հերթին երեխաների վրա, քանի որ նրանք չեն ստանում համապատասխան ծառայություններ:

Սիրիական կոնֆլիկտը և միտումները: Հայաստանում կան մոտ 15,000 սիրիացի փախստականներ, որոնք փնտրում են պաշտպանություն և ապաստարան: Հիմնական մարտահրավերը, որին հանդիպում են սիրիացի փախստականները տնտեսական հնարավորությունների պակասն է. հարցված բնակչության 42.5%-ը աշխատազուրկ է: Հաջորդ մտահոգիչ փաստը նախակրթարանների անհասանելիությունն է: 6 տարեկանից ցածր սիրիացի երեխաների 50%-ը չի հաճախում ոչ մի նախակրթարան: Սպասվում է, որ փախստականների հոսքը դեպի Հայաստան կաճի եկող ամիսներին:

Կոնֆլիկտ: Չնայած 1994 թվականին Հայաստանի և Ադրբեյջանի միջև կնքված հրադադարին, Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտը դեռ մնում է չլուծված և պրակտիկորեն սպառնում է երկրի ապահովությանը: Հայաստանի սահմանները Թուրքիայի և Ադրբեյջանի հետ մնում են փակ, որը խոչընդոտում է երկրի տնտեսական զարգացմանը: Միայն վերջին տարվա ընթացքում փոխադարձ կրակոցները սահմանի երկու կողմերում էլ խլել են բազմաթիվ մարդկային կյանքեր. սահմանային գյուղերը դիպուկահարների ամենօրյա թիրախն են:

Ոչ պաշտոնական զբաղվածությունը և գործազրկությունը բարձր մակարդակի վրա է Հայաստանում: Պաշտոնապես չգրանցված զբաղվածների թիվը կազմում է տնտեսապես ակտիվ բնակչության կեսը, մինչդեռ գործազուրկների թիվը 16%-ից մի փոքր ավելի է: Հայաստանի տնտեսությունը կախված է արտասահմանից եկող փոխանցումներից (հիմնականում

⁸ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, տես <http://www.armstat.am/en/?nid=45>



Ռուսաստանի Դաշնությունից): 2014թ.-ի վերջին Ռուսաստանի Դաշնությունում գրանցված ֆինանսական ցնցումների արձագանքն անմիջապես տարածվում է Հայաստանում՝ հանգեցնելով արժույթի արժեզրկման, ապրանքային արտադրանքի գների բարձրացման և տնտեսական գործունեության թուլացմանը: Հայկական արժույթի արժեզրկման 20%-ից ավելին տեղի է ունեցել 2014 թվականի վերջում՝ հանգեցնելով սննդի գնաճին և ֆինանսական շուկայի տատանումներին:

3.1 ԵՐԵՒԱՅԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.1.1 Իրավական բարեփոխումներ և երեխայի իրավունքների իրականացման ապահովում

Հայաստանի Հանրապետության մասնակցությունը երեխայի իրավունքների պաշտպանության բնագավառի միջազգային պայմանագրերին.

Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել են երեխայի իրավունքների բնագավառի հիմնական միջազգային պայմանագրերը: 1992թ.-ին Հայաստանի Հանրապետությունը Գերագույն խորհրդի որոշմամբ միացել է Միավորված ազգերի կազմակերպության «երեխայի իրավունքների մասին» կոնվենցիային, որը ուժի մեջ է մտել 22.07.1993թ.-ին: 2003թ.-ին ստորագրվել են «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի երկու Կամրնտիր արձանագրությունները՝ «Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին» արձանագրությունը և «Զինված հակամարտություններին երեխաների մասնակցության վերաբերյալ» կամրնտիր արձանագրությունը՝ կից հայտարարությամբ⁹, որոնք վավերացվել են 2005թ.-ին¹⁰:

Այնուամենայնիվ, ՀՀ-ի կողմից դեռևս որևէ գործողություն չի ձեռնարկվել «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի՝ Հաղորդումների ներկայացման ընթացակարգի վերաբերյալ կամրնտիր արձանագրությունը վավերացնելու ուղղությամբ: Կամրնտիր արձանագրությունն ընդունվել է 2011թ. և ուժի մեջ է մտել 2014թ.-ի ապրիլին: Այն հնարավորություն է ընձեռում անհատներին կամ անհատների խմբերին անմիջականորեն հաղորդումներ ներկայացնելու ՄԱԿ-ի երեխայի իրավունքների կոմիտեին (այսուհետ՝ նաև Կոմիտե)՝ «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով և երկու Կամրնտիր արձանագրություններով ամրագրված իրավունքների խախտումների վերաբերյալ: Արձանագրենք նաև, որ ՄԱԿ-ի երեխայի իրավունքների կոմիտեն «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի կատարման վերաբերյալ Հայաստանի երրորդ և չորրորդ պարբերա-

⁹ Համաձայն արձանագրության 3-րդ հոդվածի 2-րդ կետի՝ արձանագրությունը վավերացնող պետությունը ներկայացնում է պարտադիր հայտարարություն՝ նշելով կամավոր զորակոչի ենթակա անձանց նվազագույն տարիքը և այն երաշխիքները, որով բացառվելու է այդպիսի զորակոչի բռնի կամ հարկադիր բնույթը: ՀՀ-ի կողմից համապատասխան հայտարարությունը ներկայացվել է:

¹⁰ Վավերացվել են նաև Աշխատանքի միջազգային կազմակերպության «Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին» կոնվենցիան, «Հարկադիր աշխատանքի վերացման մասին» կոնվենցիան, «Նվազագույն տարիքի մասին» կոնվենցիան, «Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին» կոնվենցիան, Հաագայում ստորագրված «Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» կոնվենցիան՝ կից հայտարարություններով, «Ծնողական պարտականությունների և երեխայի պաշտպանությանն ուղղված միջոցների առնչությամբ իրավասության, կիրառելի իրավունքի, ճանաչման, իրականացման և համագործակցության մասին» կոնվենցիան, ՄԱԿ-ի «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» կոնվենցիան լրացնող՝ «Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին», ինչպես նաև «Ցամաքով, ծովով և օդով միգրանտներին անօրինական ներս բերելու դեմ» արձանագրությունները, «Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին» Հաագայի կոնվենցիան, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան, «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան: 1994թ. ՀՀ-ն միացել է ՄԱԿ-ի երեխաների կենսունակությունը, պաշտպանությունը և զարգացումը ապահովելու վերաբերյալ համաշխարհային հռչակագրին:



կան զեկույցների վերաբերյալ՝ 2013թ. հուլիսին ընդունած եզրափակիչ հետևություններով առաջարկել է ՀՀ Կառավարությանը վավերացնել վերոգրյալ Կամրնտի արձանագրությունը՝ երեխայի իրավունքների ապահովման համակարգն ամրապնդելու նպատակով¹¹: ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Կամրնտի արձանագրությանը միանալու հարցը ենթակա է քննարկման, քանի որ այս առաջարկը ներկայացվել է ՄԱԿ-ի երեխայի իրավունքների կոմիտեի եզրափակիչ հետևություններով, սակայն ներկայում արձանագրությունը ստորագրելու և վավերացնելու ուղղությամբ որևէ առաջընթաց չկա¹²:

Անհատական զանգատների ընթացակարգ սահմանող կարևոր նշանակություն ունեցող միջազգային պայմանագրեր են հանդիսանում նաև «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի կամրնտի արձանագրությունը և ՄԱԿ-ի «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի կամրնտի արձանագրությունը, որոնք ևս վերաբերել են երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառին: Արձանագրությունները ստորագրվել են 2007 և 2009թթ.-ին համապատասխանաբար, սակայն այդպես էլ չեն վավերացվել Հայաստանի Հանրապետության կողմից:

Մարդու իրավունքների ազգային ծրագրով¹³ նախատեսված է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի կամրնտի արձանագրությունը վավերացնելու նպատակահարմարության հարցի քննարկման և առաջարկության ներկայացման միջոցառումը, որի կատարման ժամկետը նախատեսված էր 2014թ.-ի երրորդ եռամսյակը: Այնուամենայնիվ, ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ այս հարցը դեռևս որևէ ընթացք չի ստացել:

Երեխայի իրավունքների կոմիտեի 2013թ.-ի եզրափակիչ հետևություններով ՀՀ Կառավարությանն առաջարկվել է նաև վավերացնել ՄԱԿ-ի «Բոլոր աշխատող միգրանտների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության վերաբերյալ»

¹¹ Տե՛ս 2013թ. հուլիսի 8-ին հաստատված ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի եզրափակիչ հետևությունները՝ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի կատարման առնչությամբ Հայաստանի երրորդ եւ չորրորդ պարբերական զեկույցների վերաբերյալ (CRC/C/ARM/CO/3-4):

¹² Հարցազրույցի արդյունքներ. ՀՀ արտաքին գործերի նախարարության մարդու իրավունքների և մարդասիրական համագործակցության բաժնի ներկայացուցչի հետ:

¹³ «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 27.02.2014թ.-ի թիվ 303-Ն որոշում, կետ 101:

միջազգային կոնվենցիան: 2013թ. սեպտեմբերին ՀՀ-ի կողմից ստորագրվել է վերը նշյալ կոնվենցիան, սակայն **դեռևս չի վավերացվել:** ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ կոնվենցիան այժմ գտնվում է վավերացման փուլում¹⁴:

ՀՀ-ի կողմից առայսօր չի վավերացվել նաև «Երեխաների որդեգրման մասին» եվրոպական կոնվենցիան (վերանայված), որը ստորագրվել է դեռևս 2008թ.-ին:

Վերապահումներ

Երեխայի իրավունքների բնագավառում Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերի վերաբերյալ վերապահումներ չեն կատարվել, բացառությամբ հետևյալ պայմանագրերի. «Ծնողական պարտականությունների և երեխայի պաշտպանությանն ուղղված միջոցների առնչությամբ իրավասության, կիրառելի իրավունքի, ճանաչման, իրականացման և համագործակցության մասին» Հաագայի կոնվենցիա, «Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» կոնվենցիա, «Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին» կոնվենցիա: ՀՀ-ի կողմից վավերացված՝ ՄԱԿ-ի մարդու իրավունքների հիմնարար պայմանագրերի վերաբերյալ վերապահումներ չեն կատարվել¹⁵:

Ներպետական օրենսդրության համապատասխանությունը՝ «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի պահանջներին

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքն (այսուհետ՝ նաև Օրենք) ընդունվել է 29.05.1996թ.-ին և ուժի մեջ մտել՝ 27.06.1996թ.-ին: «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը¹⁶ մեծ մասամբ վերաբերում է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթները և այս առումով համապատասխանում է Կոնվենցիայի պահանջներին: Խնդիրն առավելապես օրենքով ամրագրված իրավունքների և դրույթների կիրառման մեխանիզմների բացակայությունն է կամ մեխանիզմների առկայության դեպքում՝ դրանց ոչ բավարար կիրառությունը:

Դեռևս ՀՀ Կառավարության 18.12.2003թ.-ի թիվ 1745-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015 թթ. ազգային ծրագրով»¹⁷ արձանագրվել են երեխայի իրավունքների բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանն առնչվող հիմնախնդիրները: Այսպես օրինակ, որպես երեխաներին վերաբերող օրենսդրական դաշտի լուրջ բացթողում՝ նշվել է ընդունված օրենսդրական ակտերը կիրարկող ենթակառուցվածքների անկատարությունը, օրենսդրական ակտերում երեխաների նկատմամբ դաժան վերաբերմունքի և նվաստացման առնչությամբ չափահասների պատասխանատվությունը վերանայելու խնդիրը: Նշվել է, որ գործող օրենսդրական համակարգը բարեփոխումների կարիք ունի այնպիսի խոցելի սոցիալական խմբերի իրավունքների պաշտպանությունն իրականացնելու մասով, ինչպիսիք են՝ մուրացիկ

¹⁴ Հարցազրույցի արդյունքներ. ՀՀ արտաքին գործերի նախարարության մարդու իրավունքների և մարդասիրական համագործակցության բաժնի ներկայացուցչի հետ:

¹⁵ ՄԱԿ-ի 9 միջազգային պայմանագրեր և Խոշտանգումների դեմ կոնվենցիային կից կամընտիր արձանագրություն:

¹⁶ Օրենքով սահմանվել են երեխայի հիմնական իրավունքներն ու երաշխիքները, այդ թվում՝ երեխայի կյանքի իրավունքը, անվան և քաղաքացիության իրավունքը, առողջության պահպանման իրավունքը, անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու իրավունքը, բռնությունից պաշտպանության իրավունքը, մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունքը, կրթության իրավունքը, ընտանիքում ապրելու երեխայի իրավունքը, բնակելի տարածության իրավունքը, ժառանգություն ստանալու երեխայի իրավունքը, մշակութային արժեքներին հաղորդակցվելու երեխայի իրավունքը, աշխատանքի իրավունքը, հանգստի իրավունքը, միավորումներին անդամակցելու երեխայի իրավունքը, երեխայի պատվի և արժանապատվության պաշտպանության իրավունքը: Սահմանվել են նաև անբարենպաստ պայմաններում և ծայրահեղ իրավիճակներում երեխայի իրավունքների պաշտպանությանն առնչվող կարգավորումներ, ինչպես նաև երեխայի իրավունքների պաշտպանության պետական քաղաքականության ծրագրային հիմունքները:

¹⁷ Ծրագիրն ուժը կորցրած է ճանաչվել 21.02.2013թ.:

և թափառաշրջիկ երեխաները: Նշվել է նաև, որ հաճախակի են դարձել զանգվածային լրատվության տարբեր միջոցներով ալկոհոլի և ծխախոտի գովազդները, ինչպես նաև մարդկային արժանապատվությունը նվաստացնող և բռնություն քարոզող տեղեկատվության տարածման դեպքերը: Ամրագրվել է, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում կարիք կա ամրագրել նաև առանձին դրույթ՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին՝ ոչ միայն նրանց, որոնց ծնողներն անհայտ են, այլև նրանց, որոնց ծնողները տվել են գրավոր հրաժարական, անգործունակ են, սոցիալական կենսաթոշակի իրավունք տալու մասին: Արձանագրվել է, որ հրատապ է Ընտանեկան օրենսգրքի նախագծի ընդունումը, որով Հայաստանի Հանրապետությունում կներդրվի խնամատար ընտանիքի ինստիտուտը: Նշվել է նաև, որ առաջնահերթ է համարվում հատուկ կարիքներ ունեցող երեխաների կրթության և դաստիարակության, սոցիալ-հոգեբանական վերականգնողական գործընթացը կանոնակարգող իրավական դաշտի կատարելագործումը:

Թեև բոլոր վերոգրյալ խնդիրների լուծման նպատակով վերջին տարիներին կատարվել են օրենսդրական փոփոխություններ և լրացումներ կամ ընդունվել են նոր իրավական ակտեր, այնուամենայնիվ, նշված խնդիրների մեծ մասն արդիական է նաև այսօր՝ ծրագրի ընդունումից 11 տարի անց, առավելապես դրանց կիրարկման համար անհրաժեշտ արդյունավետ մեխանիզմների և ռեսուրսների բացակայության հետևանքով¹⁸:

Ինչ վերաբերում է երեխայի իրավունքներին առնչվող օրենսդրության կիրարկումն ապահովող մարմինների անկատարությանը և այդ ուղղությամբ ձեռնարկված օրենսդրական բարեփոխումներին, ապա կարելի է փաստել, որ ՀՀ Կառավարության 18.12.2003թ.-ի թիվ 1745-Ն որոշմամբ մատնանշված այս խնդիրն, ըստ էության, առայսօր չի ստացել իր լիարժեք լուծումը, չնայած այս ուղղությամբ ձեռնարկվել են մի շարք օրենսդրական բարեփոխումներ: Այս հանգամանքն ընդունվել է նաև ՀՀ Կառավարության կողմից: 2012 թվականին ՀՀ Կառավարության թիվ 1694-Ն որոշմամբ հաստատված ՀՀ-ում երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագրով, ըստ էության, արձանագրվել են երեխայի իրավունքների պաշտպանության համակարգում առանցքային դերակատարում ունեցող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեության անարդյունավետությունը, Երեխայի իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի

¹⁸ Այսպես, թեև ՀՀ ընտանեկան օրենսգրքով ներդրվեց խնամատար ընտանիքի ինստիտուտը, սակայն լրացուցիչ քյուլտային հատկացումներ չնախատեսելու հետևանքով խնամատար ընտանիքների թիվն այս ինստիտուտի ներդրումից ի վեր փոփոխության չի ենթարկվել: Ըստ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2013թ.-ի տարեկան զեկույցի՝ ՀՀ-ում խնամատար ընտանիքի ինստիտուտի զարգացմանը նպաստող գործոնները բացակայում են: Մուրացիկ և թափառաշրջիկ երեխաների խնդիրների լուծման նպատակով ստեղծվել են որոշակի ինստիտուցիոնալ մեխանիզմներ, ցերեկային կենտրոններ, սակայն առկա չեն երկարաժամկետ ծրագրեր, որոնք անհրաժեշտության դեպքում ամենօրյա աշխատանք կտանեն նման երեխաների և նրանց ընտանիքների հետ, չկա արդյունավետ համագործակցություն պետական իրավասու բոլոր այն մարմինների միջև, որոնք պատասխանատվություն են կրում երեխաների իրավունքների պաշտպանության համար: Արդյունավետ միջոցներ չեն ձեռնարկվում մարզերում առկա մուրացիկ երեխաների հայտնաբերման և աջակցության նպատակով: Հայաստանի վերաբերյալ 2013թ. հաստատված եզրափակիչ հետևություններով ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն հատուկ անհանգստություն է արտահայտել փողոցներում մուրացիկ երեխաների թվի աճի վերաբերյալ: Առաջադիմական են 2014թ. դեկտեմբերին Ազգային ժողովի կողմից «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում ընդունված փոփոխությունները, որոնց համաձայն, մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը ՀՀ-ում ներդրվում է համընդհանուր ներառական կրթության համակարգ: Այնուամենայնիվ, ներկայումս մի շարք գործող ներառական դպրոցներ փաստացի հարմարեցված չեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների պահանջներին: «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով չի նախատեսվել առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին սոցիալական կենսաթոշակի իրավունք տալու վերաբերյալ դրույթ, ինչպես, որ սահմանված է եղել Երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015 թվականների ազգային ծրագրով: Համապատասխան դրույթի նախատեսման անհնարինությունը ՀՀ օրենսդրությամբ պայմանավորվել է վեջինիս՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքի և «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի հետ հակասություններ ունենալու հանգամանքով: «Եռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով սահմանափակվում է էրոտիկ բնույթի հեռուստառադիոհաղորդումների և սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերի, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների հեռարձակումը, սակայն գործնականում այս սահմանափակումը հաճախ հնարավոր չէ կիրառել՝ նման հաղորդումների որոշման չափորոշիչների սահմանված չլինելու հետևանքով:



2008թ.-ի ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից իրականացվել է հետազոտություն²², որի նպատակներից է եղել Կոնվենցիայի պահանջներին ներպետական օրենսդրության համապատասխանության գնահատումը: Հետազոտությամբ ամրագրվել է, որ ՀՀ օրենսդրությունը երեխաների և ընտանիքի պաշտպանության մասով բավականաչափ առաջադեմ է, այնուամենայնիվ օրենքների մեծ մասը մնում է թղթի վրա, իսկ երեխայի իրավունքների խախտումները շարունակում են կրել պարբերական բնույթ:

2012թ.-ի ՄԱԿ-ի երեխայի իրավունքների կոմիտեին 45 հասարակական կազմակերպությունների կողմից պատրաստված այլընտրանքային զեկույցով ներկայացվել են «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիային ՀՀ օրենսդրության անհամապատասխանության խնդիրներ, այդ թվում՝ կապված ընտանիքում երեխայի իրավունքների պաշտպանության բավարար երաշխիքների բացակայության հետ: Մասնավորապես ընդգծվել է, որ Ընտանեկան օրենսգրքով սահմանված դրույթն առ այն, որ պետք է բացառվի երեխաների նկատմամբ քամահրական, դաժան, կոպիտ, մարդկային արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքը, վերացական է և տարբեր մեկնաբանությունների տեղիք է տալիս: ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված հանցակազմերը չեն ապահովում ֆիզիկական ուժի գործադրման նվազագույն աստիճանի պարագայում արարքը որպես քրեական հանցագործություն որակելու հնարավորություն: Այլընտրանքային զեկույցով արձանագրվել է նաև, որ ոչ օրենսդրության և ոչ էլ իրավակիրառ մակարդակում ՀՀ-ում գործող արդարադատության համակարգը հաշվի չի առնում անչափահասների գործերով քննության առանձնահատկությունները²³:

Օրենսդրական խնդիրների շարքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2013թ. տարեկան զեկույցով նշվել է նաև, որ օրենսդրական բացերի, ինչպես նաև ձևավորված իրավակիրառ պրակտիկայի հետևանքով երեխաների իրավունքների պաշտպանության լուրջ հիմնախնդիրներ են առաջանում ծնողների միջև առկա վեճերի դեպքում: Արձանագրվել են մի շարք դեպքեր, երբ դատարանի վճռով երեխայի խնամքը հանձնվում է ծնողներից մեկին, սակայն Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության աշխատակիցների կողմից չեն ապահովվում դատական ակտերի կատարումը: Հստակ իրավական կարգավորում չունեն նաև այն դեպքերը, երբ չկա դատարանի համապատասխան վճիռ երեխայի խնամքը ծնողներից որևէ մեկին հանձնելու վերաբերյալ, սակայն նրանցից մեկը թույլ չի տալիս երեխային շփվել մյուս ծնողի հետ²⁴:

ՀՀ օրենսդրությամբ, ըստ էության, նախատեսված չեն վերահսկողության մեխանիզմներ՝ խնամատար ընտանիք հանձնված երեխաների, որդեգրված երեխաների, ինչպես նաև այն երեխաների հետագա խնամքի իրականացման նկատմամբ, որոնք գտնվում են խնամակալության կամ հոգաբարձության ներքո²⁵: Այս ուղղությամբ ներկայում իրականացվում են աշխատանքներ ՀՀ արդարադատության նախարարության կողմից նոր ընտանեկան օրենսգրքի մշակման գործընթացում, մշակվում են նաև կառավարության որոշումների նախագծեր, որոնք ուղղված են այս վերահսկողության մեխանիզմների սահմանմանը²⁶:

²² Տարբեր իրավական համակարգերում Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային վերաբերող օրենսդրական բարեփոխում: Ազգային դեպքերի ուսումնասիրություն. Հայաստան, Բարբադոս և Գանա, 2008:

²³ «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի կատարման 3-րդ և 4-րդ մշտական միասնական զեկույցներ. Հայաստանի հանրապետության այլընտրանքային զեկույց, <http://www.wvarmenia.am/en/publication>

²⁴ Տարեկան զեկույց՝ 2013 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին, <http://www.pashtpan.am/>, հարցազրույցի արդյունքներ. ՀՀ փաստաբանների պալատի անդամի հետ:

²⁵ Հարցազրույցի արդյունքներ. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության երեխաների հիմնահարցերի բաժնի ներկայացուցչի հետ:

²⁶ Հարցազրույցի արդյունքներ. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության երեխաների հիմնահարցերի բաժնի ներկայացուցչի հետ:

Ընդունվող օրենքների, ռազմավարությունների և ծրագրերի՝ երեխայի իրավունքների վրա ազդեցության գնահատում

Երեխայի իրավունքների վրա՝ նոր ընդունվող իրավական ակտերի նախագծերի ազդեցության գնահատման պահանջ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ, թեև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված է իրավական ակտերի կարգավորման ազդեցության գնահատման պահանջ մի շարք բնագավառներում: Այսպես, ազդեցության գնահատման պարտադիր պահանջ է նախատեսված ֆիզիկական և իրավաբանական անձանց համար առաջացող վարչարարության հետ կապված ծախսերի, բնապահպանական, սոցիալական, առողջապահական, տնտեսական, ներառյալ՝ փոքր և միջին ձեռնարկատիրության, մրցակցության, հակակոռուպցիոն, բյուջետային բնագավառներում²⁷: Չնայած վերոգրյալ բնագավառներից մի մասի, օրինակ՝ սոցիալական, առողջապահական բնագավառների վրա ազդեցության շրջանակներում, երեխայի իրավունքների վրա ազդեցության հետևանքները ևս պետք է ենթակա լինեն գնահատման, այնուամենայնիվ առանձնացված եղանակով միայն երեխայի իրավունքների վրա ազդեցության գնահատման պահանջ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ:

Հայաստանի Հանրապետության Կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին ՀՀ Նախագահի 18.07.2007թ.-ի թիվ ՆՀ-174-Ն հրամանագրով նախատեսված է, որ Հայաստանի Հանրապետության օրենքների և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նորմատիվ բնույթի որոշումների, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, Կառավարության և վարչապետի որոշումների նախագծերը պետք է համաձայնեցվեն մյուս շահագրգիռ մարմինների հետ: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ բոլոր իրավական ակտերը, որոնք վերաբերում են երեխայի/ընտանիքի պաշտպանության ոլորտին, ենթարկվում են նախարարության կողմից ազդեցության գնահատման²⁸: Մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող օրենքների նախագծերը նախքան կառավարություն ներկայացնելն ուղարկվում են Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին՝ կարծիքի²⁹: ՀՀ վարչապետի 28.12.2012թ.-ի թիվ 1295-Ն որոշման համաձայն՝ երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովը քննարկում է երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության ոլորտի հարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտերի նախագծերը և դրանց մասին տալիս եզրակացություն:

Այնուամենայնիվ, երեխայի իրավունքների բնագավառում ՀՀ օրենսդրության մեջ առկա բացերը և օրենսդրության կիրառման արդյունավետ մեխանիզմների բացակայությունը վկայում է այն մասին, որ երեխայի իրավունքների ազդեցության գնահատումը պատշաճ չի իրականացվում կամ համապատասխան շահագրգիռ մարմինների առաջարկությունները պատշաճ ձևով հաշվի չեն առնվում որոշում կայացնող մարմինների կողմից:

Երեխայի իրավունքների պաշտպանության համապարփակ ազգային ռազմավարություն

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ երեխայի իրավունքների պաշտպանության աշխատանքներն իրականացվում են երեխայի իրավունքների պաշտպանության տարեկան ծրագրերով սահմանված ժամկետներում և կարգով: Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության առաջին ռազմավարական ծրագիրն ընդունվել է 18.12.2003թ.-ին: ՀՀ Կառավարության թիվ 1745-Ն որոշմամբ

²⁷ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 27.1:

²⁸ Հարցազրույցի արդյունքներ. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության երեխաների հիմնահարցերի բաժնի ներկայացուցչի հետ:

²⁹ ՀՀ Նախագահի 18.07.2007թ.-ի թիվ ՆՀ-174-Ն հրամանագիր, կետ 42:



հաստատվել է «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015 թթ. ազգային ծրագիրը» և երեխայի իրավունքների պաշտպանության միջոցառումների ժամանակացույցը: Ծրագրի մշակման նպատակով 2001թ.-ին ստեղծվել է միջգերատեսչական հանրապետական հանձնաժողով և աշխատանքային խումբ, որի կազմում ընդգրկվել են նաև որոշ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ («Իմ իրավունքը», «Օրրան», «Հույսի կամուրջ», «Երեխաների առողջության պահպանման ասոցիացիա», «Առաջինը երեխաներին»)³⁰:

2004-2015թթ. ռազմավարական ծրագրի միջոցառումների ցանկի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ցանկով սահմանված 76 միջոցառումներից 70-ը պահանջել են ֆինանսավորում: Ֆինանսավորում պահանջող 76 միջոցառումներից կամ ծրագրերից միայն 28-ն է նախատեսել ֆինանսավորում բացառապես պետական բյուջեից: Մյուս միջոցառումների

³⁰ Որպես երեխայի իրավունքների պաշտպանության ազգային ծրագրի ուղղություններ են սահմանվել օրենսդրության կատարելագործումը, առողջապահությունը, սոցիալական ապահովությունը, կրթությունը, հանգիստը, ժամանցը և մշակութային կյանքը, իրավախախտումները և արդարադատությունը, վերահսկման մեթոդները և հետազոտությունները, հասարակական կազմակերպությունների կողմից արված առաջարկությունները: Ծրագրով սահմանվել է երեխայի իրավունքները կարգավորող Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի համեմատական վերլուծության կատարման վերաբերյալ դրույթ՝ հստակ իրավական ակտերի մատնանշմամբ, իսկ երեխայի իրավունքների ոլորտում ՀՀ օրենսդրությունը կատարելագործելու միջոցառումը, ըստ ժամանակացույցի, նախատեսվել է 2004-2015թթ.-ի համար:

դեպքում որպես ֆինանսավորման աղբյուր նախատեսված են եղել կամ միջազգային կազմակերպություններն ու տեղական կազմակերպությունները, կամ պետական բյուջեի միջոցները սահմանվել են որպես համատեղ ֆինանսավորման աղբյուր: 2004-2015 թթ. ռազմավարական ծրագրի ընդունմամբ պետական կառավարման համակարգում հիմնվեց երեխայի իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգը, կատարվեցին երեխաների սոցիալական, առողջապահական, կրթական, մշակութային իրավունքների երաշխավորմանն ուղղված օրենսդրական բարեփոխումներ, իրականացվեցին երեխաների տարբեր հիմնախնդիրներին վերաբերող մի շարք ծրագրեր³¹: Նախատեսվել է նաև լրացուցիչ մոնիտորինգ անցկացնելու և երեխայի իրավունքներն արդյունավետ պաշտպանելու նպատակով հիմնել երեխայի իրավունքների պաշտպանության կառույց: Այնուամենայնիվ, նախատեսված ծրագրերը և միջոցառումները մի շարք դեպքերում պատշաճ չեն իրականացվել, իսկ ներդրված երեխայի իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգը մի շարք ասպեկտներով գործել է ոչ արդյունավետ:

2003թ.-ին ընդունվել է նաև աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը, որով որդեգրվեց սոցիալական աջակցության հարցում երեխաների առաջնահերթության սկզբունքը: «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015 թթ. ազգային ծրագրով» նախատեսված նպատակներից են եղել երեխաների վիճակի բարելավումը և երեխաների կենսապահովման համար իրական նախադրյալների ստեղծումը: Այս նպատակների իրականացման գնահատումը կարող է իրականացվել նաև մանկական աղքատության ցուցանիշների հիման վրա:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված՝ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2014» վիճակագրական վերլուծական զեկույցով, ըստ 2013թ.-ի տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների, արձանագրվել են հետևյալ ցուցանիշները.

Աղյուսակ 2: Մանկական աղքատության ցուցանիշների դինամիկան 2008-2013թթ.-ին (տոկոսներով)

	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ոչ աղքատ
2008թ.	1.6	29.8	70.2
2009թ.	3.8	35.7	64.3
2010թ.	3.7	41.4	58.6
2011թ.	4.7	41.9	58.1
2012թ.	3.3	36.2	63.8
2013թ.	3.3	37.3	62.7

Վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ 2012 և 2013թթ.-ին ծայրահեղ աղքատ երեխաների թվային հարաբերակցությունը մնացել է անփոփոխ (3.3), իսկ աղքատ երեխաների տոկոսային հարաբերակցությունը 2013թ.-ին աճել է 2012թ.-ի համեմատությամբ 1.1 տոկոսով: Հետևաբար, այս ցուցանիշների համատեքստում մանկական աղքատության հաղթահարման կամ նվազեցմանն ուղղությամբ իրականացված ծրագրերի արդյունավետությունը չի կարող բարձր գնահատվել:

«Գործընկերություն հանուն բաց հասարակության» նախաձեռնության կողմից 2012թ.-ին ՄԱԿ-ի երեխայի իրավունքների կոմիտե ներկայացված զեկույցով արձանագրվել է, որ գործնականում 2004-2015 թթ.-ի ազգային ծրագրի իրականացման համար որևէ լուրջ ներդրում

³¹ ՀՀ Կառավարության 13 նոյեմբերի 2014 թվականի թիվ 1273 – Ն որոշում:

չի կատարվել³², այդ ծրագրի իրականացումն առավելապես հիմնված է եղել տարբեր միջազգային կազմակերպությունների առաջնությունների և այդ նպատակների համար նրանց կողմից կատարված ներդրումների վրա: ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից արված դիտարկումների համաձայն՝ 2004-2015 թթ. ազգային ծրագրով նախատեսված միջոցառումներից իրականացվել է միայն 30 տոկոսը³³:

ՀՀ Կառավարությունը թիվ 1694-Ն որոշմամբ 2012 թ.-ին հաստատել է «Հայաստանի Հանրապետությունում երեխաների իրավունքների պաշտպանության 2013-2016 թթ. ռազմավարական ծրագիրը» և դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցը³⁴: Ռազմավարական ծրագրով հաստատված ցանկով սահմանված 84 միջոցառումներից 22-ը ֆինանսավորում չի պահանջում, մնացած 62 միջոցառումներից կամ ծրագրերից մինչև 25-ի համար է սահմանված ֆինանսավորում, բացառապես ՀՀ պետական բյուջեի միջոցներից: ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից արված դիտարկումների համաձայն՝ ռազմավարական ծրագրով (2013-2016թթ.) և մյուս բոլոր ծրագրերով նախատեսված՝ ֆինանսական միջոցներ պահանջող միջոցառումներից շատերը Կառավարության կողմից պլանավորվում են այլ աղբյուրների հաշվին: Սա ինքնին վկայում է այն մասին, որ ծրագրերի մեծ մասը գտնվում է ռիսկային խմբում³⁵:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2013թ.-ի գործունեության հաշվետվության համաձայն՝ 2013թ.-ին երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի բարեփոխումներն ուղղված են եղել «Հայաստանի Հանրապետությունում երեխաների իրավունքների պաշտպանության 2013-2016 թթ. ռազմավարական ծրագրով» նախատեսված միջոցառումների իրականացմանը: Նախարարության համակարգի 6 մանկատներում իրականացվել է առանց ծնողական խնամքի մնացած շուրջ 731 երեխայի խնամք, որից 506-ը՝ մասնագիտացված մանկատներում, ինչպես նաև սոցիալապես անապահով ընտանիքների 750 երեխաների խնամք՝ երեխաների խնամքի ու պաշտպանության գիշերօթիկ 7 հաստատությունում, իսկ երեխաների ցերեկային հոգաժողության 3 կենտրոններում ռիսկային խմբի շուրջ 300 երեխայի և նրանց ընտանիքներին տրամադրվել են ծառայություններ: Նախարարության և «Առավոտ» հասարակական կազմակերպության միջև կնքված պայմանագրի համաձայն՝ 2013թ.-ին հաստատություններից 25 երեխա վերադարձել է կենսաբանական ընտանիք, 25 երեխայի մուտք հաստատություն կանխարգելվել է: «Պետական աջակցություն ՀՀ-ում մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագրով նախատեսված միջոցառումների շրջանակներում նախարարության և «Հայ օգնության միություն» հասարակական կազմակերպության հետ համատեղ 2013թ.-ին աջակցություն է ցուցաբերվել 17 շահառուի: Իրականացվել է «Խնամատար ընտանիքի ինստիտուտի ներդրում» ծրագիրը, ըստ որի մանկատան 16 երեխա խնամվում է 15 ընտանիքում³⁶:

ՄԱԿ-ի երեխայի իրավունքների կոմիտեն, անդրադառնալով 2013-2016 թթ. ռազմավարական ծրագրին և այլ ծրագրերին ու ռազմավարություններին, արձանագրել է, որ ռազմավարական ծրագիրը և այլ ռազմավարությունները ֆինանսական ռեսուրսների սղության խնդիր ունեն և մեծ մասամբ կախված են միջազգային կազմակերպությունների ֆինանսավորումից: Կոմիտեն ափսոսանք է հայտնել առ այն, որ նման ծրագրերի և ռազմավարությունների առաջընթացի պարբերական գնահատում չի իրականացվում: Կոմի-

³² Նեկայացված է ՄԱԿ-ի երեխայի իրավունքների կոմիտեն (նախքան 62-րդ և 63-րդ նախա-սեսիոն աշխատանքային խմբերում Հայաստանի 3-րդ և 4-րդ պարբերական զեկույցների քննարկումը, հոկտեմբերի 8-12, 2012), «Գործընկերություն հանուն բաց հասարակության» նախաձեռնություն:

³³ Հարցազրույցի արդյունքներ. ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ներկայացուցչի հետ:

³⁴ Երեխայի իրավունքների պաշտպանության բնագավառում ընդունվել են նաև մի շարք այլ ծրագրեր և ռազմավարություններ, այդ թվում՝ «Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների սոցիալական պաշտպանության բարեփոխումների 2006-2010 թվականների ռազմավարությունը», «Երեխաների խնամքի հարցերով զբաղվող հաստատությունների բարեփոխման պետական ռազմավարական ծրագիրը» և այլն:

³⁵ Նույն տեղում:

³⁶ Առավել մանրամասն տե՛ս ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2013թ. գործունեության հաշվետվություն, <http://www.mlsa.am/home/company.php?sec=report>

տեն հորդորել է Հայաստանի Հանրապետությանը տրամադրել բոլոր անհրաժեշտ մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսները Երեխայի իրավունքների պաշտպանության ազգային ծրագրի և այլ ռազմավարությունների և ծրագրերի արդյունավետ իրականացման համար:

Համակարգման, վերահսկման և գնահատման մշտական մեխանիզմների առկայություն

ՀՀ Կառավարության 27.12.2012թ.-ի թիվ 1694-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016թթ. ռազմավարական ծրագրում» կատարված իրավիճակային վերլուծությամբ արձանագրվել է, որ 2005թ.-ին ՀՀ-ում ներդրված՝ երեխայի իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգն ունի ինստիտուցիոնալ-կառուցվածքային որոշ թերություններ, որոնք էականորեն ազդում են այդ բնագավառում վարվող քաղաքականության արդյունավետության վրա:

- Երեխայի իրավունքների պաշտպանության համակարգի բարձրագույն օղակի՝ միջգերատեսչական սկզբունքով կազմված Երեխայի իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի գործունեությունը կրում է խորհրդակցական և երաշխավորական բնույթ, աշխատանքները կազմակերպվում են քննարկումների կարգով՝ առանց քննարկման ենթակա հարցերի խոր և բազմակողմանի մասնագիտական ուսումնասիրությունների:
- Երեխայի իրավունքների պաշտպանության համակարգի միջին օղակը՝ 2006թ.-ից ՀՀ մարզպետարաններում գործող ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինները ևս մի շարք առումներով չեն կարողանում ապահովել արդյունավետ գործունեություն, քանի որ ունեն փոքրաթիվ աշխատողներ, տեղակայված են միայն մարզպետարաններում (Երևանում՝ քաղաքապետարանում), ունեն գործառույթային կրկնություններ, գրեթե չեն իրականացնում երեխաներին տրամադրվող ծառայությունների տարածքային պլանավորման ու այդ ծառայությունների տրամադրման գործընթացների համակարգման իրավասությունները, ինչպես նաև աջակցողական ուղղորդման և վերահսկողական, այդ թվում՝ մոնիթորինգի ու գնահատման գործառույթները:
- Խնամակալության և հոգաբարձության մարմինները, այդ թվում՝ դրանց առընթեր ձևավորվող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովները կազմված են հասարակական հիմունքներով աշխատող 5-8 անձանցից, որոշումների մեծ մասը կայացվում է առանց կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի կամ նրա ընտանիքի հիմնախնդիրների խորքային ուսումնասիրության և հետագա հետևողական աշխատանքի³⁷:

2012թ.-ին ՄԱԿ-ի երեխայի իրավունքների կոմիտեին 45 հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված այլընտրանքային զեկույցով ևս բարձրացվել են երեխայի իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգի խնդիրները: Նշվել է, որ ազգային հանձնաժողովն իր նիստերը իրավիճակում է անկանոն հաճախականությամբ, հանձնաժողովի կողմից իրականացվող վերահսկողությունն անբավարար է, աշխատանքային ծրագիրը և հստակ օրակարգը բացակայում են: Այլընտրանքային զեկույցով բարձրացվել է նաև մարզպետարաններում գործող ընտանիքի, կանանց և երեխաների իրա-

³⁷ Ունենալով առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին ինքնուրույն հայտնաբերելու, նրանց մասին հոգ տանելու, նրանց հաշվառումը վարելու, խնամքի կազմակերպման և իրականացման հարցերով հատուկ դպրոցների ու երեխաների խնամքի ու պաշտպանության այլ հաստատությունների հետ համագործակցելու կանոնադրական խնդիր՝ վերջիններս չունեն համապատասխան ռեսուրսներ՝ դրանց պատշաճ իրականացումն ապահովելու համար, գրեթե չեն իրականացվում խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներին վերապահված երեխաների խնամքի կազմակերպման, ինչպես նաև տեսակցությունների սահմանման վերաբերյալ իրարից անջատ ապրող ծնողների միջև առաջացած վեճերը, գույքային խնդիրները, խնամակալի թեկնածությունը և այլ հարցեր դատական կարգով լուծելու գործառույթները, խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովները գործնականում չեն վերահսկում խնամակալության տրված երեխաների իրավունքների պաշտպանության հետագա կազմակերպումը խնամակալի կողմից, խնամակալ նշանակելիս հիմնականում խնամակալ ընտանիքի կարողությունների խոր գնահատում չեն իրականացնում, ինչի պատճառով երեխաները հաճախ հայտնվում են գիշերօթիկ հաստատություններում:



վունքների պաշտպանության բաժինների գործունեության հետ կապված խնդիրները: Մասնավորապես, նշվել է, որ բաժինները հանդիսանում են մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում և գտնվում են աշխատակազմի ենթակայության տակ, մինչդեռ, որպես երեխայի իրավունքների պաշտպանության միջին օղակ, պետք է վերանայվի նրանց կարգավիճակը: Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներն այլընտրանքային զեկույցով մատնանշվել են որպես եռաստիճան համակարգի ամենաթույլ օղակ, որոնց գործունեությունը կրում է ձևական բնույթ: Ձեկույցում մանրամասն նախանշվել են հանձնաժողովների թերությունները և ներկայացվել են հստակ առաջարկություններ:

«Գործընկերություն հանուն բաց հասարակության» նախաձեռնության կողմից ՄԱԿ-ի երեխայի իրավունքների կոմիտեին 2012թ.-ին ներկայացված զեկույցով արձանագրվել է, որ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների կողմից կայացվող որոշումների մեծ մասը կայացվում է, լավագույն դեպքում, երեխային կամ ծնողին մեկ անգամ տեսնելուց հետո՝ առանց որևէ խորքային ուսումնասիրության և հետագա հսկողական աշխատանքի կատարման:

Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպության ներկայացուցչի դիտարկումների համաձայն՝ հաշվի առնելով խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեության թերություններն ու խնդիրները, առավել նախընտրելի է աշխատանքը սոցիալական ինտեգրված ծառայությունների հետ: Այս համատեքստում կազմակերպության համար առաջնահերթ

է համայնքներում սոցիալական աշխատողի, այն է՝ դեպք վարողների ինստիտուտի ներդրումն ու դերի բարձրացումը³⁸:

ՄԱԿ-ի երեխայի իրավունքների կոմիտեն իր կողմից 2013թ.-ին հաստատված եզրափակիչ հետևություններով, ողջունելով 2005թ.-ին համակարգող մարմնի ստեղծումը, միաժամանակ ամրագրել է, որ ազգային հանձնաժողովը բավարար չափով արդյունավետ չի իրականացնում համակարգման գործառույթը: Կոմիտեն մտահոգություն է հայտնել նաև նախարարությունների և մարզային ու տեղական մակարդակներում համապատասխան մարմինների գործունեության անբավարար համակարգման խնդրի շուրջ: Առաջարկվել է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ ազգային հանձնաժողովին բավարար լիազորություններով և մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսներով ապահովելու ուղղությամբ:

Նշենք, որ ՀՀ վարչապետի 2012թ.-ի դեկտեմբերի 28-ի N 1295-Ն որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել 2005թ.-ի թիվ 835-Ն որոշումը երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի կանոնադրությունը և անհատական կազմը հաստատելու մասին, և հաստատվել է երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողովի նոր կազմ, որտեղ ընդգրկվել են նաև մի շարք հասարակական կազմակերպություններ: Ազգային հանձնաժողովի նոր կազմը առավել առաջադիմական է նախկին կազմի համեմատությամբ, որում ներառված չէին հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Կանոնադրությամբ սահմանված՝ երեխաների պաշտպանության պետական ռազմավարական ծրագրերի իրականացման մշտադիտարկման գործառույթի առկայությունը և այդ նպատակով աշխատանքային խմբի ստեղծումը ևս դրական առաջընթաց է նախորդ կարգավորման համեմատությամբ, սակայն մնացյալ կարգավորման մասով, ըստ էության, փոփոխություններ չեն նախատեսվել և այդ առումով ՄԱԿ-ի երեխայի իրավունքների կոմիտեի մտահոգությունները դեռևս մնում են արդիական:

Բյուջետային հատկացումներ

ՄԱԿ-ի երեխայի իրավունքների կոմիտեն 2013թ.-ի հուլիսին հաստատված եզրափակիչ հետևություններով մտահոգություն է հայտնել առողջապահության և կրթության բնագավառներում բյուջետային հատկացումների էական նվազեցման (2007թ.-ի 2.1 տոկոսից մինչև 1.5 տոկոսի՝ 2012թ.-ին և 2010թ.-ի 3.2 տոկոսից մինչև 2.5 տոկոսի՝ 2012թ.-ին), ինչպես նաև բյուջետային գործընթացում երեխայի իրավունքների վրա հիմնված մոտեցմանն առնչվող տեղեկատվության բացակայության վերաբերյալ: Կոմիտեն առաջարկել է Կառավարությանը էապես բարձրացնել կրթության և առողջապահության բնագավառներում բյուջետային հատկացումների ծավալը, նախատեսել այնպիսի բյուջետային գործընթաց, որը ներառում է երեխայի իրավունքների հեռանկարային գործողությունները և հատկացումներ է նախատեսում՝ սահմանելով համապատասխան ցուցիչներ, ինչպես նաև այս գործընթացի մշտադիտարկման և գնահատման մեխանիզմներ: Այնուամենայնիվ, այս առաջարկությունները չեն իրագործվել: Գործառնական դասակարգմամբ՝ պետական բյուջեի ծախսերի՝ ՀՆԱ-ի նկատմամբ տոկոսային հարաբերակցությունը 2013թ.-ին, ըստ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության վիճակագրական տվյալների, ունեցել է հետևյալ պատկերը. առողջապահություն՝ 1.5, կրթություն՝ 2.4³⁹:

«Գործընկերություն հանուն բաց հասարակության» նախաձեռնության կողմից 2012թ.-ին ՄԱԿ-ի երեխայի իրավունքների կոմիտե ներկայացված զեկույցով անդրադարձ է կատարվել բյուջետային հատկացումների խնդրին: Մասնավորապես, նշվել է, որ բյուջետային հատկացումների կամ քաղաքականության ազդեցության գնահատման պրակտիկա գրեթե առկա չէ:

³⁸ Հարցազրույցի արդյունքներ. Վորլդ Վիժն Հայաստան, Երեխաների պաշտպանության և կրթության ծրագրերի ներկայացուցչի հետ:

³⁹ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2014, <http://www.armstat.am/file/doc/99489253.pdf>

Երեխաների վիճակի վերաբերյալ տվյալների համակարգ

«Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագրում»⁴⁰ որպես երեխայի իրավունքների պաշտպանության համակարգի կարևորագույն հիմնախնդիր՝ նախանշվել է այդ համակարգի տեղեկատվական ապահովման ենթահամակարգի անկատարությունը: Մասնավորապես, արձանագրվել է, որ տեղեկատվական ապահովման ենթահամակարգը չի ընդգրկում երեխաների իրավունքներին ու սոցիալական պաշտպանությանը վերաբերող բոլոր հարցերի մասին անհրաժեշտ տեղեկությունների տիրույթը, առհասարակ նախատեսված չէ բնածին կամ ձեռքբերովի արատներ ունեցող, խոր մտավոր թերզարգացում, ինչպես նաև զուգակցված տարբեր ֆիզիկական արատներ ունեցող, նյարդաբանական և հոգեկան քրոնիկ խանգարումներ, զարգացման հապաղումներ, հոգեբանական խնդիրներ, բռնության ենթարկված, բժշկասոցիալական վերականգնման, խնամքի, դաստիարակության և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, ինչպես նաև թրաֆիքինգի ենթարկված, ընտանիքում կոնֆլիկտներ ունեցող, դժան վերաբերմունքի ենթարկված երեխաների վերաբերյալ որևէ տեղեկություն հավաքելը: Սահմանված չափանիշներին համապատասխանող որոշ խմբերի երեխաների վերաբերյալ չնայած նախատեսված է տվյալների հավաքում, և կա համապատասխան ցուցիչը, սակայն այդ չափանիշների վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու իրավասություններ ունեցող մարմինների կողմից ներկայացվում են միայն որոշակի ցուցանիշներ, և այդ չափանիշներին համապատասխանող երեխաները կամ անտեսվում են, կամ դասվում են այլ խոցելի խմբերի երեխաների շարքին: Երեխաների տարբեր խմբերի վերաբերյալ գոյություն ունեցող շտեմարաններից շատերն ունեն որոշակի թերություններ, քանի որ եղած տվյալների մի մասը շատ ընդհանրական է, ինչը թույլ չի տալիս դրանում տարբերակել սոցիալական նպատակային ծրագրերի համար անհրաժեշտ ենթացուցանիշները: Ծրագրով որպես հիմնախնդիր առանձնացվել են մասնավորապես՝ դպրոցահասակ երեխաների և դեռահասների աճի, զարգացման, առողջական վարքագծի, հիվանդացության վերաբերյալ տեղեկատվության, այդ թվում՝ տարիքային և սեռային կտրվածքով առանձնացված տվյալների կանոնավոր հավաքագրման համակարգի բացակայությունը, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ընդգրկվածության վերաբերյալ տվյալների ոչ ամբողջական լինելը, արդարադատության ոլորտում անչափահասների գործերով տվյալների հավաքագրման գործընթացում միասնական ցուցիչների բացակայությունը⁴¹:

ՄԱԿ-ի երեխայի իրավունքների կոմիտեն 2013թ. հուլիսին հաստատված եզրափակիչ հետևություններով կրկին անգամ առաջարկել է ՀՀ Կառավարությանը մշակել տվյալների վերլուծության համապարփակ համակարգ՝ երեխայի իրավունքների բնագավառում առաջընթացի գնահատման և Կոնվենցիայի իրագործման նպատակով ռազմավարությունների մշակման համար:

«Գործընկերություն հանուն բաց հասարակության» նախաձեռնության կողմից 2012թ.-ին ՄԱԿ-ի երեխայի իրավունքների կոմիտե ներկայացված զեկույցով անդրադարձ է կատարվել նաև կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների վերաբերյալ տվյալների հավաքման խնդրին՝ արձանագրելով, որ թեև այս բնագավառում առկա է էլեկտրոնային տեղեկատվական բազա, այս տվյալները հավաքվում են ինքնանպատակ, դրանք չեն ենթարկվում վերլուծությունների և չեն դրվում ռազմավարական ծրագրերի և գործողությունների մշակման հիմքում: Առկա չէ այս տեղեկատվության փոխանակման և համակարգման մեխանիզմ՝ շահագրգիռ պետական մարմինների միջև:

⁴⁰ Հայաստանի Հանրապետության կառավարության 27.12.2012թ.-ի թիվ 1694-Ն որոշում:

⁴¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Կառավարության 27.12.2012թ.-ի թիվ 1694-Ն որոշումը:

Մշտադիտարկման անկախ մարմիններ և մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ է մտել 01.01.2004թ.-ին, որով նախատեսվել են մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունները, անկախության երաշխիքները, գործունեության պայմաններն ու երաշխիքները: Այսպես, մարդու իրավունքների պաշտպանը (այսուհետ՝ Պաշտպան) անկախ և անփոփոխելի պաշտոնատար անձ է, որն իրականացնում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից մարդու՝ խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանություն՝ ղեկավարվելով օրինականության, հասարակական համակեցության և սոցիալական արդարության հիմնարար սկզբունքներով: Երեխաների իրավունքների հարցերով առանձին անկախ հաստատություն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ: Պաշտպանի գլխավոր խորհրդականը պատասխանատու է հատուկ երեխաների իրավունքների հարցերով համակարգման աշխատանքի համար, մասնավորապես՝ զբաղվում է երեխայի իրավունքների բնագավառում համակարգային խնդիրների վերհանմամբ, դրանց լուծման նպատակով քայլեր առաջարկելու, իրազեկման, պետական գերատեսչությունների, գործընկեր հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության աշխատանքներով:

Երեխաների կողմից մարդու իրավունքների պաշտպանին հաճախ չդիմելու հանգամանքը Պաշտպանի գլխավոր խորհրդականի կողմից բացատրվել է իրազեկման պակասով, ինչպես նաև առանձին դեպքերում Պաշտպանի լիազորությունների սահմանափակ լինելու հանգամանքով: Խորհրդականի կողմից բարձրացվել է նաև ռեսուրսների պակասի խնդիրը, մասնավորապես՝ նշելով, որ մեկ անձի ռեսուրսը բավարար չէ արագ արձագանք ապահովելու համար: Ըստ Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցի՝ 2013թ.-ին երեխաներից ստացվել է 50 բողոք, որոնք հիմնականում վերաբերել են սոցիալական ապահովության, կրթության, առողջության պահպանման իրավունքներին, եղել է նաև բողոք երեխայի ծնողի կողմից կրոնի ազատության իրավունքի իրացման հետ կապված՝ դպրոցում դասընկերների և ուսուցիչների կողմից ճնշումների կիրառման վերաբերյալ: Խորհրդականը նշել է նաև, որ առկա են բողոքներ, որոնք անուղղակիորեն են առնչվում երեխայի իրավունքներին և ներկայացված թվի շրջանակներում հաշվարկված չեն⁴²: ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի դիտարկումների համաձայն՝ օմբուդսմենի հաստատությունը կարևոր գործընկեր է հանդիսանում իրենց համար⁴³:

3.1.2. Երեխայի քաղաքացիական իրավունքներ ու ազատություններ. գրանցման, անվան ու քաղաքացիության և ինքնության պահպանման իրավունք

Ծնունդների գրանցում

Երեխայի ծննդի գրանցումն առանցքային նշանակություն ունի նրա իրավունքների իրականացման և պաշտպանության ապահովման համար: «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 7-րդ հոդվածի համաձայն՝ երեխան գրանցվում է ծնվելուց անմիջապես հետո և ծննդյան պահից ձեռք է բերում անվան և քաղաքացիության իրավունք: Ծնունդը չգրանցված երեխաները գործնականում զրկվում են առողջության պահպանման, սոցիալական ապահովության և կրթություն ստանալու տարրական հնարավորություններից, ինչպես նաև առավել խոցելի են դառնում բռնության և թրաֆիքինգի ենթարկվելու տեսանկյունից:

2009թ.-ի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ծննդյան գրանցում չունեցող երեխաների վերաբերյալ Հայ օգնության միության կողմից իրականացված սոցիոլոգիական հետազոտության արդյունքների համաձայն՝ Երևանում, Գեղարքունիքի և Շիրակի մարզերում 1330 տնային տնտեսություններում անցկացված հարցազրույցների միջոցով 97 ընտանիքներում

⁴² Հարցազրույցի արդյունքներ. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ներկայացուցչի հետ:

⁴³ Հարցազրույցի արդյունքներ. ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ներկայացուցչի հետ:

հայտնաբերվել է ծննդյան պետական գրանցում չստացած 126 երեխա, իսկ մանկական խնամակալական հաստատություններում արձանագրվել է նման խնդիր ունեցող 19 երեխա: 126 երեխաներից 35-ը ծնվել են տնային պայմաններում, այլ ոչ՝ հիվանդանոցում: Ըստ ծննդյան վայրի, 112-ը Հայաստանում է ծնվել, 33-ը՝ Հայաստանից դուրս: Ծննդյան չգրանցման պատճառների 39.9 տոկոսը կապված է եղել ծնողների փաստաթղթերի (գրանցում, անձնագիր չունենալը) հետ, 13.8 տոկոսը պայմանավորված է եղել ծնունդը գրանցելու հետ կապված փաստաթղթային քաշքշուկով, 12.5 տոկոսը՝ ընտանիքների սոցիալական ծանր վիճակով, 9.8 տոկոսը՝ ծնողի բացակայությամբ, իսկ 9.7 տոկոս կազմել են անտարբեր ծնողները: 3.5 տոկոսը երեխայի ծնունդը չգրանցելը բացատրել է գրանցման համար անօրինական գումարներ պահանջելով, 1.3 տոկոսը՝ ծնունդը գրանցելու վերաբերյալ անտեղյակությամբ, ի վերջո, 9.5 տոկոսը նշել է այլ պատճառներ:

2012թ.-ի ՄԱԿ-ի երեխայի իրավունքների կոմիտեին՝ 45 հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված այլընտրանքային զեկույցով արձանագրվել է, որ այսօր Հայաստանում գոյություն ունեն երեխաներ, ովքեր չունեն ծննդյան վկայականներ, ինչպես նաև բացակայում է ծննդյան վկայական չունեցող երեխաների վերաբերյալ միասնական վիճակագրական տվյալների համակարգը⁴⁴:

2010թ.-ին ՀՀ-ում չգրանցված ծնունդների դեպքերը կանխարգելելու և բացահայտելու նպատակով մշակվել են օրենսդրական փոփոխությունների և լրացումների փաթեթ: Այսպես, «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանվել է, որ երեխայի ծննդյան մասին հայտարարություն տալու անհնարինության դեպքում երեխայի ծննդի պետական գրանցման գրավոր հայտարարությունը տալիս է երեխայի գտնվելու վայրի համայնքի ղեկավարը կամ լիազորված անձը: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությամբ սահմանվել է, որ համայնքի ղեկավարը միջոցներ է ձեռնարկում իր համայնքում երեխաների ծնունդների չգրանցման դեպքերը բացահայտելու և այդ ծնունդների պետական գրանցումներն ապահովելու ուղղությամբ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով տալիս է երեխայի ծննդի պետական գրանցման գրավոր հայտարարություն: Համանման դրույթ սահմանվել է նաև «Երևան քա-



⁴⁴ «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի կատարման 3-րդ և 4-րդ մշտական միասնական զեկույցներ. Հայաստանի հանրապետության այլընտրանքային զեկույց, <http://www.wvarmenia.am/en/publication>

ղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում: Համայնքներում չգրանցված ծնունդների բացահայտման և գրանցման գործընթացը ապահովելու նպատակով խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության մեջ 2011թ.-ին կատարվել են փոփոխություններ և լրացումներ, որոնցով սահմանվել է, որ խնամակալության և հոգաբարձության մարմինները բացահայտում են համայնքում երեխայի ծննդյան փաստի՝ օրենքով սահմանված կարգով չգրանցման դեպքերը և դրա մասին իրազեկում մարզպետին, ինչպես նաև նախաձեռնում են գրանցման գործընթացը⁴⁵:

2012թ. ՀՀ ազգային վիճակագրական ծառայության և ՀՀ առողջապահության նախարարության կողմից ներկայացված 2010թ.-ի Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտության արդյունքների համաձայն՝ չգրանցված ծնունդների դեպքերը կրճատվել են 10 անգամ (2010թ.-ին՝ 0.4%, 2005թ.-ի 4%-ի համեմատությամբ): 2000թ.-ից ի վեր տնային ծնունդների ցուցանիշը զգալիորեն կրճատվել է (2000թ.-ին՝ 9%, 2005թ.-ին՝ 3%, 2010թ.-ին՝ 1%), մասնավորապես զգալի բարելավում է արձանագրվել մարզային մակարդակում (օրինակ՝ Գեղարքունիքի մարզում այն նվազել է 2005թ.-ի՝ 16 տոկոս ցուցանիշից մինչև 2 տոկոս՝ 2010թ.-ին)⁴⁶:

Քաղաքացիություն չունեցող երեխաներ

«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի համաձայն՝ երեխան ծննդյան պահից ձեռք է բերում անվան և քաղաքացիության իրավունք: Մասնակից պետություններն այդ իրավունքների իրականացումն ապահովում են իրենց ներպետական օրենսդրության և այս բնագավառում համապատասխան միջազգային փաստաթղթերով ստանձնած իրենց պարտավորությունների համաձայն, մասնավորապես՝ այն դեպքում, եթե այլ կերպ երեխան քաղաքացիություն չի ունենա: «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր երեխա ծննդյան պահից ունի անվան և քաղաքացիության իրավունք:

Միավորված ազգերի կազմակերպության փախստականների գծով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի կողմից 2013թ.-ին կատարված հետազոտությամբ գնահատվել է քաղաքացիությանն առնչվող ՀՀ օրենսդրությունը՝ «Ապաքաղաքացիության կրճատման մասին» 1961թ.-ի կոնվենցիայով ՀՀ-ի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների և ապաքաղաքացիության վերաբերյալ միջազգային և տարածաշրջանային հիմնական փաստաթղթերով սահմանված նորմերի և չափանիշների տեսանկյունից:

Հետազոտությամբ բացահայտված հիմնական թերությունները ելնում են հետևյալից. ՀՀ օրենսդրությամբ տրված՝ քաղաքացիություն չունեցող անձի սահմանումը չի համապատասխա-

⁴⁵ ՀՀ տարածքային կառավարման նախարարի 03.03.2014թ.-ի թիվ 11-Ն հրամանով սահմանվել է տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների նկատմամբ Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող վարչական հսկողության հարցաշարը, որի մեջ ներառվել է նաև համայնքում երեխաների ծնունդների չգրանցման բացառման, հայտնաբերման դեպքում՝ գրանցման ուղղությամբ իրականացված աշխատանքների նկատմամբ հսկողության վերաբերյալ դրույթներ: Համանման բովանդակությամբ հարցաշար սահմանվել է նաև 29.01.2014թ.-ի ՀՀ արդարադատության նախարարի և ՀՀ տարածքային կառավարման նախարարի համատեղ հրամանով: ՀՀ կառավարության 11.08.2011թ.-ի թիվ 1156-Ն որոշմամբ սահմանվել է, որ ծննդկանի մահվան և նրա ամուսնացած չլինելու դեպքում համապատասխան բժշկական հաստատությունն ինքնուրույնաբար կազմակերպում է ծննդի պետական գրանցումը: Բժշկական հաստատությունից դուրս ծննդաբերության դեպքում ծննդյան բժշկական վկայականը տրվում է այն բժշկական հաստատության կողմից, որի բուժաշխատողը ցուցաբերել է բուժօգնություն ծննդաբերության ժամանակ, բժշկական հաստատությունից դուրս՝ առանց բուժօգնություն ցուցաբերելու ծննդի և ծննդից անմիջապես հետո հոսպիտալացվելու դեպքում ծննդի մասին բժշկական վկայականը տրվում է այն բժշկական հաստատության կողմից, որտեղ տեղի է ունեցել հոսպիտալացումը: Իսկ բժշկական հաստատությունից դուրս և առանց բժշկական օգնություն ցուցաբերելու ծննդի դեպքում, երբ ծննդից անմիջապես հետո հոսպիտալացում չի իրականացվել, երեխային սպասարկող առողջության առաջնային պահպանման հաստատության կողմից ծննդի մասին վկայականի փոխարեն տրվում է երեխայի առողջության մասին տեղեկանք:

⁴⁶ Հայաստանի դեմոգրաֆիական և առողջապահական հետազոտություն (2010) ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, տես <http://www.armstat.am/file/doc/99469868.pdf>

նում «Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին» 1954թ.-ի կոնվենցիայով տրված սահմանմանը, առկա է ապաքաղաքացիության որոշման ազգային ընթացակարգ, քաղաքացիություն չունեցող անձանց որոշակի կատեգորիաներ դուրս են մնացել կացության և փաստաթղթերի տրամադրման գործող իրավական ռեժիմից: Նրանցից թվում են՝ ոչ օրինական կարգով Հայաստան մուտք գործած կամ Հայաստանում գտնվող անձինք, ինչպես նաև անձինք, ովքեր Հայաստան են ժամանել այլ պետության կողմից տրված՝ քաղաքացիություն չունեցող անձի ճամփորդական փաստաթղթով, ՀՀ օրենսդրությունում նախատեսված է դրույթ՝ ուղղված ՀՀ տարածքում գտնվող քաղաքացիություն չունեցող յուրաքանչյուր անձի ինքնության վկայական տրամադրելուն, Հայաստանում քաղաքացիություն չունեցող անձանց տրվող ճամփորդական փաստաթղթերը չեն համապատասխանում «Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին» 1954թ.-ի կոնվենցիայի հավելվածով սահմանված պահանջներին: Արձանագրվել է, որ առկա են թերություններ ՀՀ քաղաքացիության ձեռքբերման և դրա կորստի, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց վերաբերյալ դրույթներում⁴⁷:

Հետազոտության արդյունքների հիման վրա մշակվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ, որը հաստատվել է Կառավարության կողմից և ներկայացվել Ազգային ժողով: Օրենսդրական փոփոխություններով նախատեսվել է, մասնավորապես, անգործունակ անձանց՝ իրենց խնամակալների միջոցով քաղաքացիություն ստանալու համար դիմելու հնարավորություն, ծնողի համաձայնության բացակայության դեպքում երեխայի կողմից՝ քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակ ձեռք չբերելու նպատակով՝ ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու կարգ (Օրենքի 16-րդ հոդված), կարգավորվել է երեխայի քաղաքացիության հարցը այն երեխայի պարագայում, որի նկատմամբ հաստատված է խնամակալություն կամ հոգաբարձություն, սակայն ծնողների դիմումի համաձայն ՀՀ քաղաքացիությունից երեխայի դուրս գալու համար սահմանված է պայման (երեխան պետք է ունենա այլ պետության քաղաքացիություն կամ այն ստանալու վերաբերյալ գրավոր հավաստում), նախատեսվել են մի շարք այլ կարգավորումներ: 19.05.2014թ.-ի նախագիծն ընդգրկվել է չորսօրյա նիստերի օրակարգ, սակայն առայսօր չի ընդունվել: Օրենսդրական բացերի կարգավորման խնդրից բացի իրավակիրառ պրակտիկայում առկա են նաև այնպիսի խնդիրներ, որոնք ևս խոչընդոտում են ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու իրավունքի իրականացման հնարավորությունը⁴⁸:

ՀՀ 2011թ.-ի մարդահամարի տվյալների համաձայն՝ ՀՀ բնակչությունից 396 անձ իրենց համարել են քաղաքացիություն չունեցող, իսկ ծննդյան օրվանից մշտական բնակավայրում անընդհատ չբնակվող բնակչությունից՝ 363-ը⁴⁹:

Ինչ վերաբերում է Եվրոպայի խորհրդի շրջանակներում քաղաքացիության հետ կապված հարաբերությունները կարգավորող կոնվենցիաներին, ապա ՀՀ-ն չի միացել ԵԽ հիմնական կոնվենցիաներին այս բնագավառում: Այսպես, «Քաղաքացիության մասին» 1997թ.-ի եվրոպական կոնվենցիային (ուժի մեջ է մտել 2000թ.-ին) և «Պետությունների իրավահաջորդության առնչությամբ ապաքաղաքացիության կանխարգելման մասին» կոնվենցիային (ուժի մեջ է մտել 2009թ.-ին) միանալու ուղղությամբ ՀՀ Կառավարության կողմից առայսօր որևէ գործողություն չի ձեռնարկվել:

Երեխայի անունը

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 45-րդ հոդվածի համաձայն՝ երեխայի ազգանունը որոշվում է ծնողների ազգանունով: Եթե ծնողները կրում են տարբեր ազգանուններ, ապա երեխային ծնողների համաձայնությամբ տրվում է հոր կամ մոր ազգանունը (տվյալ դրույթն ամրագրված է նաև «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով): Ծնողների միջև

⁴⁷ «Քաղաքացիության և ապաքաղաքացիության հարցերը Հայաստանում» ՄԱԿ ՓԳՀ Հայաստան, մարտ, 2013:

⁴⁸ «Քաղաքացիության և ապաքաղաքացիության հարցերը Հայաստանում» ՄԱԿ ՓԳՀ Հայաստան, մարտ, 2013:

⁴⁹ 2011 ՀՀ մարդահամարի արդյունքներ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, տես <http://www.armstat.am/en/?nid=337>

երեխայի անվան, ազգանվան վերաբերյալ համաձայնության բացակայության հետևանքով առաջացած տարաձայնությունները լուծում է խնամակալության և հոգաբարձության մարմինը:

ՀՀ արդարադատության նախարարի 2007թ.-ի մայիսի 14-ի «Քաղաքացիական կացության ակտերի գրառումների հետ կապված հրահանգչական ցուցումները հաստատելու մասին» թիվ 97-Ն հրամանի (այսուհետ՝ Հրաման) 2-րդ հավելվածի 9-րդ կետի համաձայն՝ ծնողների համատեղ դիմումով հայրության որոշման գրանցման դեպքում երեխայի ազգանունը և անունը որոշվում է ծնողների համաձայնությամբ, իսկ համաձայնության բացակայության դեպքում՝ խնամակալության և հոգաբարձության մարմնի ցուցումով: Հոր դիմումով հայրության որոշման գրանցման դեպքում երեխայի ազգանունը որոշվում է հոր ցուցումով: Հրամանի 6-րդ կետով սահմանված է, որ հայրության որոշման կամ հայրության ճանաչման փաստի հաստատման մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի առկայության դեպքում հայրության որոշման ակտային գրանցման մեջ երեխայի հոր մասին տեղեկությունները կամ տվյալները լրացվում են դատարանի վճռի հիման վրա: Երեխայի ազգանունը գրանցվում է դիմողի (ծնողի) ցուցումով: Նշված հարցով ծնողների միջև վեճի առկայության դեպքում ազգանունը գրանցվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի ցուցումով:

Հետևաբար, ծնողների միջև երեխայի անվան, ազգանվան վերաբերյալ համաձայնության բացակայության հետևանքով առաջացած տարաձայնությունների լուծումը դրված է խնամակալության և հոգաբարձության մարմնի վրա: Այս պարագայում խնդրահարույց է այն, որ

- չկան հստակ չափորոշիչներ՝ նման ցուցում տալու համար (ինչ չափորոշիչներով պետք է առաջնորդվի խնամակալության և հոգաբարձության մարմինը համապատասխան որոշում կայացնելու ընթացքում),
- օրենսդրորեն կարգավորված չէ խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից տրվող ցուցումի պատճառաբանված և հիմնավորված լինելու հանգամանքը, ավելին՝ սահմանված չէ նշված ցուցումի՝ գրավոր լինելու անհրաժեշտությունը,
- սահմանված չէ խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից ցուցում տալու ընթացակարգը (արդյո՞ք անհրաժեշտ է լսել կողմերին, գնահատել նրանց փաստարկները և այլն), սահմանված չեն նաև ցուցում տալու համար հստակ ժամկետներ,
- նշված բացթողումների առկայության արդյունքում երեխայի անվան ընտրության հարցում ծնողների անհամաձայնության դեպքում՝ խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից ցուցում տալու գործընթացը կարող է ձգձգվել: Հստակ կարգավորումների բացակայության պայմաններում առկա է նաև կոռուպցիոն ռիսկերի վտանգ:

3.1.3. Երեխայի մասնակցություն

Դպրոցականների մասնակցությունը կրթություն ստանալու իրավունքի բավարարմանը խոչընդոտվում է մի քանի հիմնական պատճառներով, ներառյալ՝ (ա) թույլ կամ ցածր ընդունակություններ ունենալը, (բ) ընտանիքում նյութական խնդիրների առկայությունը, (գ) արհեստագործական կրթությունը գերադասելը, (դ) ամուսնությունը: Կան երեխաներ, ովքեր ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակից դրդված ստիպված են աշխատել՝ ընտանիքի նյութական խնդիրները հոգալու համար:

Դպրոցականները հիմնականում ավագ դպրոցն ընտրելու հարցում խորհրդակցում են ծնողների հետ՝ հաշվի առնելով դպրոցի հեղինակությունը և հոսքային ուղղվածությունները: Սա հատկապես տարածված է տեղացի երեխաների շրջանում: Ի տարբերություն դրան, Սիրիահայ երեխաները դպրոցի ընտրության հարցում կարևորում են երկու նախապայման՝ լեզուների թեքումը և հանդուրժողականության մթնոլորտի առկայությունը: Այս երեխաները հիմնականում դուրս են մնում դպրոցից կամ փոխում այն աշակերտների ու ուսուցիչների կողմից խտրական վերաբերմունքի դրսևորման պատճառով:

Սովորաբար ընտանիքում որոշումների կայացման գործում երեխայի մասնակցությունը սահմանափակվում է ժամանցի կազմակերպման, հագուստի ընտրության, մասնագիտության ընտրության և ուսումնական գործընթացի հետ կապված խնդիրներով: Ընտանեկան այլ խն-

դիրները չեն քննարկվում երեխաների հետ: Խնդրահարույց է այն, որ երեխաները ևս կարծում են, որ իրենք պետք է չխառնվեն «մեծերի գործերի մեջ»:

Երեխաների մասնակցությունը դպրոցի քաղաքականության մշակման գործընթացում սահմանափակվում է միայն աշակերտական խորհուրդների ձևավորմամբ, որն էլ հիմնականում չի գործում ըստ նշանակության, իսկ մանկավարժական խորհուրդն ընդհանրապես ոչ մի դեր չի ստանձնում՝ դպրոցի ինքնակառավարման գործընթացում երեխաների մասնակցությունն ապահովելու հարցում:

Միևնույն ժամանակ երեխաները հիմնականում տեղեկացված չեն միավորումներ, ասոցիացիաներ ստեղծելու, երեխաների իրավունքի, ինչպես նաև համայնքային որոշումների կայացման հարցում երեխաների մասնակցության հնարավորության մասին, ընդհակառակը նրանց առաջարկներին լուրջ չեն վերաբերվում կամ ստեղծում են արհեստական խոչընդոտներ դրանք չիրականացնելու համար:

Առաջարկություններ

- Ստորագրել և վավերացնել «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի՝ Հաղորդումների ընթացակարգի վերաբերյալ կամընտիր արձանագրությունը:
- Վավերացնել «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը, «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի կամընտիր արձանագրությունը, ՄԱԿ-ի «Բոլոր աշխատող միգրանտների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության վերաբերյալ» միջազգային կոնվենցիան, «Երեխաների որդեգրման մասին» Եվրոպական կոնվենցիան (վերանայված):
- Քննարկել ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային պայմանագրերի վերաբերյալ կատարված վերապահումների վերանայման հարցը:
- Իրականացնել երեխայի իրավունքների բնագավառում ՀՀ-ի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների և դրանց գործնական կիրառման միջոցների խորքային ուսումնասիրություն՝ հիմնվելով համապատասխան պայմանագրային մարմինների ընդհանուր մեկնաբանությունների, անհատական հաղորդումներով կայացված որոշումների, զեկույցների, եզրափակիչ հետևությունների, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային վճիռների հիման վրա:
- Իրականացնել երեխայի իրավունքների բնագավառում ՀՀ օրենսդրության համապարփակ ուսումնասիրություն՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերի պահանջները, միջազգային կազմակերպությունների, միջազգային պայմանագրային մարմինների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների կողմից արդեն իսկ իրականացված վերլուծությունները, զեկույցները և առաջարկները:
- Մշակել և ընդունել օրենսդրական փոփոխությունների և լրացումների փաթեթներ իրականացված ուսումնասիրության արդյունքների հիման վրա:
- «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանել իրավական ակտի կարգավորման ազդեցության գնահատման պահանջ՝ երեխայի իրավունքների բնագավառում:
- Սահմանել և կիրառել չգրանցված ծնունդների բացահայտման և հանրային իրազեկության բարձրացման գործուն մեխանիզմները:
- Ապահովել իրավասու պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համակարգված համագործակցություն և տեղեկատվության փոխանակում ծննդի չգրանցման դեպքերը բացահայտելու և կանխելու նպատակով:
- Հաստատել համակարգված համագործակցություն համայնքներում գործող հասարակական կազմակերպությունների (այդ թվում՝ երեխայի իրավունքների և ազգային փոքրամասնությունների իրավունքների ապահովման բնագավառում գործող կազմակերպությունների) հետ ծննդի չգրանցման դեպքերը բացահայտելու և կանխելու նպատակով:

- Խնամակալության և հոգաբարձության մարմինների գործունեության ոչ բավարար արդյունավետությունը հաշվի առնելով՝ լրացուցիչ մեխանիզմներ սահմանել (այդ թվում՝ ֆինանսական և մարդկային ռեսուրսների ներդրում) համայնքում երեխայի ծննդյան փաստի չգրանցման դեպքերը բացահայտելու և գրանցման գործընթացը նախաձեռնելու նպատակով:
- Միջոցներ ձեռնարկել ԱԺ օրակարգում ընդգրկված՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի հրատապ ընդունման ուղղությամբ:
- Սահմանել քաղաքացիություն չունեցող անձանց հաշվառման մեխանիզմ:
- Իրականացնել հանրային իրազեկման բարձրացման միջոցառումներ՝ ապաքաղաքացիության կանխման և վերացման նպատակով:
- Իրականացնել մասնագիտական վերապատրաստման ծրագրեր տարածքային անձնագրային ծառայությունների աշխատակիցների համար քաղաքացիության ձեռք բերման ընթացակարգերի, ինչպես նաև համապատասխան աշխատակիցների կողմից անհրաժեշտ խորհրդատվություն և աջակցություն տրամադրելու վերաբերյալ:
- Ստորագրել և վավերացնել «Քաղաքացիության մասին» 1997թ.-ի եվրոպական կոնվենցիան, «Պետությունների իրավահաջորդության առնչությամբ ապաքաղաքացիության կանխարգելման մասին» կոնվենցիան:
- Ներդնել երեխայի ծննդյան փաստը չգրանցելու վերաբերյալ վիճակագրական տվյալների հավաքագրման միասնական համակարգ:
- Օրենսդրությամբ սահմանել որոշակիացված չափորոշիչներ՝ խնամակալության և հոգաբարձության մարմնի համար համապատասխան ցուցումը տալու կարգի հստակեցման նպատակով:
- Սահմանել խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից տրվող ցուցումը պատճառաբանելու և հիմնավորելու պահանջ:
- Սահմանել խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից ցուցում տալու ընթացակարգը և ժամկետները:

3.2 ԵՐԵՒԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ու ապահովումը մեր օրերում հանդիսանում են կարևորագույն խնդիր: Երեխաները բոլոր ժամանակաշրջաններում և հասարակարգերում մշտապես համարվել են հասարակության ամենաանպաշտպան և խոցելի խավերից մեկը: Այդ իսկ պատճառով ՀՀ Սահմանադրության (ընդունվել է 1995թ.-ի հուլիսի 5-ին և փոփոխվել՝ 2005թ.-ի նոյեմբերի 27-ին ժողովրդական հանրաքվեով) 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընտանիքը, մայրությունը և մանկությունը գտնվում են հասարակության և պետության պաշտպանության և հովանավորության ներքո: ՀՀ Սահմանադրության 36-րդ հոդվածում նշվում է, որ **ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են** հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար: Բացի Սահմանադրությունից, կարևոր իրավական ակտ է ՀՀ ընտանեկան օրենսգիրքը (ընդունվել է 2004թ.-ի նոյեմբերի 9-ին և վերջին անգամ փոփոխվել՝ 2013թ.-ի ապրիլի 30-ին), որտեղ մանրակրկիտ լուսաբանվում է երեխայի ընտանեկան կարգավիճակին վերաբերող հարաբերությունները (մասնավորապես 9-րդ գլուխը):

Հատուկ կարևորվում է «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը (ընդունվել է 1996թ.-ի մայիսի 29-ին և վերջին անգամ փոփոխվել՝ 2011թ.-ի մայիսի 23-ին), որը հանդիսանում է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի⁵⁰ կոնվենցիայի⁵¹ «ներպետական անալոգը», և այդ

⁵⁰ Այսուհետ՝ ՄԱԿ:

⁵¹ Հայաստանը միացել է 1993թ.-ի հունիսի 23-ին:



օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտեր:

ՀՀ-ում գործում է երեխայի իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգ, որի առաջին օղակը վարչական շրջաններին կից խնամակալության և հոգաբարձության մարմիններն են, երկրորդը՝ մարզպետարանների կանանց, երեխաների և ընտանիքի պաշտպանության բաժիններն ու Երևանի քաղաքապետարանի երեխաների պաշտպանության բաժինը, երրորդ՝ ամենավերին օղակը՝ Երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողովը: Ինչպես նշվեց հարցազրույցներից⁵² մեկի ժամանակ, համայնքային մակարդակում խնամակալության և հոգաբարձության մարմինների գործառույթները բավարար չափով չեն իրականացվում և երբեմն կրում են ձևական բնույթ, իսկ մարզային մակարդակում առկա է գործառույթների վերաբաշխման խնդիր, քանի որ այս մակարդակում պետք է իրականացվի ոլորտի համակարգում և վերահսկում: Հետևաբար պետք է հստակ տարանջատել համայնքային և մարզային մակարդակներում երեխաների պաշտպանության գործառույթները:

Հարկ է նշել, որ սույն ուսումնասիրությունն առաջինը չէ Հայաստանում, բայց քանի որ ուսումնասիրվող երևույթը դինամիկ է, ենթարկվում է մշտական փոփոխությունների, ունենում է զարգացման տարբեր միտումներ, մշտադիտարկման անհրաժեշտությունն ակնհայտ է:

Ստորև ներկայացված է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով նախատեսված և երեխաների պաշտպանությանն առնչվող հոդվածների վերաբերյալ օրենսդրական կարգավորումը (de jure) և փաստացի իրավիճակը (de facto) Հայաստանում:

3.2.1. Երեխայի պաշտպանություն՝ ներառյալ ընտանեկան միջավայրը

Ծնողական խնամատարություն

ՀՀ ընտանեկան օրենսգրքի⁵³ 41-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր երեխա ունի ընտանիքում ապրելու և դաստիարակվելու, իր ծնողներին ճանաչելու, նրանց հոգատարությանն արժանանալու (որքան դա հնարավոր է), նրանց հետ համատեղ ապրելու իրավունք, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կարող է հակասել երեխայի շահերին: Ծնողների բացակայության, նրանց ծնողական իրավունքներից զրկված լինելու և ծնողական հոգատարությունից զրկվելու այլ դեպքերում ընտանիքում դաստիարակվելու երեխայի իրավունքն ապահովում է խնամակալության և հոգաբարձության մարմինը: ՀՀ-ում ծնողների, ընտանիքի այլ անդամների և այլ անձանց պատասխանատվությունը՝ երեխաների դեմ ուղղված արարքների համար նախատեսված է ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով⁵⁴ և ՀՀ քրեական օրենսգրքով⁵⁵:

Երեխայի զարգացող ունակություններին բացասական ուղղություն տվող ծնողների նկատմամբ վարչական պատասխանատվությունը սահմանվում է 177 և 178 հոդվածներով՝ 20000 կամ 30000 ՀՀ դրամ տուգանքով, իսկ երեխայի դեմ հանցագործությունների վիճակագրությունը հետևյալն է՝⁵⁶

⁵² Հարցազրույցներն անցկացվել են 2014 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ոլորտի մասնագետների հետ:

⁵³ Այսուհետ՝ ՀՀ ԸՕ, ընդունվել է 2004թ.-ի նոյեմբերի 9-ին և վերջին անգամ փոփոխվել է 2013թ.-ի ապրիլի 30-ին:

⁵⁴ Այսուհետ՝ ՀՀ ՎԻՎՕ, ընդունվել է 1985թ.-ի դեկտեմբերի 6-ին և վերջին անգամ փոփոխվել 2014թ.-ի նոյեմբերի 20-ին: ՀՀ ՎԻՎՕ-ում նախատեսված են հետևյալ 2 հոդվածները՝ **Անչափահասին հարբած վիճակի հասցնելը (177) և Ծնողների և նրանց փոխարինող անձանց կողմից երեխաների դաստիարակության և ուսուցման պարտականությունները չկատարելը (178):**

⁵⁵ Այսուհետ՝ ՀՀ քր. օր., ընդունվել է 2003թ.-ի ապրիլի 18-ին և վերջին անգամ փոփոխվել 2014թ.-ի հունիսի 21-ին: ՀՀ քր. օր.-ի 20-րդ գլուխը՝ «Ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործություններ», նախատեսում է 10 հանցակազմ:

⁵⁶ 2010թ.-ի ընթացքում ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործություններով հետաքննության և նախաքննության նկատմամբ իրականացված դատախազական հսկողության վիճակի, դատարաններում մեղադրանքի պաշտպանության պրակտիկայի մասին տեղեկատվական նամակ: Երևան, 2011, էջ 6:

Աղյուսակ 3: Երեխայի դեմ հանցագործությունների վիճակագրություն

ՀՀ քր. օր.	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010
Հոդված 165	35	32	26	25	20	16	11	21
Հոդված 166	2	3	1	1		2		1
Հոդված 167				1				1
Հոդված 168	1		2		6	9	6	1
Հոդված 169						3	2	10
Հոդված 173	3	2	6	3	6	2	1	3
Ընդամենը	41	37	35	30	32	32	20	37

ՀՀ քրեական օրենսգրքի 169, 170, 171, 172 և 174 հոդվածներով քրեական գործեր չեն հարուցվել:

Ինչ վերաբերում է երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի իրականացմանը, ապա պետք է փաստել, որ ՀՀ-ում դեռ առկա է առանց ծնողական խնամքի մնացած⁵⁷ երեխաների խնամքի և դաստիարակության հիմնախնդիրը, ինչն ակնհայտ երևում է ՀՀ ԱՍՀՆ-ի կողմից ներկայացվող տվյալներով: Այսպես, 2013թ.-ին ՀՀ-ում ընդհանուր առմամբ գրանցված է եղել 695068 երեխա, որոնցից 325235 աղջիկ և 369833 տղա⁵⁸: Այդ երեխաների մեծամասնությունը՝ 99%-ից ավելին, գտնվել է ընտանիքներում, մի մասը (0.105%) գտնվել է մանկատներում, մյուս մասը (0.108%) գիշերօթիկ դպրոցներում:

Ծնողներից բաժանում

Ծնողները կամ նրանցից մեկը կարող են զրկվել ծնողական իրավունքներից ՀՀ ԸՕ-ի 59-րդ հոդվածով նախատեսված հիմքերի առկայության դեպքում: ՀՀ ԸՕ-ի 42-րդ հոդվածի համաձայն՝ ծնողների առանձին (ընդ որում՝ տարբեր պետություններում) ապրելու դեպքում երեխան նրանցից յուրաքանչյուրի հետ շփվելու իրավունք ունի: Արտակարգ իրադրության մեջ գտնվող (ծերբակալված, կալանավորված, բժշկական հաստատությունում գտնվելու և այլ դեպքերում) երեխան իր ծնողների և մերձավոր ազգականների, ինչպես նաև արտակարգ իրադրության մեջ գտնվող ծնողն իր երեխայի հետ շփվելու իրավունք ունեն օրենքով սահմանված կարգով: Մասնավորապես վերջին հարցերին անդրադառնում են ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը⁵⁹՝ դատապարտված անձանց, և «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքը՝ ձերբակալված և կալանավորված անձանց վերաբերյալ: Տեսակցությունները հստակեցված են ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին ՀՀ Կառավարության 2006թ.-ի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշմամբ: Ինչ վերաբերում է կերակրողին կորցրած երեխաների պաշտպանությանը, ապա «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի համաձայն՝ կերակրողին կորցրած երեխան ունի կենսաթոշակ ստանալու իրավունք, որի նշանակման և վճարման կարգը սահմանվում է ՀՀ օրենսդրությամբ, իսկ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքն ուղղակիորեն ամրագրում է, որպես կենսաթոշակի

⁵⁷ Այսուհետ՝ ԱԾԽՄ:

⁵⁸ www.armstat.am

⁵⁹ Այսուհետ՝ ՀՀ ՔԿՕ, ընդունվել է 2004թ.-ի դեկտեմբերի 24-ին և վերջին անգամ փոփոխվել է 2013 թ.-ի հունիսի 19-ին:

տեսակ է կերակրողին կորցնելու դեպքում տրամադրվող թոշակը, որը և՛ աշխատանքային, և՛ զինվորական կենսաթոշակ է համարվում: Վերը նշված օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է մահացած կերակրողի 18 տարին չլրացած երեխային: Կերակրողին կորցնելու դեպքում նպաստի նշանակումը և վճարումը սահմանված է ՀՀ Կառավարության 2014թ.-ի հունիսի 26-ի N 635-Ն որոշմամբ:

Հարցվողների մեծամասնությունը նշեց, որ ծնողական իրավունքներից զրկելու կամ դրանք սահմանափակելու գործընթացը տևական է, կապված է բյուրոկրատական քաշքշուկների հետ, ինչից ելնելով նման պահանջներով հայցեր դատարաններ քիչ են ներկայացվում, մասնավորապես ՀՀ մարզերում: ՀՀ-ում ծնողական իրավունքից զրկելու վիճակագրությունը հետևյալն է. 2013թ.-ին ծնողական իրավունքից զրկելու վերաբերյալ ՀՀ դատարաններին ներկայացվել է 45 հայց, որից միայն 9-ն է բավարարվել, իսկ 2012թ.-ին ներկայացված 48 հայցից բավարարվել է 17-ը⁶⁰:

Հաշվի առնելով հարցի կարևորությունը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը 2012թ.-ի մարտի 23-ին թիվ ԵԱԲԴ/0474/02/11 քաղաքացիական գործով կայացրել է նախադեպային որոշում⁶¹, որով ՀՀ վճռաբեկ դատարանը փաստացի տարբերակում է օրինականությունն ու երեխայի շահերի ապահովումը և հորդորում է ստորադաս դատարաններին իրականացնել երեխայի շահերի առավել արդյունավետ ապահովում: Ծնողական իրավունքների սահմանափակման վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանն իր դիրքորոշումները հայտնել է թիվ ԵԱԴԴ/1513/02/08 և ԵԱԲԴ/1095/02/08 քաղաքացիական գործերով:

Ուշագրավ է նաև այն փաստը, որ դատարան են դիմում նաև ծնողական իրավունքների վերականգնման հայցերով: Այսպես, 2013թ.-ին նման 3 հայց է ներկայացվել, որոնք մերժվել են, իսկ 2012թ.-ին ներկայացված 2 հայցից երկուսն էլ բավարարվել են⁶²:

Ինչ վերաբերում է կալանքի և ազատազրկման դեպքերին, ապա գործնականում ծնողի և երեխայի կապն ապահովելու առումով խնդիրներ գրեթե չեն առաջանում: Կալանքի և ազատազրկման դատապարտված անչափահասներին տրամադրվում են տեսակցություններ իրենց ծնողների կամ ծնողներին փոխարինող անձանց հետ: 2014թ.-ի դեկտեմբերի 20-ի դրությամբ՝ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում⁶³ պահվել են 2 դատապարտյալ անչափահաս, որոնց ծնողները պարբերաբար այցելել են հաստատություն իրենց երեխաներին տեսակցելու նպատակով: Եթե կալանքի կամ ազատազրկման ենթարկվածը ծնողն է, ապա տեսակցությունները տրամադրվում են, եթե դատապարտյալի երեխան որևէ չափահաս անձի ուղեկցությամբ այցելում է ՔԿՀ ծնողի հետ տեսակցություն ունենալու նպատակով: Բայց եթե երեխան նույնպես գտնվում է պետական հաստատությունում, ապա տեսակցությունների իրականացումը բարդանում է, քանի որ երեխային ՔԿՀ ուղեկցելու և ծնողի հետ տեսակցություն կազմակերպելու պարտականությունը պետական հաստատության աշխատակցի վրա դրված չէ: Օրենքը թույլ է տալիս, որ դատապարտյալն իր մինչև 3 տարեկան երեխայի հետ գտնվի ՔԿՀ-ում և հոգ տանի իր երեխայի համար, և գործնականում դա իրականացվում է, հատկապես, որ «Աբովյան» ՔԿՀ-ում կահավորված են մոր և մանկան սենյակներ, որտեղ

⁶⁰ Արդարադատական պրակտիկաներ (2015), տես http://court.am/?l=lo&id=50&cat_id=0&page_num=1

⁶¹ «Դատարանները երեխայի իրավունքները շոշափող ցանկացած գործ քննելիս առաջնայնությունը պետք է փան երեխայի շահերի առավել ապահովմանը: ... Դատարանը հաշվի է առնում երեխայի կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի, քույրերի ու եղբայրների հետ, երեխայի փարիքը, ծնողների բարոյական և անձնական այլ հատկանիշներ, ծնողներից յուրաքանչյուրի և երեխայի միջև գոյություն ունեցող հարաբերությունները, երեխայի դաստիարակության ու զարգացման համար պայմաններ ստեղծելու հնարավորությունը (ծնողների գործունեության (աշխատանքի) բնույթը, նրանց գոյքային ու ընտանեկան դրությունը և այլն):... Խնամակալության և հոգաբարձության մարմինը պարտավոր է անցկացնել թե՛ երեխայի և թե՛ այն անձի (անձանց) կյանքի հետազոտություն, ովքեր հավակնում են նրա դաստիարակությանը: Վերոնշյալից հետևում է, որ եթե երեխայի դաստիարակությանը հավակնում են մի քանի անձ, ապա խնամակալության և հոգաբարձության մարմինը պարտավոր է անցկացնել նշված բոլոր անձանց կյանքի հետազոտություն և դատարան ներկայացնել հետազոտության ակտը ու դրա հիման վրա վեճի էության մասին եզրակացությունը:...»

⁶² Արդարադատական պրակտիկաներ (2015), տես http://court.am/?l=lo&id=50&cat_id=0&page_num=1

⁶³ Այսուհետ՝ ՔԿՀ:

2014թ.-ի դեկտեմբերի 20-ի դրությամբ խնամվել են դատապարտյալ երեք կանանց 3 երեխաները: Դատապարտված կնոջ և նրա երեխայի համատեղ բնակվելու հարցի շուրջ չկա և չի կարող լինել մեկ միասնական կարծիք, քանի որ մոր և երեխայի համատեղ բնակության տևողությունը, ինչպես նաև երեխայի թույլատրելի տարիքը սահմանվում են՝ հիմնվելով կատարված գնահատականների, առկա փորձի և հիմնախնդրի շուրջ տեսակետների վրա⁶⁴:

Կերակրողին կորցնելու դեպքում պետությունը ստանձնում է երեխային կենսաթոշակով ապահովելու պարտականությունը, որը փաստացի իրականացվում է: Կերակրողին կորցնելու դեպքում նպաստի չափը որոշվում է՝ հաշվի առնելով ՀՀ Կառավարության 2014թ.-ի հուլիսի 17-ի N815-Ն, 2014թ.-ի օգոստոսի 28-ի N895-Ն և այլ որոշումներում ամրագրված նորմերը: ՀՀ վիճակագրական վարչության տվյալներին համապատասխան ՀՀ-ում 2013թ.-ին կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստացողների ընդհանուր թիվը կազմել է 2400 անձ, մինչդեռ 2012թ.-ին եղել է՝ 2800, իսկ 2011թ.-ին՝ 3300 անձ⁶⁵: Այս թվի նվազումը կարող է պայմանավորված լինել Ղարաբաղյան հակամարտության ընթացքում զոհված ծնողների երեխաների 18 տարեկանը լրանալու ու կենսաթոշակ ստացողների ցանկից հանվելու հանգամանքով:

Ընտանիքի վերամիավորում

ՀՀ ԸՕ-ի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծնողների ամուսնության դադարեցումը, այն անվավեր ճանաչվելը կամ նրանց առանձին ապրելը չեն ազդում երեխայի իրավունքների վրա: Ծնողների առանձին (ընդ որում՝ տարբեր պետություններում) ապրելու դեպքում երեխան նրանցից յուրաքանչյուրի հետ շփվելու իրավունք ունի: Քանի որ նման կարգավիճակում կարող է հայտնվել նաև երեխա փախստականը կամ փախստականի երեխան, այս հարցը պետք է քննարկվի Կոնվենցիայի հոդված 22-ի պահանջներին համապատասխան: «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ մուտքի վիզայի տեսակներից է՝ այցելության մուտքի վիզան՝ ընտանիքի վերամիավորման նպատակով (սույն օրենքի 15-րդ հոդվածի առաջին մասի «գ» կամ «դ» կետերով նախատեսված դեպքերում)⁶⁶: Նույն օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օտարերկրացուն մուտքի վիզայի տրամադրումը (ժամկետի երկարաձգումը) կարող է մերժվել, տրամադրված մուտքի վիզան ուժը կորցրած ճանաչվել կամ մուտքը ՀՀ արգելվել, եթե նա դատապարտվել է ՀՀ-ում ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար, և դատվածությունը սահմանված կարգով չի հանվել կամ մարվել: Բայց այս դրույթը չի տարածվում ՀՀ-ում մերձավոր ազգականներ (ամուսին, երեխա, հայր, մայր, հարազատ քույր, եղբայր, տատ, պապ) ունեցող անձանց վրա:

Հաշվի առնելով ընտանիքի վերամիավորմանն ուղղված լայն քարոզարշավները, որոնք իրականացվում են միջազգային կազմակերպությունների (ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի, Միգրացիայի միջազգային կազմակերպության և այլն) ու ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության միգրացիոն պետական ծառայության⁶⁷ կողմից՝ մասնագետների պնդմամբ այս ոլորտում խնդիրներ գործնականում չեն գրանցվում: ՀՀ ՄԴԾ-ն չի կայացրել մերժման որոշումներ ընտանիքի վերամիավորման նպատակով փախստականների կողմից ներկայացված դիմումների վերաբերյալ: ՀՀ ՄԴԾ-ից ստացված տեղեկությամբ պարզվել է, որ առանց ուղեկցության երեխայի

⁶⁴ Европейские пенитенциарные правила (рекомендация №R (87)3). Выпуск 2/ Ред. совет Ю. К. Александров и др. М. 1999, էջ 57:

⁶⁵ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանը թվերով - 2014. Կենսամակարդակ և սոցիալական ոլորտ, էջ 33, տես http://armstat.am/file/article/armenia_14_5.pdf

⁶⁶ Այդ հանգամանքները հետևյալն են՝ ՀՀ-ում ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու ամուսինը, ծնողը կամ զավակը լինելը, կամ ՀՀ քաղաքացու ՀՀ-ում մշտական կամ հատուկ կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու ամուսինը կամ մերձավոր ազգականը (ծնող, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ):

⁶⁷ Այսուհետ՝ ՀՀ ՄԴԾ:

մեկ դեպք է եղել 2010թ.-ին, երբ 17 տարեկան մեկ երեխա Մալիից հայտնվել է ՀՀ-ում:

Ինչ վերաբերում է երեխաների տեղափոխմանն այլ պետություններ, ապա այս հարցի կարգավորման գործնական աշխատանքներում փոփոխություններ են իրականացվել: Այսպես՝ ՀՀ անձնագրային համակարգի կանոնադրությունը և ՀՀ քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին ՀՀ Կառավարության 1998թ.-ի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշման մեջ 2011թ.-ի հունիսի 23-ին կատարված փոփոխությունների համաձայն՝ ՀՀ քաղաքացու անձնագիր պարտավոր են ունենալ 16 տարին լրացած ՀՀ բոլոր քաղաքացիները անկախ բնակության վայրից: 16 տարին չլրացած ՀՀ քաղաքացիներին ՀՀ քաղաքացու անձնագիր տրվում է ըստ ցանկության՝ մեկ ծնողի կամ օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա: Իսկ քանի որ ՀՀ քաղաքացու վավերական անձնագիրը հիմք է հանդիսանում ՀՀ սահմանն օրինական հատելու համար, երեխայի՝ ծնողներից որևէ մեկի ուղեկցությամբ սահմանը հատելու համար իրավական որևէ խոչընդոտ լինել չի կարող: Այսինքն մյուս ծնողը փաստացի կարող է իրազեկ չլինել երեխայի տեղափոխման մասին: Հետևաբար, պետք է մշակել մեխանիզմներ՝ երեխայի վերադարձի և մյուս ծնողի իրավունքներն ապահովելու համար:

Երեխաների տեղափոխման իրավական կարգավորումը ներկայացվել է նախորդ հոդվածը մեկնաբանելիս: Հայաստանը վավերացրել է «Երեխաների միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին» 1993թ.-ի մայիսի 29-ի կոնվենցիան, որի 8-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ, հաստատություն կամ այլ մարմին, որը բողոք է ներկայացրել այն մասին, որ երեխան տեղափոխվել կամ պահվել է՝ խնամակալության իրավունքների խախտմամբ, կարող է դիմել երեխայի մշտական բնակության կամ ցանկացած այլ պայմանավորվող պետության կենտրոնական մարմին⁶⁸ երեխայի վերադարձն ապահովելուն աջակցելու համար: Երեխային առևանգելու համար պատասխանատվությունը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով: Այն կիրառվում է անկախ այն հանգամանքից, թե առևանգումն իրականացվել է պետական սահմանը հատելով, թե ՀՀ-ի ներսում: Երեխայի տեղափոխման հետ կապված հանգամանքներ նախատեսված են նաև ՀՀ քրեական օրենսգրքի այլ հոդվածներում⁶⁹:

ՀՀ-ում 2004-2014թթ.-ի ընթացքում գրանցվել է երեխայի առևանգման մոտ 40 դեպք: Ընդ որում, եթե առևանգումն իրականացվել է ծնողի կողմից, ապա կատարված արարքը հանցագործություն չի համարվում: Հայաստանը սկսած 2002թ.-ից ակտիվորեն ներգրավվել է ռեադմիսիոն (հետընդունման)՝ վերադարձի համաձայնագրերի կնքման գործընթացում: Ներկայում Հայաստանը նմանատիպ 11 համաձայնագրեր է ստորագրել 13 պետությունների հետ, որոնցից 12-ը եվրոպական երկրներ են, իսկ մեկը՝ ԱՊՀ երկրներից՝ Ռուսաստանը: 2013թ.-ի ապրիլի 19-ին Հայաստանն առանց թուլտվության բնակվող անձանց մասին ռեադմիսիոն համաձայնագիր է ստորագրել ԵՄ հետ, որն ուժի մեջ է մտել 2014թ.-ի հունվարի 1-ից⁷⁰:

Գործնականում երեխաների ապօրինի տեղափոխումների և արտասահմանից չվերադառնալու խնդիրների հետ կարելի է առնչվել այն դեպքերում, երբ ծնողներից մեկն ունի ՀՀ քաղաքացիություն, իսկ մյուսը՝ այլ երկրի քաղաքացիություն, և երեխան ծնվել է ՀՀ-ից դուրս: Ծնողների ամուսնալուծության դեպքում, որպես կանոն, երեխան մնում է այլ պետությունում, և ՀՀ քաղաքացի ծնողը բարդություններ է ունենում իր երեխայի հետ հանդիպելու ու շփվելու համար: Հարցի կարգավորումը հնարավոր է միայն միջազգային մասնավոր իրավունքի նորմերի կիրառմամբ:

⁶⁸ ՀՀ-ում կենտրոնական մարմին է ՀՀ արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալությունը:

⁶⁹ Օրինակ՝ ՀՀ քր. օր.-ի 132.2-րդ հոդվածով նախատեսված է շահագործման նպատակով երեխային հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը, ինչպես նաև այդպիսի անձանց շահագործելը կամ շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը, որը կատարվել է ՀՀ պետական սահմանը հատելով՝ անձի տեղափոխումը կազմակերպելու միջոցով, իսկ 329.1-րդ հոդվածով քրեականացված է անօրինական միգրացիայի կազմակերպումը:

⁷⁰ Ուսուցողական նյութեր հետընդունման գործընթացում ներառված մարմինների՝ ՀՀ ԱԱԾ սահմանապահ ծառայության, ՀՀ ոստիկանության, ՀՀ ԱԳՆ, ՀՀ ՍԿՆ ՄՊԾ աշխատակիցների՝ համար, ՄՄԿ Հայաստան, 2013, էջ 3:

Ծնողական պարտականություններ և պետական աջակցություն

Կոնվենցիայի 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին վերաբերող վերլուծությունն իրականացվել է 5-րդ և 9-րդ հոդվածները ներկայացնելիս: Ինչ վերաբերում է աշխատող ծնողների իրավունքին, ապա ՀՀ աշխատանքային օրենսգրքի մի շարք հոդվածներում նախատեսված են արտոնություններ մինչև մեկ կամ մինչև երեք տարեկան երեխա խնամող աշխատողների համար⁷¹: Բայց եթե ծնողներն աշխատում են, ապա պետության հաշվին պետք է կազմակերպվի նախադպրոցական կրթությունը:

Նախադպրոցական հաստատությունների քանակը և դրանք հաճախող երեխաների թիվը կարելի է ներկայացնել հետևյալ աղյուսակի տեսքով⁷²:

Աղյուսակ 4: Նախադպրոցական հաստատությունների քանակը և դրանք հաճախող երեխաների թիվը

	2011թ.	2012թ.	2013թ.
Նախադպրոցական հաստատությունների քանակը	660	683	697
Քաղաքներում	419	421	422
Գյուղերում	241	262	275
Նախադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների թվաքանակը, 1 000 երեխա	63.5	69.5	68.9
Քաղաքներում	52.4	56.3	55.2
Գյուղերում	11.1	13.2	13.7

Պետական նախադպրոցական հաստատություններում գոյացած հերթագրումները հանգեցնում են նրան, որ որոշ ծնողներ հարկադրված են իրենց երեխաներին տանել մասնավոր հաստատություններ: Բացի այդ, պետության կողմից իրականացվող քաղաքականությունն այդքան էլ արդյունավետ չէ այս առումով, քանի որ ՀՀ մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող հաստատությունների գերծանրաբեռնվածությունը հանգեցնում է որոշ երեխաների՝ նախակրթական ծրագրերից դուրս մնալուն՝ հաշվի առնելով մասնավոր հաստատությունների վճարովի լինելը: Երեխաների դաստիարակության և այդ նպատակով կիրառվող մեթոդների վերաբերյալ հարցազրույցների ընթացքում ստացվել են իրարամերժ տեղեկություններ: Մասնավորապես՝ նշվել է այդ հաստատություններում երեխաների իրավունքների ոտնահարման դեպքերի մասին՝ ծեծը որպես դաստիարակման մեթոդ կիրառելը, տարբեր սոցիալական խմբերի երեխաների նկատմամբ խտրականության դրսևորումը, հատուկ կարիքավոր երեխաների նկատմամբ ոչ պատշաճ վերաբերմունքը և այլն: Մինչդեռ որոշ կառույցների ներկայացուցիչներ պնդում էին, որ նման դեպքեր ՀՀ-ում համարյա բացակայում են:

⁷¹ Ոչ լրիվ աշխատանքային օր կամ ոչ լրիվ աշխատանքային շաբաթ սահմանվում է մինչև 1 տարեկան երեխա խնամող աշխատողի պահանջով (հոդված 141), մինչև 3 տարեկան երեխա խնամող աշխատողը կարող է գիշերային աշխատանքի ներգրավվել միայն իր համաձայնությամբ (հոդված 148), մինչև 1 տարեկան երեխա խնամող աշխատողները կարող են ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին աշխատանքի ներգրավվել միայն իրենց համաձայնությամբ (հոդված 156) և այլն:

⁷² ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանը թվերով - 2014. Կենսամակարդակ և սոցիալական ոլորտ, էջ 37, տես http://armstat.am/file/article/armenia_14_5.pdf

Պաշտպանություն բոլոր տեսակի բռնություններից

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր երեխա ունի ամեն տեսակ (ֆիզիկական, հոգեկան և այլ) բռնությունից պաշտպանության իրավունք: Ցանկացած անձի, այդ թվում՝ ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին, արգելվում է երեխային ենթարկել բռնության կամ նրա արժանապատվությունը նվաստացնող պատժի, կամ նմանօրինակ այլ վերաբերմունքի: Պետությունն ու նրա համապատասխան մարմիններն իրականացնում են երեխայի պաշտպանությունը ցանկացած բռնությունից, շահագործումից, հանցավոր գործունեության մեջ ներգրավելուց, այդ թվում՝ թմրանյութերի օգտագործումից, դրանց արտադրության կամ առևտրի մեջ ներգրավումից, մուրացկանությունից, անառակությունից, մոլի խաղերից և նրա իրավունքների և օրինական շահերի այլ ոտնահարումից: Երեխաների առողջության դեմ ուղղված հանցագործություններն առանձնացված չեն ՀՀ քրեական օրենսգրքում և դիտարկվում են առողջության դեմ ուղղված հանցագործությունների ընդհանուր համատեքստում կամ առանձին ծանրացնող հանգամանքի տեսքով, իսկ սեռական բռնություններն ու երեխաների թրաֆիքինգը կամ շահագործումն առանձին հոդվածներով ամրագրված են: Երեխաների դեմ սեռական հանցագործությունների վերաբերյալ օրենսդրությունն էապես բարելավվել է 2013թ.-ի դեկտեմբերի 23-ին: Երեխաները պաշտպանված են նաև շահագործումից: Մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 132.2-րդ հոդվածի համաձայն՝ երեխայի թրաֆիքինգը կամ շահագործումը համարվում է ծանր հանցագործություն: Ի տարբերություն չափահասների թրաֆիքինգի, այստեղ նշված չեն հանցագործության կատարման եղանակները, հետևաբար երեխայի թրաֆիքինգը կամ շահագործումը համարվում է ավարտված՝ անկախ այն հանգամանքից երեխայի նկատմամբ կիրառվել է կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն, դրա սպառնալիքը, խաբեություն կամ այլ եղանակ:

Ինչ վերաբերում է երեխային վիրավորանքից, հոգատարության բացակայությունից, անուշադրությունից կամ կոպիտ վերաբերմունքից զերծ պահելուն, ապա այս ոլորտին վերաբերող օրենսդրությունը հստակ չէ: Մասնավորաբար՝ այս երևույթների նկարագրման ու դրանց դեմ պայքարի փորձ է իրականացվել «Ընտանեկան բռնության կանխարգելման մասին» ՀՀ օրենքի նախագծով, որը դեռ լրամշակման փուլում է գտնվում: Իսկ այլ՝ հատուկ ոլորտային իրավական ակտ ՀՀ-ում գոյություն չունի:

Հարկ է նշել, որ ՀՀ-ում բռնության ոչ բոլոր դրսևորումներն են քրեորեն պատժելի, հետևաբար ներկայացվող պաշտոնական վիճակագրությունն արտացոլում է միայն այն հատվածը, որը վերաբերում է բռնության հանցավոր դրսևորումներին, մինչդեռ՝ ՀՀ-ում առավել հաճախ հանդիպում են երեխաների նկատմամբ բռնության քրեորեն չպատժվող դրսևորումները (անտեսում, մեկ հարված, հոգեբանական բռնության դրսևորումներ և այլն): Երեխաների նկատմամբ բռնության դրսևորումները պայմանավորված են ընտանիքի և հասարակության կողմից երեխային որպես անհատ չընկալելու կամ մասնակի ընկալելու հանգամանքով: Ավելին, եթե ծնողը փորձում է դաստիարակել երեխային իր չիրականացված երազանքներին հասցնելու նպատակով, ապա երեխայի անհատականությունն «անհետանում է» ընտանիքի և ընտանիքի անդամների պահանջների մեջ, ինչը կարող է հանգեցնել երեխայի դեֆորմացիայի կամ հետագայում ինքնուրույն որոշում կայացնելու անկարողության: Ցավոք, երեխայի նկատմամբ ծեծը, ֆիզիկական այլ բռնությունը, հոգեբանական բռնությունը որպես դաստիարակչական մեթոդներ դեռ կիրառվում են:

Ինչ վերաբերում է երեխաների նկատմամբ քրեորեն պատժելի բռնության դեպքերին, ըստ վիճակագրության՝ երեխաների նկատմամբ իրականացվում են ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հանցագործություններ (առողջությանը դիտավորյալ ծանր վնաս պատճառելը), 119-րդ հոդվածով (խոշտանգումը), 131-րդ հոդվածով (առևանգումը), սեռական հանցագործությունները (հանցագործություններից առավել տարածված խումբը) և այլն: Ընդհանուր առմամբ 2004-2014 թվականների ընթացքում երեխաների դեմ ուղղված սեռական հանցագործություններով հարուցվել է մոտ 140 քրեական գործ, որից 7 գործով

հանցագործը նույնպես անչափահաս է եղել: Տարեցտարի Հայաստանում ավելանում են նաև երեխաների պոռնկության և մուրացկանության շահագործման դեպքերը: 2011թ.-ից առ այսօր գրանցվել է երեխայի թրաֆիքինգի կամ շահագործման 11 դեպք⁷³: Մուրացկանության շահագործման բոլոր դեպքերն իրականացվել են տղա երեխաների նկատմամբ, միայն մեկ քրեական գործով⁷⁴ տուժողն անչափահաս աղջիկ էր, ով շահագործվել է մոր փաստական ամուսնու կողմից: Սեռական շահագործման բոլոր դեպքերով զոհերն աղջիկներ էին⁷⁵: Չնայած երեխայի նկատմամբ բռնության քրեորեն պատժելի դրսևորումների նկատմամբ պետությունն իրականացնում է պայքարի հստակ մեթոդներ, բայց միևնույն է դրանք բավարար չեն երեխային բռնությունից պաշտպանելու համար, քանի որ քրեորեն անպատժելի դեպքերը, իսկ երբեմն նաև մասնավոր մեղադրանքի դեպքերը (ծեծ, դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելը և այլն) մնում են առանց պատշաճ քննության:

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին 2014թ.-ի փետրվարի 27-ի N303-Ն ՀՀ Կառավարության որոշման 53-րդ կետի համաձայն՝ պետք է մշակել երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի հայեցակարգ և միջոցառումների ծրագիր: Այդ գործողությունը նախատեսված է կատարել ՀՀ ԱՍՀՆ-ի և ՀՀ ոստիկանության կողմից՝ միասնական համապարփակ փաստաթուղթ ներկայացնելով:

Երեխայի խնամք իրականացնող հաստատություններում չկան անձնակազմի համար մշակված հատուկ կանոնակարգեր, որոնք կկարգավորեն երեխաների հետ հարաբերությունները երեխաների պաշտպանության նպատակով: Բռնություններից պաշտպանված լինելու համապատասխան ազգային ուղղորդման ընթացակարգի բացակայությունը նույնպես «նպաստում է» ստեղծված անցանկալի իրավիճակին: Գործնականում մասնագետները հիմնականում դիմում են սաստելու, ենթարկելու, ավտորիտար կառավարման այլ միջոցների: Արտահայտությունները և ձևակերպումները, որոնք անձնակազմի մի մասը գործածում է երեխաներին և նրանց ծնողներին որակելիս, ուղղակի խախտում է նշանակում էթիկական և մասնագիտական տեսանկյուններից: Բոլոր հաստատություններում բավականին բազմազան է պատժաձևերի «զամբյուղը». ի լրումն լայնորեն տարածված «անկյուն կանգնեցնել», «բղավել», «ականջ քաշել», «ծեծել» ձևերին՝ կարելի է հանդիպել նաև «հայիոյանք», «մութ տեղում պահել», «դպրոցից հեռացնել» (վերջինս շատ փոքր թվով է) ձևերին, ինչպես նաև այլ ոչ ստանդարտ ձևեր՝ երեխաներին դասարանում անտեսելը, հոգեբանի մոտ գնալուց զրկելը, բարևին չպատասխանելը, ցածր գնահատական դնելը, ավելի շատ տնային աշխատանք հանձնարարելը, ճաշից զրկելը: Հատկանշական է, որ երեխաների մեծ մասը հակված է վերը թվարկված պատժաձևերը համարելու արդարացված⁷⁶:

Ընտանեկան միջավայրից զրկված երեխաներ

ՀՀ ԸՕ-ի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը ծնողների մահվան, նրանց ծնողական իրավունքներից զրկելու, ծնողական իրավունքները սահմանափակելու, ծնողներին անգործունակ ճանաչելու, երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից ծնողների խուսափելու (այդ թվում՝ դաստիարակչական, բժշկական, բնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններից իրենց երեխաներին վերցնելուց ծնողների հրաժարվելու դեպքերում), ինչպես նաև ծնողական խնամքի բացակայության այլ դեպքերում, երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը դրվում է խնամակալության և հոգաբարձության մարմինների վրա: Խնամակալության և հոգաբարձության մարմինները բացահայտում են ԱԾԽՄ երեխաներին, վարում են նման երեխաների հաշվառումը և, ելնելով ծնողական

⁷³ ԵՔԴ/0054/01/09 քրեական գործ, ԵԷԴ/0079/01/09 քրեական գործ և այլն:

⁷⁴ ԵՇԴ/0026/01/12 քրեական գործ:

⁷⁵ Օրինակ՝ քրեական գործեր՝ ԵԿԴ/0164/01/13, ԵՇԴ/0052/01/12, ԿԴ1/0082/01/13, ԵՄԴ/0129/01/11, ԼԴ/0050/01/13 և այլն:

⁷⁶ Հատուկ կրթական հաստատությունների մոնիթորինգի հաշվետվություն, 2013, էջ 10:



խնամքից զրկվելու որոշակի հանգամանքներից, ընտրում են այդ երեխաներին տեղավորելու ձևերը: 2011թ.-ի փետրվարի 24-ի N164-Ն որոշմամբ ՀՀ Կառավարությունը հաստատել է խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը, որտեղ մանրամասնված են ոչ միայն այդ մարմինների գործառույթները, խնդիրները, համագործակցությունն այլ մարմինների հետ, այլ նաև այդ մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Այդ որոշման 14-րդ կետով սահմանված են խնամակալության և հոգաբարձության մարմինների իրավունքներն ու պարտականությունները: ԱԾԽՄ երեխաների խնամքը ստանձնում է պետությունը՝ կազմակերպելով կամ խնամակալության ձևակերպումը, կամ որդեգրումը, կամ պետական հաստատությունում տեղավորելը, կամ խնամատար ընտանիքին հանձնելը:

ՀՀ ԱՍՀՆ համակարգում գործում է երեխաների շուրջօրյա խնամքի թվով 6 հաստատություն (մանկատուն)՝ 3 ընդհանուր տիպի մանկատուն և 3 մասնագիտացված մանկատուն: Ներկայում մանկատներում խնամվում է շուրջ 731 երեխա, այդ թվում 506-ը՝ մասնագիտացված մանկատներում: ՀՀ ԱՍՀՆ համակարգում գործում է 7 երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն, որոնք իրականացնում են ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված սոցիալապես անապահով ընտանիքների 6-18 տարեկան երեխաների խնամքը և դաստիարակությունը: Ներկայում երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններում խնամվում են սոցիալապես անապահով ընտանիքների շուրջ 750 երեխա: ՀՀ ԱՍՀՆ համակարգում գործում է սոցիալական հոգաձության երկու կենտրոն, որտեղ իրականացվում են դիսկի ենթակա երեխաների խնամքն ու սոցիալական հոգաձությունը, կրթադաստիարակչական, առողջապահական,

սոցիալ-հոգեբանական ծառայությունների և խորհրդատվությունների տրամադրման միջոցով կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված երեխաների հիմնախնդիրների լուծմանն ուղղված աշխատանքները: Յուրաքանչյուր կենտրոնում իրականացվում է 100 երեխայի ցերեկային խնամքն ու դաստիարակությունը⁷⁷: ՀՀ-ում գտնվող հատուկ հաստատություններում խնամվում կամ կրթվում է 2106 երեխա, որոնցից՝ 1081 տղա⁷⁸:

Հատուկ կրթական հաստատությունների մշտադիտարկման հաշվետվության համաձայն, հատուկ հաստատություններում խնամվող երեխաների պարագայում այդ երեխայի «ես»-ի ձևավորումն առավել բարդ է, մասնավորապես՝ հաշվի առնելով անհատականությունը ճնշելու դեպքերը: Օրինակ՝ հաստատությունն իր խնդիրը համարում է միայն երեխայի կրթության իրավունքի իրացումը, ինչը տրամաբանության տեսակետից խառնաշփոթ է առաջացնում. կրթության իրավունքն առանձին, մնացած իրավունքներից անջատ, անհնար է իրականացնել: Մտահոգիչ է հաստատության պրակտիկայում երեխայի հանդեպ նման ոչ ամբողջական մոտեցմամբ աշխատանքը. այն խիստ դժվարացած է բավարար մարդկային և այլ ռեսուրսներ չունենալու, ինչպես նաև հարակից սոցիալական կառույցների հետ համագործակցության պակասի պատճառով⁷⁹:

Հատուկ հաստատություններում գտնվող երեխաների համար կենսապահովման պայմանները բավարար չեն՝ սկսած այդ շինությունների արտաքին տեսքից և վերջացրած անձնակազմի կողմից ցուցաբերվող մոտեցումներով: Իր ընտանեկան միջավայրից զրկված կամ իր լավագույն շահերի տեսակետից այդպիսի միջավայրում մնալ չկարողացող երեխան պետության կողմից պետք է ստանա ոչ միայն տարածք, որտեղ նա ժամանակավորապես կբնակվի, այլ նաև հատուկ աջակցություն ու օգնություն՝ ստեղծված իրավիճակը հաղթահարելու ու այդ իրավիճակից դուրս գալու համար: Հարցազրույցների ընթացքում կարծիք հնչեցվեց, որ «այդտեղ պայմանները պետք է լինեն այնպիսին, որ երեխան չցանկանա այնտեղից փախչել, այլ հակառակը՝ անգամ գույները լինեն գրավիչ ու հանգստացնող, իսկ մասնագետները անցնեն վերապատրաստում և թեստավորվեն՝ երեխային սիրելու ունակության տեսանկյունից»:

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին 2014թ.-ի փետրվարի 27-ի N303-Ն ՀՀ Կառավարության որոշման 46-րդ կետի համաձայն՝ ՀՀ ԱՍՀՆ-ն ՀՀ Կառավարություն պետք է առաջարկություններ ներկայացնի շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների այլընտրանքային ծառայությունների վերակազմակերպման վերաբերյալ:

Հարցազրույցների ընթացքում նշվեց, որ խնամքի հաստատությունները երեխաների համար արդյունավետ չեն, քանի որ մեծ խմբում ապրելով՝ երեխան կորցնում է ինքնուրույնությունը՝ հետագայում բարդություններ ունենալով ընտանիք ստեղծելիս, դժվարությամբ է կարծիք ձևավորում, հատկապես, եթե այդ կարծիքը տարբերվում է ընդհանուր կարծիքից: Միայն այդ հաստատությունների տղաներն են շահում, քանի որ դա օգնում է արագ հարմարվել բանակի պայմաններին, այն էլ ընդամենը 2 տարում:

ՀՀ-ում պետք է տարբերել գրանցված խնամակալությունն ու չգրանցված խնամակալությունը: Վերջինիս դեպքում մերձավոր ազգականն ուղղակի դաստիարակում է երեխային՝ առանց օրինական գրանցում իրականացնելու, քանի որ խնամակալության գրանցումը կրում է «ձևական» բնույթ և անհրաժեշտ է միայն բացառիկ դեպքերում՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների հետ առնչվելիս:

Որդեգրում

ՀՀ ԸՕ-ի 112-րդ հոդվածի համաձայն՝ որդեգրումը իրավաբանական այն ակտն է, որի համաձայն որդեգրողները և որդեգրվածները ձեռք են բերում ծնողների և զավակների հա-

⁷⁷ Ընտանիքի, կանանց, երեխաների հարցեր/վիճակագրություն Տեղեկատվությունը վերցված է http://www.mlsa.am/home/index.php?menu_id=110&child_id=128&code_id=200 կայքից:

⁷⁸ Հատուկ կրթական հաստատությունների մոնիթորինգի հաշվետվություն, 2013, էջ 8:

⁷⁹ Նույն տեղը, էջեր 9-10:

մար օրենքով նախատեսված իրավունքներ և պարտականություններ: Որդեգրումը համարվում է ԱԾԽՄ երեխաների տեղավորման նախապատվելի ձևը: Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև ՀՀ սահմաններից դուրս բնակվող ՀՀ քաղաքացիների կողմից ՀՀ քաղաքացի երեխաների որդեգրումը թույլատրվում է միայն այն դեպքերում, երբ հնարավորություն չկա այդ երեխաներին ՀՀ տարածքում մշտապես ապրող ՀՀ քաղաքացիների ընտանիքում դաստիարակության հանձնելու կամ երեխաներին իրենց ազգականների կողմից որդեգրելու: ՀՀ ԸՕ-ի 113-րդ հոդվածի համաձայն՝ որդեգրումը կատարում է դատարանը՝ երեխային որդեգրել ցանկացող անձի (անձանց) դիմումով: Երեխայի որդեգրումը հաստատելու մասին գործի քննությունը դատարանը կատարում է հատուկ վարույթի՝ քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգով: Երեխայի որդեգրման համար անհրաժեշտ է ՀՀ մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) եզրակացությունը՝ որդեգրման հիմնավորվածության և այդ որդեգրումը որդեգրվող երեխայի շահերին համապատասխանելու մասին՝ նշելով որդեգրվող երեխայի և որդեգրողի (որդեգրողների) անձնական շփումների փաստի վերաբերյալ տեղեկություններ: ՀՀ ԸՕ-ի 121-րդ հոդվածի համաձայն՝ 10 տարին լրացած երեխայի որդեգրման համար անհրաժեշտ է նրա համաձայնությունը:

Երեխաների պաշտպանության ոլորտում ամենաառանցքային խնդիրներից է որդեգրումը, որն իր մարդասիրական դրսևորմամբ հանդերձ՝ կարող է հանգեցնել ոչ մարդասիրական դրսևորումների, մասնավորապես երեխայի շահագործման, սեռական ոտնձգության, ծեծի կամ այլ բռնության: ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ գլխում հատուկ կարևորվում է ՀՀ քրեական օրենսգրքի 168-րդ հոդվածը, որը նախկինում պատասխանատվություն էր նախատեսում երեխայի առք ու վաճառքի համար, իսկ 2011թ.-ից պատասխանատվություն է նախատեսում խնամքը ստանձնելու նպատակով երեխայի առքի և ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով երեխայի վաճառքի համար: Պատասխանատվության ենթակա է և՛ երեխայի գնորդը, և՛ վաճառողը:

ՀՀ դատական դեպարտամենտի տվյալներով ՀՀ-ում 2012թ.-ին երեխայի որդեգրման վերաբերյալ ներկայացվել է 99 հայց, որից բավարարվել է 96-ը, իսկ 2013թ.-ին՝ 82 հայց, որից բավարարվել է 79-ը: Որդեգրումը ոչ միշտ է դրական անդրադառնում որդեգրվող երեխայի վրա, ինչի մասին վկայում են որդեգրումը վերացնելու դեպքերը: Երեխայի որդեգրումը վերացնելու վերաբերյալ 2012թ.-ին ներկայացվել է 16 հայց, որից 8-ը բավարարվել է, իսկ 2013թ.-ին՝ 21 հայց, որից 13-ը բավարարվել է⁸⁰:

ՀՀ ԱՍՀՆ տվյալների համաձայն՝ 2013թ.-ին որդեգրման վերաբերյալ վիճակագրությունը հետևյալն է. որդեգրել ցանկացող անձանց թիվը 245-ն է, ՀՀ քաղաքացի որդեգրել ցանկացող անձանց թիվը 101-ն է, օտարերկրյա քաղաքացի որդեգրել ցանկացող անձանց թիվը 144-ն է, որդեգրման ենթակա երեխաների թիվը 109-ն է, որդեգրված երեխաների թիվը 47-ն է (ՀՀ քաղաքացիների կողմից՝ 20, իսկ օտարերկրյա քաղաքացիների կողմից՝ 27)⁸¹: ՀՀ-ում որդեգրումը հանդիսանում է խնամակալության հիմանական ձևը, բայց 2 տարվա ընթացքում վերացված 21 որդեգրումներն առնվազն վկայում են, որ որդեգրողները իրականացրել են ՀՀ ԸՕ-ի 130-րդ հոդվածում թվարկված գործողություններից որևէ մեկը: Ելնելով վերոգրյալից և երեխայի շահերից, հարկ է նշել, որ որդեգրումը՝ որպես խնամակալության հիմանական ձև վերանայման կարիք ունի:

Բուժման վերահսկումը խնամքի հաստատություններում

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր երեխա ունի առողջության պահպանման և ամրապնդման իրավունք: Պետական համապատասխան մարմիններն ապահովում են առողջապահական ծառայություններից երեխայի ան-

⁸⁰ Հայաստանի դատական համակարգի պաշտոնական կայքէջ, 2014թ. http://court.am/?l=lo&id=50&cat_id=0&page_num=1

⁸¹ Տե՛ս http://www.mlsa.am/home/index.php?menu_id=110&child_id=128&code_id=200



վճար կամ արտոնյալ պայմաններով օգտվելու հնարավորությունը՝ ամենամյա առողջապահական նպատակային ծրագրերի շրջանակներում: Եթե նման հաստատություն տեղավորված երեխայի ծնողներն անհայտ են, ապա նշված մարմինները դիմում են ՀՀ ոստիկանություն, որն առաջնորդվելով «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով պարտավոր է հայտնաբերել անհայտ կորած անձանց, իսկ օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ ի լրումն այլ միջոցների ոստիկանությունն իրավունք ունի անհատույց օգտագործել պետությանը պատկանող զանգվածային լրատվության միջոցները՝ անհայտ կորած անձանց հայտնաբերելու նպատակով: Մինչև ծնողների հայտնաբերումը երեխան չի համարվում ծնողազուրկ, բացառությամբ, եթե ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 44-րդ հոդվածի համաձայն մեկ տարվա ընթացքում անձի բնակության վայրում տեղեկություններ չկան նրա գտնվելու վայրի մասին⁸², ինչը հիմք է, որ շահագրգիռ անձանց դիմումով դատարանը կարող է քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչել: Միայն դրանից հետո հնարավոր է երեխային որդեգրել կամ նրա մասնակցությամբ իրականացնել նրա խնամքը: Ընդ որում, եթե անհայտ բացակայողը հայտնվում է, ապա դա հանգեցնում է որդեգրման վերացմանը:

ՀՀ Կառավարության 2006թ.-ի նոյեմբերի 9-ի N1735-Ն որոշմամբ հաստատվել է երեխաների խնամքի և պաշտպանություն իրականացնող հաստատություններում (մանկատուն, գիշերօթիկ) երեխաների տեղավորման կարգը: Մանկատներում երեխաների տեղավորման կարգի 4-րդ կետի համաձայն՝ մանկատանը տեղավորվում են երեխաներ՝ բժշկական հաստատություններից, ՀՀ ոստիկանության մարմիններից, ընտանիքներից և երեխաների ժա-

⁸² Բացակայողի վերաբերյալ վերջին տեղեկությունների ստացման օրը որոշելու անհնարինության դեպքում անհայտ բացակայող ճանաչելու համար ժամկետի հաշվարկի սկիզբ է համարվում այն ամսին հաջորդող ամսվա մեկը, երբ ստացված են եղել բացակայողի վերաբերյալ վերջին տեղեկությունները, իսկ եթե հնարավոր չէ որոշել այդ ամիսը, ապա՝ հաջորդ տարվա հունվարի մեկը:

մանակավոր տեղավորման շուրջօրյա հաստատություններից: 3 ամսվա ընթացքում ՀՀ ոստիկանության տարածքային մարմնի ղեկավարը հայտնաբերված երեխայի ծնողներին (կամ ծնողին) հայտնաբերելու կամ չհայտնաբերելու մասին գրավոր տեղեկացնում է այն հաստատությանը, որտեղ գտնվում է երեխան: Նույն կարգի 23-րդ կետի համաձայն՝ մանկատանը տեղավորված երեխային ծնողներին են վերադարձնում նրանց դիմումի և ծնողների բնակության վայրի մարզպետարանի, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի եզրակացության հիման վրա: Երեխաների խնամքի և պաշտպանություն իրականացնող գիշերօթիկ հաստատություններում երեխաների տեղավորման կարգի 4-րդ կետի համաձայն՝ երեխային գիշերօթիկ հաստատությունում տեղավորելու համար երեխայի ծնողը կամ օրինական ներկայացուցիչը դիմում է երեխայի բնակության վայրի մարզպետարան, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարան: Դուրս գրման կարգը նույնն է, ինչ վերը նշվածը:

2004թ.-ի մարտի 4-ի N318-Ն ՀՀ Կառավարության որոշմամբ հաստատվել է պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցող՝ բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերը, որոնց մեջ ներառված են՝ մինչև 7 տարեկան երեխաները, մինչև 18 տարեկան հաշմանդամություն ունեցող երեխաները՝, մինչև 18 տարեկան ԱԾԽՄ երեխաները, և ԱԾԽՄ երեխաների թվին պատկանող 18-23 տարեկան անձինք, մինչև 8 տարեկան և 12 տարեկան երեխաները՝ մասնագիտացված ստոմատոլոգիական բժշկական օգնության մասով, մինչև 18 տարեկան՝ դիսպանսեր հսկողության տակ գտնվող երեխաները, մինչև 18 տարեկան միաձնող երեխաները, մանկատներում խնամվող անձինք:

Հատուկ հաստատություններում երեխաների տեղավորման գործընթացն ընդհանուր առմամբ ընթանում է առանց բարդությունների, բայց երեխաների դուրս բերումն այդ հաստատություններից բավական դժվար գործընթաց է: Եվ երբեմն ծնողը, ով իրավունք ունի իր երեխային վերցնել հաստատությունից դժվարությունների է հանդիպում: Եթե երեխան արդեն համարվել է առանց ծնողական խնամքի մնացած, ապա ծնողը նախևառաջ պետք է ապացուցի երեխայի հանդեպ իր իրավունքները, նոր միայն վերցնի: Իսկ եթե երեխան գտնվում է գիշերօթիկ դպրոցում, ապա ծնողներն առանց որևէ խոչընդոտի վերցնում են երեխաներին: Անգամ այն դեպքում, երբ հաստատության աշխատակիցը գիտակցում է, որ այդ ծնողի մոտ երեխային թողելը չի բխում երեխայի լավագույն շահերից, ինքն անմիջապես որևէ գործողություն կատարելու հնարավորություն չունի: Ինչպես նշվել է հարցազրույցի ժամանակ, դա պայմանավորված է այն հանգամանքով, որ «պետությունն իր վրա է վերցնում երեխային դատարանից և ու խնամելու պարտականությունը, բայց ծնողին թողնում է երեխայի նկատմամբ բոլոր իրավունքները»: Երբեմն ծնողն անգամ «շահարկում է» ծնող լինելու փաստը և խոչընդոտում է երեխային որդեգրելու կամ երեխայի շահերից բխող այլ գործողությունների իրականացումը:

Բժշկական հաստատությունում գտնվող երեխային վերցնելու առնչությամբ, գործնականում որևէ խնդիր չի առաջանում: Վիճակագրական տվյալների համաձայն ՀՀ-ում մահճակալների քանակը հիվանդ երեխաների համար 2011թ.-ին կազմել է 20300 երեխա, 2012թ.-ին՝ 20800 երեխա, 2013թ.-ին՝ 20600 երեխա⁸³:

Համապատասխան կենսամակարդակի ապահովում

ՀՀ ԸՕ-ի 68-րդ հոդվածի համաձայն՝ ծնողները պարտավոր են պահել իրենց երեխաներին: Երեխաներին ապրուստի միջոց տրամադրելու կարգն ու պայմանները ծնողները որոշում են ինքնուրույն: Ծնողները կարող են համաձայնություն կնքել իրենց երեխաներին պահելու մասին (այլմենտ վճարելու վերաբերյալ համաձայնություն) ՀՀ ԸՕ-ի 15-րդ գլխին համապատասխան: Եթե ծնողները ապրուստի միջոց չեն տրամադրում իրենց երեխաներին, ապա վերջիններիս պահելու համար միջոցները (այլմենտը) ծնողներից բռնագանձվում են դատական

⁸³ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանը թվերով - 2014. Կենսամակարդակ և սոցիալական ոլորտ, http://armstat.am/file/article/armenia_14_5.pdf, էջ 42:



կարգով: Պետությունը նախատեսում է աջակցության ծրագրեր, բայց ոչ բոլոր երեխաների համար: Այդ ծրագրերից կարող են օգտվել մանկատան սաները և շրջանավարտները և առհասարակ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված այլ անձինք:

Մասնավորապես «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի⁸⁴ 8-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական սոցիալական ծառայություններն են՝ խորհրդատվական օգնությունը, վերականգնողական օգնությունը, բնաիրային օգնությունը, կացարանով ապահովելը, խնամքը, իրավական օգնությունը, օրենքով սահմանված կենսաթոշակներ, նպաստներ և այլ դրամական վճարներ նշանակելը և վճարելը, օրենքով սահմանված զբաղվածության ծառայությունները և բժշկասոցիալական փորձաքննության բնագավառում ծառայությունները, օրենքով չարգելված այլ սոցիալական ծառայություններ: Այստեղ հարկ է նշել, որ թվարկված ծառայությունները տրամադրվում են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց, ում շարքին, ի թիվս այլոց, պատկանում են նաև ԱԾԽՄ երեխաները:

2014թ.-ի մարտի 6-ին ՀՀ Կառավարությամբ հաստատվել է երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը, երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակելու և վճարելու կարգը: Զուգահեռաբար գործում է նաև 2014թ.-ի հունվարի 30-ի ՀՀ Կառավարության մեկ այլ որոշում, որով սահմանվել է 2014թ.-ի ընտանեկան նպաստի, սոցիալական նպաստի, հրատապ օգնության, մինչև 2 տարեկան երախայի խնամքի, մինչև 2014թ.-ի հունվարի 1-ը ծնված երեխայի ծննդյան միանվագ նպաստների չափերը և մինչև 2014թ.-ի հունվարի 1-ը ծնված երեխայի ծննդյան միանվագ նպաստի նշանակման և վճարման կարգը:

Սոցիալական ծրագրերի իրականացումը ՀՀ-ում գործնականում ունի որոշ բարդություններ: Դրանք են՝ ոչ բոլորի համար հասանելի լինելու հանգամանքը, ֆինանսավորման բարդությունները, նպաստ կամ այլ աջակցություն ստանալու գործընթացի բյուրոկրատական լինելը և այլն:

Հարցազրույցների ընթացքում նշվեց, որ երբեմն նույն ծնողներն ունեն տեղեկատվության պակաս՝ երեխայի լավագույն շահերից ելնելով երեխայի կարիքները ճիշտ գնահատելու ու անհրաժեշտ կենսապայմաններով ապահովելու համար: Մասնակիցներից մի քանիսը նշեցին, որ պետությունը հոգ չի տանում երեխաների զարգացման համար, ամբողջությամբ այդ բեռը թողնելով ծնողների կամ նրանց փոխարինող անձանց վրա: Ավելին, մանկապարտեզներում հաստիքով հոգեբաններ չկան, իսկ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին երբեմն տեղավորում են հատուկ կարիքավոր երեխաների հաստատություն՝ ինչով խոչընդոտում են երեխայի նորմալ զարգացմանն ու ձևավորմանը:

ԱԾԽՄ երեխաների խնամքը կազմակերպելով կամ խնամակալության, կամ որդեգրման, կամ պետական հաստատությունում տեղավորելու, կամ խնամատար ընտանիքին հանձնելու միջոցով՝ պետությունը պետք է կարգավորի երկու կարևորագույն խնդիր՝ խնամող անձի ընտրությունը և խնամքի համար անհրաժեշտ միջոցների ապահովումը (սնունդ, հագուստ և այլն): Հայաստանում ոչ խնամակալության, ոչ որդեգրման դեպքում պետությունը որևէ աջակցություն չի տրամադրում, իսկ պետական հաստատությունում տեղավորելու կամ խնամատար ընտանիքին հանձնելու դեպքում աջակցում է՝ երեխային ապահովելով բոլոր կենսապահովման պայմաններով, իսկ խնամատար ընտանիքին վճարելով ամսական դրամական միջոցներ:

Երեխայի խնամքի կազմակերպման այս տիպն էլ բավականին հազվադեպ է հանդիպում, մինչդեռ ֆինանսական տեսանկյունից խնամատար ընտանիքներին աջակցելն ավելի նպատակահարմար է, քան հատուկ հաստատություններ պահելը:

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է եզրակացնել, որ պետությունը չի ապահովում այս հարցում ներգրավված դերակատարների հավասարությունը և չի ստեղծում նպաստավոր պայմաններ երեխաներին խնամակալության հանձնելու կամ որդեգրելու համար: Դրանով է նաև պայմանավորված երեխայի փաստացի խնամակալության իրականացումն առանց պատշաճ ձևակերպման, իսկ նման դեպքերի մասին բարձրաձայնվում է, երբ դրա անհրաժեշտությունն առաջանում է պետական կամ տեղական ինքնակառավարման որևէ մարմնի հետ առնչվելիս:

⁸⁴ Այս օրենքն ընդունվել է 2014թ.-ի դեկտեմբերի 17-ին, ուժի մեջ է մտել 2015թ.-ի հունվարի 1-ին:

3.2.2 Երեխայի պաշտպանություն. պաշտպանության հասրուկ միջոցներ

Փախստական երեխաներ

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝ ռազմական գործողությունների և այլ ընդհարումների հետևանքով բնակելի տարածությունից և անձնական գույքից զրկված փախստական երեխան ունի իր շահերի պաշտպանության իրավունք:

«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված 18 տարին չլրացած անչափահասը՝ ՀՀ տարածքում օրինական ներկայացուցիչ (ծնողներ (ծնող), խնամակալ, հոգաբարձու) չունեցող, ապաստան հայցող կամ փախստական երեխան է: Առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված անչափահասներն ունեն ապաստան հայցողների կամ փախստականների համար սահմանված նույն իրավունքները: Լիազոր մարմինը պետք է աջակցի առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված անչափահասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տեղավորմանը և խնամքի ապահովմանը, ինչպես նաև նրա՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր իրավունքների իրացմանը: Առանց ուղեկցողի անչափահաս ապաստան հայցողների կամ փախստականների հարցերի հետ առնչություն ունեցող, սույն օրենքի 32-րդ հոդվածով սահմանված բոլոր պետական մարմինները, հաշվի առնելով առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված անչափահաս ապաստան հայցողների առանձնահատուկ վիճակը, առավելագույնս ելնելով նրանց շահերից՝ իրենց իրավասությունների շրջանակներում պետք է աջակցեն նրանց:

ՀՀ Կառավարությունը՝ 2009թ.-ի նոյեմբերի 19-ի N1440-Ն որոշմամբ հաստատել է «Ապաստան հայցողներին ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորելու և կենսապահովման պայմաններ տրամադրելու կարգը»: ՀՀ ՄՊԾ դիմած ապաստան հայցողներին և ապաստան հայցողի ընտանիքի անդամներին լիազոր մարմինը տեղավորում է ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում, որտեղ նրանց տրամադրվում են կենսապահովման պայմաններ մինչև իրենց դիմումի վերաբերյալ վերջնական որոշում ընդունելը: Ապաստանի մերժում ստացած փախստականներին ՀՀ ՄՊԾ կարող է թույլատրել շարունակել բնակությունը կենտրոնում, մինչև նրանք կլքեն ՀՀ-ն կամ ապաստան կստանան:

Չնայած գործնականում որևէ դեպք առանց ուղեկցության՝ երեխային փախստական ճանաչելու վերաբերյալ չի եղել, բայց եղել են բազմաթիվ դեպքեր, երբ ընտանիքի որևէ անդամի ապաստան հայցելու և փախստական ճանաչվելու արդյունքում երեխան նույնպես ձեռք է բերել նման կարգավիճակ: ՀՀ ՄՊԾ-ն ապահովում է փախստականների, ներառյալ՝ երեխաների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը՝ ներգրավելով միջազգային և հասարակական կազմակերպություններին: Սիրիայից փախստականների մեծ ներհոսքի պատճառով ՀՀ ՄՊԾ-ն դիմել է ՄԱԿ-ի փախստականների գերագույն հանձնակատարի հայաստանյան ներկայացուցչին, որն աջակցել է այս հարցում, անգամ տրամադրվել են գումարներ՝ բնակարանների վարձակալությունն ապահովելու նպատակով: Կառավարության 2009թ.-ի նոյեմբերի 19-ի N1440-Ն որոշման համաձայն՝ եթե ապաստան հայցողը ճանաչվում է փախստական, ապա նա այդ որոշումը ստանալուց հետո պետք է ազատի կենտրոնում զբաղեցրած սենյակը: Գործնականում, քանի որ փախստական ճանաչված ապաստան հայցողն ի սկզբանե կարող է բնակության վայր չունենալ, նրան թույլատրվում է կարճատև մնալ կենտրոնում, այնուհետև նրան օգտագործման իրավունքով տրամադրում են առանձին բնակարան, որը նախկին հանրակացարանային համալիրի սենյակ է՝ բոլոր կոմունալ հարմարություններով (գտնվում է ք. Աբովյանում կամ ք. Երևանում):

2014թ.-ի հուլիսի 17-ի N 769-Ն ՀՀ Կառավարության որոշմամբ հաստատվել է ՀՀ միգրացիայի ոլորտը կանոնակարգող ՀՀ օրենսդրությունը՝ միջազգային չափանիշներին, այդ թվում՝ Եվրամիությունում և Միասնական տնտեսական տարածքում ընդունված մոտեցումներին և սկզբունքներին, համապատասխանեցնելուն ուղղված գործողությունների 2014-2016թթ. ծրագիրը, որն ունի նաև երեխաներին վերաբերող առանձին դրույթներ:

Կալանք և պատիժ

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ երեխային չի կարելի ձերբակալել, խուզարկել կամ կալանավորել այլ կերպ, քան սահմանված է օրենքով: Երեխայի ձերբակալման կամ կալանավորման մասին անհապաղ հայտնվում է ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչների: Ազատագրկման դատապարտված յուրաքանչյուր երեխա ունի օրենքով սահմանված կարգով ազատագրկման դատավճիռը բողոքարկելու իրավունք: Արգելվում է երեխային չափահասների հետ միասին կալանքի տակ պահել: ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում երեխային քրեական պատասխանատվության ենթարկելիս փաստաբանի (հոգեբանի, մանկավարժի) ներկայությունը հետաքննության, նախաքննության և դատաքննության ընթացքում պարտադիր է: Երեխան պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ծնողների կամ մերձավոր ազգականների դեմ: Արգելվում է որպես վկա ցուցմունքներ վերցնելու կամ սեփական հանցանքը խոստովանելու համար երեխայի նկատմամբ բռնության, սպառնալիքի և այլ ապօրինի գործողությունների կիրառումը:

ՀՀ քրեական օրենսգրքի 60-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ցմահ ազատագրկման չեն կարող դատապարտվել հանցանքը կատարելիս տասնութ տարին չլրացած անձինք, իսկ մահապատիժն առհասարակ բացակայում է մեր օրենսդրության մեջ: Ավելին, օրենսգիրքը տարբերակված մոտեցում է դրսևորում նաև որոշակի ժամկետով ազատագրկում նշանակելիս: ՀՀ ՔԿՕ-ի 68-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ անջատ են պահվում անչափահասները՝ չափահասներից, բացառությամբ սույն օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերի⁸⁵:

ՀՀ քր. դատ. օր.-ի 148-րդ հոդվածի համաձայն՝ հսկողության հանձնելն այն է, երբ անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի ծնողների, խնամակալների, հոգաբարձուների կամ փակ մանկական հիմնարկների վարչակազմի վրա, որտեղ նա պահվում է, պարտականություն է դրվում ապահովել կասկածյալի կամ մեղադրյալի պատշաճ վարքագիծը, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով նրա ներկայանալը և այլ դատավարական պարտականություններ կատարելը:

Անչափահասների ձերբակալության և կալանավորման պայմաններն էապես տարբերվում են չափահասների նույնանուն պայմաններից: Օրինակ՝ ձերբակալված կամ կալանավորված անչափահասները ապահովվում են անվճար հատուկ սննդով («Ձերբակալված կամ կալանավորված անձնաց պահելու մասին» ՀՀ օրենքի հոդված 19), ձերբակալված կամ կալանավորված անչափահասների համար ստեղծվում են բարելավված նյութակենցաղային պայմաններ և նրանք օգտվում են ամենօրյա՝ 2 ժամից ոչ պակաս տևողությամբ զբոսանքի իրավունքից, որի ընթացքում հնարավորություն է տրվում զբաղվել մարմնամարզությամբ (հոդված 27), անչափահասներին պատժախուց տեղափոխելը 5 օրից ավել չէ (հոդված 35) և այլն: Անչափահասների հետ տեսակցությունները քննարկվել են Կոնվենցիայի 9-րդ հոդվածը քննարկելիս:

Անչափահաս դատապարտյալներն ազատագրկման և կալանքի ձևով պատիժը և կալանավորումը՝ որպես խափանման միջոց, կրում են «Աքովյան» ՔԿՀ-ում: Չնայած անչափահաս դատապարտյալների պայմանները՝ մյուս դատապարտյալների պայմանների համեմատ բավական բարվոք են, դրանք չեն համապատասխանում միջազգային չափանիշներով այս կատեգորիայի դատապարտյալների համար կիրառվող պահանջներին: Մասնավորապես նշվել է, որ պետք է հնարավորինս ձգտել եվրոպական բանտային կանոններով նախատեսված պահանջների ներդրմանը ՀՀ-ում⁸⁶: Անչափահաս դատապարտյալներին ուղղելու համար

⁸⁵ Որոշակի ժամկետով ազատագրկման դատապարտված անչափահասը մինչև պատժի ժամկետը լրանալը պատիժը կրում է միևնույն ուղղիչ հիմնարկում, բայց ոչ ավելի, քան նրա քսանմեկ տարեկան դառնալը: Տասնութ տարին լրացած դատապարտյալի՝ բացասական վարքագիծ դրսևորելու դեպքում վերը նախատեսված առանձնահատկությունը չի գործում:

⁸⁶ Անչափահասների արդարադատությանը վերաբերող միջազգային չափանիշներն արտացոլված են Անչափահասների արդարադատության իրականացման ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոններում (Պեկինյան կանոններ), օրինազանցության կանխարգելման ՄԱԿ-ի ուղեցույցում (Ռիադի ուղեցույցը), և ազատագրկված անչափահասների պաշտպանության ՄԱԿ-ի կանոններում:

բավարար չեն այն միջոցները, որոնք ՀՀ ՔԿՕ-ի 16-րդ հոդվածի համաձայն կիրառվում են նաև չափահասների համար: Հարցազրույցների ընթացքում կարծիք հնչեց, որ երեխաների ուղղման համար պետք է հնարավորինս կիրառել մշակութային ու կրթական միջոցառումներ՝ էքսկուրսիաներ, այցելություններ թանգարաններ, թատրոն, սպորտային միջոցառումներ հասակակիցների հետ և այլն:

Այն, որ ազատագրվումը պետք է լինի բացառիկ միջոց անհերքելի է, բայց գործնականում դրա իրականացումը սահմանափակված է անչափահասների նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսված պատժատեսակներով: Մասնավորապես ՀՀ քրեական օրենսգրքի 86-րդ հոդվածի համաձայն անչափահասի նկատմամբ կարող են նշանակվել հետևյալ պատիժներից մեկը՝ տուգանք, հանրային աշխատանքներ, կալանք կամ որոշակի ժամկետով ազատագրվում: Ընդ որում, տուգանքը նշանակվում է անչափահասի ինքնուրույն վաստակի կամ այնպիսի գույքի առկայության դեպքում, որի վրա կարող է տարածվել բռնագանձում: Հանրային աշխատանքներ ու կալանք չի նշանակվում մինչև 16 տարեկան անչափահասների նկատմամբ, հետևաբար մինչև 16 տարեկան անչափահասի պարագայում դատարանները, չունենալով այլընտրանք, նշանակում են որոշակի ժամկետով ազատագրվումը, բայց երբեմն կիրառելով ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը, պատիժը պայմանականորեն չեն կիրառում՝ սահմանելով փորձաշրջան, որի կիրառումը կրում է ձևական բնույթ: Դրանով է նաև պայմանավորված պրոբացիայի ինստիտուտի ներդրման աշխատանքների իրականացումը ՀՀ-ում: Մասնավորապես՝ ՀՀ արդարադատության նախարարությունում ԱՄՆ դեսպանատան ֆինանսավորմամբ այժմ ընթանում են աշխատանքներ պրոբացիայի ինստիտուտի ներդրման ուղղությամբ: Իսկ դրա իրականացման իրավական հիմք է հանդիսանում ՀՀ նախագահի կարգադրությունը ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016թթ. ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ժամանակացույցը սահմանելու վերաբերյալ: Այդ ծրագրի 4.3 կետի համաձայն՝ ՀՀ արդարադատության նախարարության կառուցվածքում նախատեսվում է ստեղծել քրեակատարողական ծառայությունից անկախ և առանձին պրոբացիայի ծառայություն, որի համար պետք է մշակել պրոբացիայի ծառայության գործունեությունը կարգավորող իրավական ակտի նախագիծ և պրոբացիայի ծառայության աշխատակիցների շարունակական մասնագիտական ուսուցման համակարգ: Պրոբացիային բնորոշ մի շարք լիազորություններ իրականացնում են ՀՀ-ում քրեակատարողական ծառայության այլընտրանքային պատիժների կատարման բաժինը և սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող ստորաբաժանումները: Հաշվի առնելով ՀՀ ապագա քրեական օրենսգրքում պրոբացիայի ծառայության նախատեսումը՝ որպես հանցագործի ուղղման և վերաինտեգրման մեխանիզմ, կրկնահանցագործությունների բարձր աստիճանի դեմ պայքարի արդյունավետ միջոց, այսօր արդիական է այնպիսի կառույցի ստեղծումը, որն արդյունավետ կերպով կիրականացնի այդ գործառնությունները:

Պատերազմ և բռնի կոնֆլիկտներ

«Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ զինապարտությունը ՀՀ պաշտպանությանը մասնակցելու՝ քաղաքացիների սահմանադրական պարտականությունն է: Զինապարտներ են համարվում նախագորակոչային, զորակոչային տարիքի և պահեստազորում հաշվառված արական, ինչպես նաև զինվորական մասնագիտություն ունեցող կամ զինվորական ծառայություն անցած իգական սեռի քաղաքացիները: Քաղաքացիների զինապարտությունն ընդգրկում է՝ զինվորական հաշվառումը, զինվորական ծառայության նախապատրաստությունը, զորակոչը և զինվորական ծառայությունը և պահեստազորում գտնվելը: Զինվորական հաշվառումը նախագորակոչիկների (16-18 տարեկան), զորակոչիկների (18-27 տարեկան) և պահեստազորում գտնվող քաղաքացիների հաշվառման ու հանրապետության զորակոչային, վարժապետության և զորահավաքային ռեսուրսների վերլուծության պետական համակարգն է: ՀՀ-ում պարտադիր զինվորական ծառայության են զորակոչվում 18-ից մինչև 27 տարեկան արական սեռի զորակոչիկները և մինչև 35 տարեկան առաջին խմ-

բի պահեստազորի սպաները, ովքեր առողջական վիճակի պատճառով ճանաչվել են զինծառայության համար պիտանի՝ խաղաղ պայմաններում:

Չնայած երեխաներին օրենքով սահմանված կարգով չեն զորակոչում, բայց ՀՀ-ում գործում է «Փոքր Միեր» կրթահամալիրը, որը ստեղծվել է 2004թ.-ի նոյեմբերի 11-ի N 1602-Ն ՀՀ Կառավարության որոշմամբ: Այդ որոշման 12-րդ կետի համաձայն՝ կրթահամալիրի գործունեության առարկան հանրակրթական տարրական, հիմնական, միջնակարգ, ինչպես նաև ռազմագիտական, մասնագիտացված ու այլ կրթական ծրագրերի (այսուհետ՝ ոչ հանրակրթական ծրագրեր) իրականացումն է ու այդ ծրագրերին համապատասխան կրթահամալիրի սովորողների (հայկազունների) դաստիարակության ապահովումը: Իսկ նպատակն է համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված ու մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումը: Կրթահամալիր կարող են ընդունվել այն երեխաները, որոնց առողջությունը բավարարում է կրթահամալիրում սովորելու համար: Իգական սեռի երեխաների կրթության ու կենցաղի առանձնահատկությունները սահմանում է խորհուրդը: Իգական սեռի սովորողների քանակը սահմանափակ է, և այն սահմանվում է խորհրդի որոշմամբ: Կրթահամալիրում սովորողների ընդունելությունը կատարվում է մրցութային կարգով: Կրթահամալիր ընդունվելու համար պարտադիր է միայն երեխայի մեկ ծնողի կամ նրա մեկ օրինական ներկայացուցչի, ինչպես նաև երեխայի գրավոր համաձայնությունը:

Բացի «Փոքր Միեր» կրթահամալիրից ՀՀ-ում գործում է ՀՀ պաշտպանության նախարարության Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանը, որտեղ ընդունելությունը կատարվում է հիմնական կրթության 9-րդ դասարանի ծրագրի ծավալով: Փաստացի ՀՀ տարածքում երեխաներին զինված հակամարտություններում ներգրավելու կամ զինված հակամարտություններից երեխաների տուժելու դեպքերի մասին հայտնի չէ, բայց այն փաստը, որ 15 տարին չլրացած երեխաները կարող են ներգրավվել ռազմական վարժարանում կամ կրթահամալիրում որպես զինվորներ, պետք է վերանայվի:

Ջոհ դարձած երեխաների վերականգնում

Երեխաների ֆիզիկական կամ հոգեբանական վերականգնմանը և սոցիալական վերաինտեգրմանը վերաբերող առանձին իրավական ակտ գոյություն չունի: ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում է քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանությունը, բայց այն չի վերաբերում ֆիզիկական կամ հոգեբանական վերականգնմանը և սոցիալական վերաինտեգրմանը: Առանձին հանցագործությունների պարագայում, օրինակ՝ թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված երեխաներին այդպիսի աջակցություն տրամադրվում է⁸⁷: Քանի որ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների աջակցությունն արդեն քննարկվել է (Կոնվենցիայի հոդված 27-ի մեկնաբանությունը), այստեղ այն չի ներկայացվում:

Երեխաների վերականգնման և վերաինտեգրման որոշ հարցերին անդրադարձ է կատարվել նաև «Սեռական և ընտանեկան բռնության զոհերի ուղղորդման կարգի» նախագծում, բայց միասնական համապարփակ փաստաթուղթ, որն ուղղված կլինի երեխաների վերականգնմանն ու վերաինտեգրմանը, գոյություն չունի: Երեխաների՝ որպես հանցագործության զոհի, պաշտպանվածությունն առավել անմխիթար է ՀՀ արդի պայմաններում: Չնայած որոշ հանցագործությունների պարագայում՝ երեխայի թրաֆիքինգ կամ շահագործում, բռնաբարու-

⁸⁷ 2014թ.-ի դեկտեմբերի 17-ին ընդունված «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանվում է, որ ցանկացած զոհ և հատուկ կատեգորիայի զոհ ունի օրենսդրությամբ սահմանված կարգով աջակցություն և պաշտպանություն ստանալու իրավունք: Ջոհերի և հատուկ կատեգորիայի զոհերի պաշտպանության և աջակցության ձևերը, տեսակները, տևողությունը, չափերը որևէ կերպ չեն կարող փոխկապակցված կամ պայմանավորված լինել իրավապահ մարմինների կողմից ՀՀ օրենքով սահմանված կարգով իրականացվող գործողություններին նրանց մասնակցության հանգամանքով: Աջակցության տրամադրումն ապահովվում է ՀՀ ԱՍՀՆ-ի կողմից:

թյուն, սեռական այլ հանցագործություններ, երեխաների իրավունքները դեռ պաշտպանված են, ապա այլ հանցագործությունների պարագայում որևէ առանձնահատկություն նախատեսված չէ (չհաշված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծով նախատեսված որոշ առանձնահատկությունները):



ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագիծն արդեն իսկ ներառել է որոշ դրույթներ կամ ստանձնած պարտավորություններ, որոնք կիրառելի կլինեն նաև ՀՀ-ում, մասնավորապես՝ հոգեբանի ներգրավումն անչափահասի մասնակցությամբ քննչական գործողության կատարմանը, դատարանի նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ դատական նիստին հանրության ներկայացուցիչների և լրատվության միջոցների մասնակցությունը կամ նրանց մի մասին դատարանի որոշմամբ արգելելը, եթե դա անհրաժեշտ է ապահովելու անչափահասի իրավաչափ շահերի պաշտպանությունը, անչափահասին հարցաքննելը տեսահաղորդակցության տեխնիկական միջոցների օգտագործմամբ (տեսակապի միջոցով) և այլ հարցեր:

Որոշ կառույցների ներկայացուցիչների կարծիքով՝ զոհերի շահերի լավագույն պաշտպանության միջոց է հանդիսանում հանցագործի նկատմամբ խիստ պատիժ նշանակելը, ինչն արդարացված չէ և ցանկացած հանցագործության դեմ պայքարում պետք է համակցված կիրառվեն կանխարգելումը, պատիժը և աջակցությունը:

Անչափահասների արդարադատություն

ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ հոդվածի համաձայն՝ արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են այն կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով, իսկ 13-րդ հոդվածի համաձայն՝ արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն: Արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքը հետադարձ ուժ չունի:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործության համար կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քր. դատ. օր.-ով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Կասկածյալը կամ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Նրանց անմեղության ապացուցման պարտականությունը չի կարող դրվել պաշտպանության կողմի վրա: Մեղադրանքի ապացուցման և կասկածյալին կամ մեղադրյալին ի պաշտպանություն բերված փաստարկների հերքման պարտականությունը կրում է մեղադրանքի կողմը: Վերը նշված նորմերն ընդհանուր են և կիրառելի են նաև հանցանք կատարելու մեջ կասկածվող անչափահասների նկատմամբ:

ՀՀ քրեական օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ քրեական պատասխանատվության ենթակա է այն անձը, ում տասնվեց տարին լրացել է նախքան հանցանք կատարելը:



Այն անձինք, որոնց տասնչորս տարին լրացել է մինչև հանցանքը կատարելը, ենթակա են քրեական պատասխանատվության սպանության սահմանափակ թվով հանցագործությունների համար: Եթե անձը հասել է վերը նախատեսված տարիքի, սակայն մտավոր զարգացման մեջ հետ մնալու հետևանքով ընդունակ չի եղել ամբողջ չափով գիտակցել իր արարքի բնույթն ու նշանակությունը կամ ղեկավարել դա, ապա նա ենթակա չէ քրեական պատասխանատվության:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի համաձայն՝ քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, երբ հանցանքը կատարելու պահին կասկածյալը կամ մեղադրյալն անչափահաս է, իսկ 10-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք սույն օրենսգրքով նախատեսված կարգով իրավունք ունի ստանալ իրավաբանական օգնություն: Քրեական վարույթն իրականացնող մարմինը կարող է որոշում կայացնել կասկածյալին կամ մեղադրյալին անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու մասին՝ ելնելով նրա գույքային դրությունից:

Նույն օրենսգրքի 15-րդ հոդվածի համաձայն՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ քրեական դատավարության լեզվին չտիրապետող՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց պետական միջոցների հաշվին հնարավորություն է տրվում թարգմանչի օգնությամբ իրականացնել սույն օրենսգրքով սահմանված իրենց իրավունքները:

Երեխաների անձնական տեղեկությունների պահպանման հարցը նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածով, որի համաձայն՝ դատարանի նախաձեռնությամբ կամ դատավարության մասնակիցների միջնորդությամբ բացառիկ դեպքերում, եթե դա չի վնասի արդարադատության իրականացմանը կամ չի հանգեցնի դատավա-

րության հրապարակայնության սկզբունքի չարդարացված սահմանափակմանը, դատարանի որոշմամբ դռնփակ դատական քննություն կարող է անցկացվել նաև՝

- 1) անձնական և ընտանեկան կյանքին, անձի պատվին և արժանապատվությանն առնչվող հանցագործությունների վերաբերյալ գործերով,
- 2) անձի սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործերով,
- 3) քրեական դատավարությանը մասնակցող անձանց կամ նրանց մերձավոր ազգականների պաշտպանության անհրաժեշտության դեպքում:

Անչափահասների արդարադատության մասին առանձին օրենսդրություն ՀՀ-ում դեռ գոյություն չունի: Անչափահասների արդարադատությանը վերաբերող դրույթներ սահմանվում են ՀՀ քրեական օրենսգրքով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, ՀՀ ՔԿՕ-ով, ինչպես նաև այլ օրենքներով: Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին 2014թ.-ի փետրվարի 27-ի N303-Ն ՀՀ Կառավարության որոշման 50-րդ կետի համաձայն՝ անչափահասների վերաբերյալ քրեական գործերով օրենսդրորեն պետք է նախատեսել գաղտնիության պահպանման լրացուցիչ երաշխիքներ, քանի որ գործող մեխանիզմները բավարար չեն: Երեխայի անձնական կյանքը հարգելու իրավունքի ապահովումը կամ իրագործումը և դռնփակ դատական քննությունների անցկացումը պետք է հստակեցվի: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 169-րդ հոդվածի համաձայն՝ վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել անձնական և ընտանեկան կյանքին վերաբերող գաղտնիքի պահպանման՝ օրենքով նախատեսված միջոցներ: Վարույթի ընթացքում չպետք է կամայականորեն հավաքվեն, պահվեն, օգտագործվեն կամ տարածվեն անձի անձնական կամ ընտանեկան կյանքին վերաբերող տեղեկություններ: Վարույթն իրականացնող մարմնի պահանջով վարույթային գործողությունների մասնակիցները պարտավոր են չհրապարակել նշված տեղեկությունները, որի համար նրանցից վերցվում է ստորագրություն: Անձնական կամ ընտանեկան կյանքի առավել զգայուն հարցերին վերաբերող ապացույցները վարույթի շահագրգիռ մասնակցի պահանջով հետազոտվում են դռնփակ դատական նիստում: Չնայած իրականացված գործողություններին, անչափահասների մասնակցությամբ դատավարությունների ժամանակ դեռ հանդիպում են խնդիրներ:

Անչափահասներին ազատազրկման ենթարկելը ձևավորում է «հանցագործի» ինքնություն: Նրանք սովորում են հանցագործության հնարքներ, խոսում են հանցագործների ժարգոնով և ընտելանում են հանցագործների մշակույթին, որն ամենայն հավանականությամբ կամրապնդի անչափահասի սեփական ընկալումն իբրև հանցագործի: Երբ նրանք մեկ անգամ իրենց ընկալում են որպես հանցագործ, ինչպես նաև հանցագործ են ճանաչվում լայն հասարակության կողմից, նրանց համար ավելի դժվար է լինում հետագայում փոխվել և հարմարվել դպրոցական և ընտանեկան կյանքին: 2012-2013թթ.-ին անչափահասների նկատմամբ պատիժների վիճակագրությունն է. 2013թ.-ին ազատազրկման է դատապարտվել 69 անչափահաս⁸⁸, որոնցից 44-ի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, այլ պատիժներ կիրառվել է 14 անչափահասի նկատմամբ, համաներման ակտ կիրառվել է 15 անչափահասի նկատմամբ: 2012թ.-ին ազատազրկման է դատապարտվել 76 անչափահաս⁸⁹, որոնցից 52-ի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, այլ պատիժներ կիրառվել են 11 անչափահասի նկատմամբ: Համաներման ակտ չի կիրառվել որևէ անչափահասի նկատմամբ⁹⁰:

⁸⁸ 69 անչափահասներից 8-ը դատապարտվել են մինչև 1 տարի ժամկետով, 8-ը՝ 1-2 տարի ժամկետով, 18-ը՝ 2-3 տարի ժամկետով, 26-ը՝ 3-5 տարի ժամկետով և 9-ը՝ 5-8 տարի ժամկետով:

⁸⁹ 76 անչափահասներից 8-ը դատապարտվել են ազատազրկման մինչև 1 տարի ժամկետով, 12-ը՝ 1-2 տարի ժամկետով, 13-ը՝ 2-3 տարի ժամկետով, 39-ը՝ 3-5 տարի ժամկետով, 3-ը՝ 5-8 տարի ժամկետով և 1-ը՝ 8-10 տարի ժամկետով:

⁹⁰ http://court.am/?l=lo&id=50&cat_id=0&page_num=4

Առաջարկություններ

Երեխայի իրավունքներն ու շահերը պաշտպանելու, երեխայի դերակատարումն իրեն վերաբերող հարցերի վերաբերյալ ուժեղացնելու ու երեխայակենտրոն քաղաքականություն մշակելու նպատակով՝ ներկայացվում ենք հետևյալ առաջարկությունները.

- Եվ օրենքներով, և այլ իրավական ակտերով, և ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպերով ամրագրված է, որ խնամակալության և հոգաբարձության մարմինն օրենքով սահմանված կարգով պարտավոր է անցկացնել երեխայի կյանքի հետազոտություն, բայց այն չպետք է հանդիսանա լոկ վարչարարություն, և բովանդակային տեսանկյունից պետք է լինի ամբողջական, օբյեկտիվ, փաստերի վրա հիմնված ու պատճառաբանված:
- Երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողովի կարգավիճակը վերանայման կարիք ունի, մասնավորապես՝ պետք է հստակեցնել հանձնաժողովի գործառույթները՝ վերջինիս օժտելով պարտադիր իրավական ուժ ունեցող որոշումներ կայացնելու լիազորությամբ:
- Երեխայի պաշտպանության եռաստիճան համակարգի արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ է ուժեղացնել տեղական, համայնքային մակարդակում երեխայի պաշտպանությունը՝ համապատասխան մասնագետներով, ֆինանսական միջոցներով, պայմաններով ապահովելով հանձնաժողովներին և նրանց ընձեռնելով լիազորությունների առավել լայն շրջանակ:
- Երեխայի իրավունքներին և դրանց պաշտպանությանը վերաբերող դրույթներ առկա են տարբեր իրավական ուժ ունեցող և տարբեր բնույթի իրավական ակտերում: Նման «ոլորտային ցրվածությունն» անդրադառնում է ինչպես այդ իրավունքների ընկալման, այնպես էլ դրանց իրագործման ու պաշտպանության վրա: Հետևաբար, ՀՀ-ի համար ցանկալի կլինի ունենալ ոլորտային մեկ միասնական և կոդիֆիկացված փաստաթուղթ:
- Գործնականում հանդիպում են դեպքեր, երբ ծնողը պատիժ է կրում ՔԿՀ-ում կամ կալանավորված է, իսկ նրա երեխան գտնվում է պետական հաստատությունում: Քանի որ երկուսն էլ գտնվում են պետական վերահսկողության ներքո, հետևաբար պետությունը պետք է ապահովի այդ անձանց տեսակցության կազմակերպումը՝ դրանով ապահովելով երեխայի՝ ծնողի հետ շփվելու իրավունքը: Այդ տեսակցությունները պետք է կազմակերպվեն այդ հաստատության և ուղղիչ հիմնարկի կողմից համատեղ:
- ՀՀ Կառավարության 1998թ.-ի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշման համաձայն՝ 16 տարին չլրացած ՀՀ քաղաքացուն ՀՀ քաղաքացու անձնագիր տրվում է ըստ ցանկության՝ մեկ ծնողի կամ օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա: Հետևաբար մեկ ծնողն իր ցանկությամբ որոշում է երեխայի՝ ՀՀ սահմանն օրինական հատելը, բայց այս պարագայում մյուս ծնողը փաստացի կարող է անիրազեկ լինել երեխայի տեղափոխման մասին: Հետևաբար, համաձայնելով, որ երեխայի ազատ տեղաշարժի իրավունքը կարևոր է և անհարկի չպետք է սահմանափակվի, միևնույն ժամանակ պետք է մշակել համապարփակ մեխանիզմներ երեխային հարկ եղած դեպքում վերադարձնելու և մյուս ծնողի իրավունքներն ապահովելու համար:
- Պետք է մշակել երեխայի նկատմամբ բռնության կանխարգելման ու բռնության ենթարկված երեխաների աջակցության կարգը՝ ներգրավելով ոչ միայն պետական լիազորված մարմիններին (ՀՀ ԱՍՀՆ, ՀՀ ԿԳՆ, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ ոստիկանություն և այլն), այլև երեխաների պաշտպանության ոլորտի հասարակական կազմակերպություններին: Մասնավորապես այդ կարգը պետք է վերաբերի բռնության ենթարկված ցանկացած երեխայի, իսկ բացառություններ պետք է նախատեսվեն բռնության որոշ դրսևորումների, օրինակ՝ թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված երեխաների համար՝ ելնելով այդ բռնության առանձնահատկություններից և հաշվի առնելով այլ իրավական ակտերով դրա կարգավորված լինելը: Առաջարկվող փաստաթուղթը կարող է ունենալ բռնության ենթարկված երեխայի ուղղորդման կարգի տեսք:
- Հարկ է վերացնել երեխաների նկատմամբ կիրառվող ոչ մանկավարժական բնույթի դաստիարակչական մեթոդները, ինչպիսիք են՝ «անկյուն կանգնեցնելը», «ականջ քաշելը», «ծեծելը»,

«մութ տեղում պահելը» և այլն: Այդ նպատակով անհրաժեշտ է և՛ ծնողներին, և՛ երեխաների խնամքով ու դաստիարակությամբ զբաղվող այլ անձանց անվճար բաժանել տեղեկատվություն դաստիարակչական մեթոդների մասին, իսկ մասնագետներին՝ վերապատրաստել:

- ՀՀ-ում պետք է քայլեր ձեռնարկել «չգրանցված խնամակալություն» երևույթը վերացնելու ուղղությամբ՝ նպաստավոր պայմաններ ստեղծելով, որպեսզի փաստացի խնամակալ հանդիսացող անձը շահագրգռված լինի խնամակալությունը գրանցելու, և դա հարկադրված չիրականացնի միայն այն դեպքում, երբ դրա կարիքն է առաջանում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների հետ առնչվելիս:
- ՀՀ օրենսդրությամբ՝ մինչև 2 տարեկան երեխա ունեցող մայրը ստանում է համապատասխան նպաստ, բայց մինչև երեխայի 3 տարին լրանալը վերջինիս խնամքի համար կարող է գտնվել արձակուրդում: Հետևաբար կարգավորված չէ 2-ից 3 տարեկան երեխա ունեցող կանանց ապրուստի, հետևաբար նաև երեխայի ապրուստի պայմանները: Այդ մեկ տարվա կտրվածքով կինը ստանում է օրենսդրորեն ամրագրված իրավունք երեխային խնամելու, բայց դրա իրականացման որևէ մեխանիզմ իրավական ակտերում նախատեսված չէ: Հետևաբար, եթե չլինի որևէ օգնող անձ (տատիկ, մայր, քույր, դայակ և այլն), երեխայի ապրուստը հոգալիս բարդություններ կառաջանան:
- Գիշերօթիկ հաստատությունները պետք է վերափոխել այլ ծառայությունների, քանի որ այնտեղ պահվող երեխաների մոտ 80%-ն ունի գոնե մեկ ծնող, ինչն ակնհայտ վկայում է, որ երեխայի խնամքի համար անհրաժեշտ նվազագույն պայմանների առկայության, ֆինանսական և այլ աջակցության դեպքում, ծնողը կիրականացնի իր պարտականությունները՝ առանց երեխային այդ հաստատություն հանձնելու:
- Երեխայի խնամքի վերաբերյալ՝ նրա շահերից բխող որոշում կայացնելը պետք է կատարվի ներառելով երեխայի օրինական ներկայացուցիչներին, ում տրամադրված կլինի իր իրավունքները պաշտպանելու համար անհրաժեշտ ժամանակ և հնարավորություն՝ ներառյալ մասնագիտական աջակցությունը: Որոշում կայացնելիս դատարանը կամ վարչական մարմինը պետք է առաջնորդվի փաստերի ճշգրիտ գնահատմամբ, ծրագրավորի երեխայի խնամքն ու դաստիարակությունը և ձևավորի կոնկրետ երեխայի լավագույն շահերից բխող կոնկրետ մեխանիզմներ, որոնց կազմմանն անհրաժեշտ է որակավորում ունեցող մասնագիտական թիմի ներգրավումը: Այդ ամենին զուգահեռ երեխայի հետ պետք է իրականացվեն բացատրական, խորհրդատվական այցեր՝ հաշվի առնելով երեխայի, նրա ծնողների կամ խնամակալների կարողությունները:
- Անհրաժեշտ է վերանայել ծնողական իրավունքներից զրկելու կամ դրանք սահմանափակելու հիմքերը: Օրինակ՝ «կատարել են իրենց երեխաների դեմ դիտավորյալ հանցագործություն» հիմքը սպառիչ և ամբողջական չէ: Այս հիմքը պետք է ներառի նաև երեխաների դեմ անզգույշ հանցագործություններ կատարելը:
- Պետք է խստացնել որդեգրման դեպքում իրենց վրա դրված ծնողական պարտականությունները կատարելուց խուսափող անձանց այդ իրավունքներից զրկելու հիմքերը՝ խախտումների առավել վաղ փուլերում որդեգրումը դադարեցնելով: Օրինակ՝ պարտադիր չէ, որ որդեգրողները դաժանաբար վարվեն որդեգրված երեխայի հետ, այլ բավարար է բռնության ցանկացած դրսևորումը, կամ պարտադիր չէ, որ նրանք համարվեն քրոնիկ ալկոհոլամոլությամբ տառապող, անգամ պարբերաբար դրանց չարաշահումը՝ առանց քրոնիկ բնույթի, պետք է բավարար լինի որդեգրումը վերացնելու համար:
- Պետությունը, ապահովելով երեխայի խնամքի կազմակերպմանը ներգրավված դերակատարների հավասարությունը, պետք է ստեղծի նպաստավոր պայմաններ երեխայի խնամքն ընտանիքում կազմակերպելու համար, ավելին՝ հնարավորինս նպաստի երեխայի վերադարձին ընտանիք, եթե երեխայի ընտանիքից բաժանման հիմնական պատճառները հարթվել կամ վերացվել են: Միայն այդ քայլից հետո պետությունը պետք է կազմակերպի երեխայի խնամքի այլ ձևերը:
- Պետք է սահմանափակել կամ կրճատել ժամանակավորապես մանկատուն բերված երեխային այնտեղ պահելու ժամկետը, որից հետո երեխան կհամարվի առանց ծնողական

խնամքի մնացած և դա հնարավորություն կընձեռի կազմակերպել երեխայի խնամքի այլընտրանքային տարբերակ:

- Պետությունը պետք է ոչ միայն մշակի որակի համապատասխան ցուցիչներ երեխաներին խնամակալության հանձնելու, որդեգրելու, խնամքի հաստատություն հանձնելու կամ և խնամատար ընտանիք տեղավորելու համար, այլ նաև իրականացնի մշտադիտարկում, արդյունավետության հաշվառում, վերլուծություն և դրա հիման վրա ոլորտի բարելավմանն ուղղված առաջարկությունների ներկայացում:
- Չնայած անչափահաս դատապարտյալների պայմանները՝ մեծահասակ դատապարտյալների համեմատ բավական բարվոք են, դրանք չեն համապատասխանում միջազգային չափանիշներով այս կատեգորիայի դատապարտյալների համար կիրառվող պահանջներին: Այսինքն, ՀՀ-ն պետք է հնարավորինս ձգտի Եվրոպական բանտային կանոններով նախատեսված պահանջների ներդրամանը ՀՀ քրեակատարողական համակարգում: Անչափահաս դատապարտյալներին ուղղելու համար բավարար չեն այն միջոցները, որոնք ՀՀ ՔԿՕ-ի 16-րդ հոդվածի համաձայն կիրառվում են նաև չափահասների համար: Երեխաների ուղղման համար պետք է հնարավորինս կիրառել մշակութային ու կրթական միջոցառումներ՝ էքսկուրսիաներ, այցելություններ թանգարաններ, թատրոն, սպորտային միջոցառումներ հասակակիցների հետ և այլն:
- ՀՀ-ում պետք է քրեականացնել անօրինական որդեգրումը, խնամատար ընտանիքի անդամի կողմից իր պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, խնամատար ընտանիքի անդամի կողմից լիազորությունները չարաշահելը, խնամակալության հանձնաժողովների անդամի կողմից իր լիազորությունները չարաշահելը, անչափահասներին զինված հակամարտություններում ներգրավելը, ինչպես նաև այլ՝ հասարակական բարձր վտանգավորություն ունեցող գործողությունները, որոնք կարող են տեղ գտնել երեխաների խնամքի և դաստիարակության ոլորտում:
- Անհրաժեշտ է վերանայել երեխայի առևանգմանը, մասնավորապես՝ միջազգային առևանգմանը վերաբերող օրենսդրությունն ու ձևավորված դատական պրակտիկան՝ քրեական պատասխանատվության ենթարկելով նաև այն ծնողներին, ովքեր մյուս ծնողի կարծիքն անտեսելով կամ կամքին հակառակ երեխային տեղափոխել են արտասահման կամ չեն վերադարձրել այնտեղից:
- Անհրաժեշտ է վերանայել ՀՀ քրեական օրենսգրքի 170-րդ հոդվածի կիրառման պրակտիկան: Քանի որ այդ հոդվածում ուղղակիորեն ամրագրված է, որ ծնողի կողմից երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելը համարվում է հանցագործություն, դատական պրակտիկան պետք է ձևավորել այն ուղղությամբ, որ ՀՀ ԸՕ-ի 11-րդ գլխում ամրագրված՝ երեխային դաստիարակելու ծնողների պարտականություններից որևէ մեկի չկատարումը պետք է հանգեցնի պատասխանատվության, մասնավորապես՝ բացասական հետևանքի դեպքում:
- «Փոքր Միեր» կրթահամալիրում և ՀՀ ՊՆ Մ. Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանում որպես սովորող ներգրավվում են 15 տարին չլրացած երեխաները, ինչը հակասում է Կոնվենցիայի 38-րդ հոդվածին և վերանայման կարիք ունի:
- Անհրաժեշտ է վերանայել անչափահասներին քրեական պատասխանատվության ենթարկելու համակարգը: Պետք է զարգացնել քրեական պատասխանատվության այլընտրանքային միջոցների կիրառումը՝ դրա համար անհրաժեշտ օրենսդրական բազա ստեղծելով և դրա նյութական հիմքը տրամադրելով: Ավելին, ՀՀ արդարադատության նախարարության կողմից ներդրվող պրոբացիայի ինստիտուտը պետք է հատուկ կարևորի երեխայի լավագույն շահերն ու ապահովի անչափահասների արդարադատության հիմնական սկզբունքների կիրառումը ՀՀ-ում:
- ՀՀ-ում անհրաժեշտ է կիրառելի դարձնել երեխայի հայացքների նկատմամբ հարգանքի և պատշաճ ուշադրության սկզբունքը, և իր հայացքները ձևակերպելու ունակ երեխայի համար պետք է ապահովված լինեն դրանք ազատորեն արտահայտելու իրավունքն այն բոլոր դեպքերում, որոնք վերաբերում են երեխային, նրա հետաքրքրություններին, իրա-

վունքներին, շահերին և նախասիրություններին: Սեփական հայացքների ազատ արտահայտման իրավունքն ամրագրված է ՀՀ ԸՕ-ում, որտեղ նախատեսվում է 10-ամյա տարիքային շեմը միայն որոշակի դեպքերում, ինչն արդարացված չէ: Հետևաբար առաջարկում ենք ՀՀ ԸՕ-ում կատարել փոփոխություն, այն է՝ վերացնել տարիքային այդ սահմանափակումը, սեփական հայացքների ազատ արտահայտման իրավունքը վերապահել՝ հաշվի առնելով երեխայի մտավոր և գիտակցական ունակությունները և կոնկրետ իրավիճակի առանձնահատկությունները:

- Երեխաների իրավունքների պաշտպանության ներպետական մեխանիզմն առավել կատարյալ դարձնելու համար արդյունավետ կլինի երեխայի իրավունքների պաշտպանի ինստիտուտի կամ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակում առանձին բաժնի ստեղծումը՝ հիմնված անկախության, ինքնավարության, անկողմնակալության, թափանցիկության, արդարության, հավասարության, պրոֆեսիոնալիզմի և բազմակարծության սկզբունքների վրա: Այն պետք է պայմանավորված լինի ավելի ուղղակի և ակտիվ մոտեցմամբ, իրագործվի հանրային մարմինների, լրատվամիջոցների և քաղաքացիական հասարակության հետ համագործակցության միջոցով:

3.3 ԵՐԵՒԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

3.3.1 Երեխաների՝ նախադպրոցական կրթություն սրանալու իրավունքը

Ըստ Նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015թթ. ռազմավարական ծրագրի նախատեսված է նախադպրոցական կրթության հասանելիությունը Հայաստանում մինչ 2017թ. հասցնել 90%-ի: Սակայն Ազգային վիճակագրական ծառայության տվյալների համաձայն, 2013թ. ՀՀ-ում գործել է 697 համայնքային, գերատեսչական և ոչ պետական նախադպրոցական հաստատություն (ՆԴՀ), որոնցից 491-ը՝ մանկապարտեզ, 179-ը՝ մսուր-մանկապարտեզ, 27-ը՝ դպրոցահեն նախադպրոցական կրթության կենտրոններ կամ վաղ մանկության զարգացման կենտրոններ: Այս թվերին պետք է ավելացնել նաև միջազգային կազմակերպությունների ջանքերով հիմնադրված նախադպրոցական կրթության կենտրոնները: Նախադպրոցական կրթության հասանելիությանն ուղղված պետական և միջազգային բազմաթիվ ծրագրեր են իրականացվում: Համաշխարհային Բանկի վարկային ծրագրի շրջանակներում ԿԳՆ ԾԻԳ-ի ծրագրերի արդյունքում 2010-2014թթ.-ին հիմնադրվել են 290 դպրոցահեն նախադպրոցական կենտրոններ, որտեղ ներգրավված է շուրջ 8000 երեխա: 2010-2014թթ.-ին 12 դպրոցահեն նախադպրոցական կենտրոններ հիմնադրվել են «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության կողմից:

Ըստ ԱՎԾ տվյալների ՆԴՀ-ների ընդհանուր քանակից 648-ը համայնքային ենթակայության է, 5-ը՝ գերատեսչական և 44-ը՝ ոչ պետական: Երեխաների ընդգրկվածությունը ՆԴՀ-ներում (0-5⁹¹ տարեկան երեխաների թվաքանակից) կազմել է 27.3%՝ քաղաքային համայնքներում՝ 35.2%, գյուղական համայնքներում՝ 14.3%: Մեկ խմբում երեխաների միջին թվաքանակը կազմել է 28 երեխա, տեղերի փաստացի զբաղվածությունը՝ 86.6%: Միջին հաշվով մեկ ՆԴՀ հաճախել է 99 երեխա, մեկ մանկավարժին բաժին է ընկել 12 երեխա: Ամենախոցելի գյուղաբնակ նախադպրոցական տարիքի երեխաներն են, քանի որ գյուղական համայնքներում նախադպրոցական կրթություն տրամադրող կենտրոններ հիմնականում չեն գործում⁹²: Ուսուցիչ-երեխա հարաբերակցությամբ Հայաստանը գտնվում է բարվոք դիրքերում, քանի որ համաձայն միջազգային ստանդարտների ուսուցիչ-երեխա օպտիմալ հարաբերակցությունը 1/15 է⁹³:

⁹¹ Չնայած նախադպրոցական կրթության տարիք է համարվում 2-6, ԱՎԾ տվյալները ներկայացված են 0-5 տարիքային խմբի համար:

⁹² ԱՎԾ, ՀՀ սոցիալական վիճակը 2013:

⁹³ SABER, ECD, Armenia, 2012.



ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի ջանքերով Հայաստանում մշակվել են նախադպրոցական կրթության պետական ստանդարտներ, որոնք սահմանում են կրթության բովանդակությունը: Համաձայն այդ ստանդարտների նախադպրոցական կրթության լեզուն պետք է լինի երեխաների մայրենի լեզուն: Այս տեսանկյունից էթնիկ փոքրամասնությունները գտնվում են խոցելի դիրքերում, քանի որ նախադպրոցական կենտրոնների լեզուն հիմնականում կամ հայերեն է կամ ռուսերեն:

Միջազգային բազմաթիվ ծրագրեր են իրականացվում Հայաստանում ուղղված նախադպրոցական կրթության կենտրոնների հիմնադրմանը, սակայն դրանց շարունակականությունը հարցականի տակ է, քանի որ հաճախ միջազգային ծրագրերի շրջանակներում ներդրված կենտրոնների հետագա շահագործումը, մնալով համայնքային ֆինանսավորման վրա, ռիսկի տակ է գտնվում:

Նախադպրոցական տարիքի հաշմանդամություն ունեցող երեխաների համար բացակայում են հարմարեցված նախադպրոցական կենտրոնները: Սակայն ըստ ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի կողմից իրականացված հետազոտության տվյալների, 2-6 տարիքային խմբում հաշմանդամություն ունեցող երեխաների 28%-ը հաճախում կամ հաճախել է մանկապարտեզ⁹⁴:

3.3.2 Երեխաների՝ դպրոցական կրթություն սրանալու իրավունքը

Ընդհանուր հանրակրթական դպրոցը (1-9 դասարաններ) Հայաստանում պարտադիր է, յուրաքանչյուր երեխա կարող է ուսումնական հաստատությունն ընտրել ըստ իր, իր ծնողների կամ իր օրինական ներկայացուցչի ցանկության:

⁹⁴ Խոսքը ներառման մասին է, ՄԱԿ-ի ՄԱՆԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ, 2012, էջ 35:

Կրթության իրավունքի իրականացման ուղղությամբ ընդունվել են օրենքներ, որոնց շատերը համապատասխանում են միջազգային լավագույն չափանիշներին: Սակայն ոլորտը կարգավորող օրենքների կիրառումն ապահովող իրավական ակտերն ու դրանցով սահմանվելիք համապատասխան մեխանիզմները հաճախ ժամանակին չեն ընդունվում կամ չեն ապահովում այդ օրենքների պատշաճ կիրառումը: Չի գործում իրականացվող ծրագրերի հստակ գնահատման, մշտադիտարկման կամ ծախսերի և ստացված արդյունքների գնահատման համակարգ:

Ըստ Այլընտրանքային զեկույցի՝ հակասություններ կան նաև գործող օրենքների, օրինակ՝ «Կրթության մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 1999թ.-ին) և «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 2005թ.-ին) միջև: Վերջին օրենքի նպատակահարմարությունը բազմիցս քննարկվել է կրթության ոլորտում աշխատող ՀԿ-ների և միջազգային կառույցների հետ, քանի որ այն սահմանափակում է ներառական կրթության գաղափարը՝ սահմանելով միայն հաշմանդամության որոշակի խմբերին պատկանող երեխաների համար կրթության տրամադրման առանձնահատկությունները: Մինչդեռ ներառական կրթությունը հանրակրթության մեջ բոլոր երեխաների մասնակցության ապահովումն է՝ անկախ նրանց կրոնից, սոցիալական ծագումից, կարգավիճակից և ազգային պատկանելիությունից⁹⁵:

2013-2014 ուսումնական տարում հանրապետությունում գործել են հանրակրթական ծրագրեր իրականացնող 1434 դպրոցներ, աշակերտների թվաքանակը կազմել է 360 446 մարդ, որի 47.9%-ը աղջիկներ են: Դպրոցներում աշակերտների համախառն ընդգրկվածության ցուցանիշը⁹⁶ կազմել է 87.9%, ընդ որում, տարրական դպրոցում այն կազմել է 94.1%, հիմնական դպրոցում՝ 92.6%, ավագ դպրոցում՝ 74.0%: Ավագ դպրոցում աշակերտների համախառն ընդգրկվածության ցուցանիշը ցածր է, քանի որ հիմնական դպրոցն ավարտելուց հետո համապատասխան տարիքի բնակչության 18.2%-ն ուսումը շարունակել է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:

Ինչպես նշվեց, ընդհանուր հանրակրթական դպրոցը (1-9 դասարաններ) Հայաստանում պարտադիր է, սակայն երեխաների կրթության իրավունքը ոչ միշտ է ապահովված: 2005 թվականի ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի ուսումնասիրության համաձայն⁹⁷ 18,000 երեխա դուրս է մնացել դպրոցից, 2007-ին այդ թիվը հասել է 7,000-ի: Սա նաև հետևանք է նրա, որ դպրոցից բացակայության թուլատրելի սահմանը 240 ժամից իջել է 180-ի, այժմ նաև՝ 160 ժամի: Այսինքն՝ դպրոցից դուրս մնացողների թվի նվազումը կրթության մատչելիության մակարդակի բարձրացման մասին չի վկայում:

2011թ.-ին Հայաստանի Հելսինկյան կոմիտեն իրականացրել է մշտադիտարկում, որի արդյունքները փաստում են, որ Հայաստանում շատ երեխաների կրթության իրավունքը ապահովված չէ, քանի որ այդ երեխաները չեն ստանում պարտադիր կրթություն: «Նույնիսկ հանրային ծառայողները հաճախ տեղյակ չեն այդ երեխաների մասին»⁹⁸: Սոցիալապես խոցելի շատ երեխաներ դուրս են մնում պարտադիր կրթությունից:

Ըստ ԱՎԾ տվյալների դպրոցից հեռացած երեխաների ավելի քան 50%-ը հեռացել է սոցիալական պայմանների պատճառով:

Դպրոցից դուրս մնացած երեխաների կամ պարտադիր կրթություն չստացողների թվի վերաբերյալ հավաստի և իրական տվյալներ ստանալու համար պետք է հաշվի առնել նաև այն

⁹⁵ Այլընտրանքային զեկույց, ՄԱԿ-ի երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի համաձայն ներկայացվող Հայաստանի Հանրապետության երրորդ եվ չորրորդ պարբերական համատեղ զեկույցների, 2012թ., 45 կազմակերպությունների համատեղ զեկույց, էջ 30:

⁹⁶ Կրթահամակարգում համախառն ընդգրկվածության ցուցանիշ՝ տվյալ կրթահամակարգի դասարանների աշակերտների ընդհանուր թվաքանակի տոկոսային մասնաբաժինն է մշտական բնակչության նույն կրթահամակարգի համար պաշտոնապես սահմանված տարիքային խմբի թվաքանակի նկատմամբ:

⁹⁷ Երկրի բնութագիր (2010), կրթություն Հայաստանում, տես http://www.unicef.org/ceecis/Armenia_2010.pdf

⁹⁸ Հայաստանում երեխայի իրավունքների իրավիճակի վերլուծություն, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, 2013, էջ 27:

հանգամանքը, որ քանի որ հանրակրթական դպրոցները ֆինանսավորվում են աշակերտների թվով, ապա հաճախ կոնկրետ դպրոցում հաշվառված երեխաների թիվը կարող է հաճախող երեխաների թվից ավելի լինել: Այս խնդիրը նաև առկա է ներառական և հատուկ դպրոցներում, հատկապես եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար դպրոցը ստանում է 3-4 անգամ ավել ֆինանսավորում, քան կրթության առանձնահատուկ պայմանների կարիք չունեցող երեխաների համար:

Կրթության իրավունքը սահմանում է, որ բոլոր երեխաները պետք է հնարավորություն ունենան ստանալու պարտադիր անվճար, այլև որակյալ կրթություն՝ ուղղված անհատականության, ֆիզիկական և մտավոր ունակությունների զարգացմանը:

Իրավիճակի վերլուծության շրջանակներում իրականացված հարցազրույցները կրթության ոլորտի ներկայացուցիչների հետ ցույց տվեցին, որ այսօրվա հանրային կրթությունը ոչ թե երեխաների անհատական ունակությունների, այլ նրանց սերտելու հմտության զարգացմանն է ուղղված:

2005-2009 թվականների ՄԱԿ-ի «Հայաստան. Հազարամյակի զարգացման նպատակների առաջընթացի զեկույցում» նշվում է, որ երկրի հանրակրթության ոլորտում առկա են զգալի թերություններ: Աշակերտները դպրոց հաճախելու փոխարեն ստիպված են փնտրել մասնավոր ուսուցիչների ընդունելության չափանիշներին համապատասխանելու և կրթական հաջորդ փուլին անցնելու նպատակով (<< Կառավարություն և ՄԱԿ-ի հայաստանյան աշխատակազմ, 2010թ.):

Ինչպես նշված է 2012թ. իրականացված «Դպրոցական Կրթության հասանելիությունը» հաշվետվության մեջ, << դպրոցական կրթության համակարգում իրականացվել են մի շարք բարեփոխումներ, որոնք ինչ-որ չափով վնաս հասցրեցին կրթական առօրյա գործառնություններին: «Կարելի է նշել բարեփոխումների երեք հիմնական ոլորտ՝ դպրոցական ուսումնառության տարիների երկարաձգում, գնահատման համակարգի փոփոխություն և առանձին ավագ դպրոցների ստեղծում»: Հին համակարգը ենթադրում էր դպրոցական ուսումնառության 10 տարի: 2001թ.-ին այն փոխվեց դառնալով 11 տարի, և 2006թ.-ին այն դարձավ 12 տարի: (<< Ազգային ժողով, 1999թ.): Ներկայիս ազգային համընդհանուր կրթության ուսումնական ծրագիրը տասներկուամյա հիմնական ծրագիր է, որը բաղկացած է պարտադիր տարրական (1-ից 4 դասարաններ), պարտադիր միջնակարգ (5-ից 9 դասարաններ), և բարձր միջնակարգ կամ ավագ դպրոց (10-ից 12 դասարաններ) կրթական փուլերից: Մասնագիտական և տեխնիկական-մասնագիտական դպրոցները հանդիսանում են ավագ դպրոցների այլընտրանք (UNESCO, 2011թ.): Մեկ այլ խոշոր փոփոխությունը դպրոցական կրթության ոլորտում անցումն է 5-ից 10-ը բալանոց գնահատման համակարգին, որն ուժի մեջ մտավ 2006թ.-ից, և որի նպատակն է բարելավել աշակերտների գնահատման արդյունքների ճշգրտությունն ու իսկությունը (<< Կառավարություն և ՄԱԿ-ի հայաստանյան աշխատակազմ, 2010թ.): Ըստ փորձագետների, գնահատման նոր համակարգը իսկապես հնարավորություն է տալիս առավել ճկուն և տարբերակված մոտեցում ցուցաբերել երեխաներին գնահատելիս, սակայն ուսուցման գործընթացի բարելավման և երեխաների անհատական ունակությունների զարգացման տեսանկյունից առավել հասցեական կարող է լինել ձևավորող գնահատումը, ինչը բացակայում է գնահատման համակարգից:

Ամենավերջին փոփոխությունը դպրոցական կրթական համակարգում ավագ դպրոցների ստեղծումն է որպես առանձին դպրոցներ, որոնք համախմբում են տարբեր դպրոցների աշակերտներին, ինչը խնդրահարույց է երեխաների ինտեգրման, նոր միջավայրին հարմարվելու տեսանկյունից:

Կրթության որակի վրա ազդող մեկ այլ կարևոր գործոն է դպրոցների նյութատեխնիկական ապահովվածությունը: Չնայած բազմաթիվ դպրոցների վերանորոգման ծրագրերին և դպրոցները արդիական սարքավորումներով ապահովելու ջանքերին, տարբեր դպրոցների ֆիզիկական պայմանները խնդրահարույց են: Գրեթե բոլոր դպրոցներում անվանապես առկա համակարգիչները գտնվում են փակված սենյակներում, իսկ աշակերտները պարզապես

չեն խրախուսվում դրանք օգտագործելու համար: Լաբորատորիաներում սարքավորումների պակասը խոչընդոտում է դասավանդվող առարկան պատշաճ հասկանալուն⁹⁹:

Առավել խոցելի են այս առումով ներառական դպրոցները: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց (ԿԱՊԿՈՒ) կրթության մասին օրենքը բավականին անորոշ ձևակերպում է տալիս ՆԴ-ների ֆիզիկական հարմարեցվածության չափանիշներին: Խոսքը անհրաժեշտ տարածքների, ենթակառուցվածքների մասին է, որոնց բովանդակային կողմը չի նշվում: Ներառական կրթության արդյունավետության գնահատմանն ուղղված հետազոտության շրջանակներում ընտրանքային 34 ՆԴ ֆիզիկական հարմարեցվածության գնահատման արդյունքները ցույց են տվել, որ ֆիզիկական պայմանների տեսանկյունից ուսումնասիրված 34 ՆԴ-ներին կարելի է դասել խիստ թերհագեցվածների շարքին¹⁰⁰: ՆԴ-ները ապահովված են միայն մուտքում թեքահարթակով և ճաշարանով, իսկ հարմարեցված դասարանները, սանհանգույցները, սպորտդահլիճները բացակայում են առհասարակ:

Դպրոցական կրթության մեկ այլ կարևոր բաղադրիչ՝ դասագրքերը, ևս հաճախ հանդիսանում են կրթության որակի վրա ազդող կարևորագույն գործոն: Ինչպես նախկին հետազոտությունները, այնպես էլ ոլորտի ներկայացուցիչները փաստում են դասագրքերի ծանրաբեռնվածության, հակասական տեղեկատվություն պարունակելու մասին¹⁰¹:

Երեխաների կրթության իրավունքն ապահովող կարևորագույն ռեսուրս են ուսուցիչները: Ըստ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական տվյալների՝ ուսուցիչ-աշակերտ միջին հարաբերակցությունը 1-ին 11 է¹⁰², սակայն պետք է անդրադառնալ ուսուցչական կազմի որակին և որակի ապահովմանը: Չնայած որ ներդրվել է ուսուցիչների ատեստավորման համակարգը, այնուամենայնիվ այդ համակարգը հնարավորություն չի տալիս վատ արդյունքներ ունեցող ուսուցիչներին բացահայտելու և նրանց աշխատանքից հեռացնելու: Իրականում ատեստավորումը՝ վերապատրաստմանը ուսուցչի մասնակցությունը և տեսական գիտելիքների առկայությունը հավաստող վկայական է: Դա ուսուցչի՝ դասարանում նոր մեթոդներով աշխատելու կարողությունը հավաստող փաստաթուղթ չէ:

Վերապատրաստումները դեռևս ուսուցիչների մասնագիտական զարգացման միակ ձևն են: Անցկացվել են ուսուցիչների բազմաթիվ վերապատրաստման ծրագրեր՝ առարկայական չափորոշիչների, ուսուցման նոր մեթոդների, գնահատման, տեղեկատվական տեխնոլոգիաների գծով, մարդու իրավունքների, երեխայի իրավունքների վերաբերյալ: Սակայն այդ վերապատրաստումներից հետո ուսուցիչները բավարար աջակցություն չեն ստանում նոր գիտելիքներն ու հմտությունները դասապրոցեսում կիրառելու նպատակով: Հետազոտությանը մասնակցած ուսուցիչների 37%-ը համարում է, որ իրենց անհրաժեշտ են վերապատրաստումներ՝ աշակերտների հետ հաղորդակցվելու հմտությունների զարգացման ուղղությամբ:¹⁰³

Ներառական դպրոցներում կարևոր խնդիր է համարվում ԿԱՊԿՈՒ երեխաների հետ անմիջականորեն աշխատող բազմամասնագիտական թիմի անդամների մասնագիտական պատրաստվածությունը: Դպրոցի ներառական կարգավիճակ ստանալուն հաջորդում են ուսուցիչների, բազմամասնագիտական թիմի անդամների վերապատրաստումները: Գոյություն չունի ընդհանուր մոտեցում բազմամասնագիտական թիմի պարտադիր կազմի և անդամների գործառնությունների վերաբերյալ: Մասնագետի աշխատանքի նկարագրությունը կամ առնվազն պարտականությունների սահմանը չի նկարագրվում: Նման կարգավորումների բացակայու-

⁹⁹ «Դպրոցական կրթության հասանելիություն» հետազոտական ուսումնասիրություն, Թրփանճեանի անվան հասարակական հետազոտությունների կենտրոն, Հայաստանի ամերիկյան համալսարան, 2012, էջ 55:

¹⁰⁰ Ներառական կրթության արդյունավետության գնահատում, Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն, Երևան, 2013, էջ 8:

¹⁰¹ Ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության գնահատումը Հայաստանում հանրակրթության բարեփոխումների համատեքստում, «Բարև» ՀԿ, Երևան, 2013, էջ 7:

¹⁰² ԱՎԾ, ՀՀ սոցիալական վիճակը 2013թ.-ին:

¹⁰³ Ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության գնահատումը Հայաստանում հանրակրթության բարեփոխումների համատեքստում, «Բարև» ՀԿ, Երևան, 2013, էջ 6:

թյան արդյունքում, թե՛ բազմամասնագիտական թիմի կազմը, թե՛ պարտավորությունների ընկալումը տարբերվում է ոչ միայն մարզից մարզ, այլև դպրոցից՝ դպրոց¹⁰⁴:

Կրթության իրավունքի իրացման վրա ազդող գործոն է նաև դպրոցի կառավարումը, որն այժմ իրականացվում է կոլեգիալ մարմնի՝ դպրոցի կառավարման խորհրդի կողմից: Սակայն հաճախ այդ խորհուրդների գործունեությունը կրում է ձևական բնույթ, մասնակիցների ընտրությունը իրականացնում է դպրոցի տնօրենը՝ չպահպանելով թափանցիկության սկզբունքը: Ձևական բնույթ են կրում նաև աշակերտական խորհուրդները, որոնց գործունեությունը սահմանափակվում է արտաուսումնական միջոցառումներ կազմակերպելով միայն: Աշակերտները ոչ միշտ են տեղյակ աշակերտական խորհուրդների գործառնությունների իրական շրջանակի մասին, հաճախ ուսուցիչները միջամտում են աշակերտական խորհուրդների գործունեությանը՝ առաջադրելով խորհրդի նախագահ, որոշելով գործունեության ուղղությունները: Աշակերտական ինքնակառավարման մարմիններում աշակերտների ներգրավումն ուղղված է աշակերտների քաղաքացիական կրթությանը և մասնակցությանը դպրոցի կյանքում՝ նրանց մոտ քաղաքացիական արժեքների, հմտությունների ձևավորմանը, սակայն իրականում քաղաքացիական կրթությունը աշակերտները չեն ստանում պայմանավորված վերոնշյալ հանգամանքներով, բացի այդ ոչ միշտ են համապատասխան ուսուցիչներ դասավանդում հասարակագիտական առարկաները: Քաղաքացիական կրթություն երեխաները հնարավորություն ունեն ստանալու նաև այլ առարկաների շրջանակներում դասավանդման մեթոդների կիրառման միջոցով՝ խմբային աշխատանք, բանավեճեր, քննադատական մոտեցում: Սակայն ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, հաճախ հանրակրթական դպրոցներում ինտերակտիվ մոտեցումների կիրառումը կրում է ինքնանպատակ, ձևական բնույթ և խիստ պայմանավորված է ուսուցչի հանգամանքով՝ որոշ ուսուցիչներ են միայն գրագետորեն կիրառում դասապրոցեսի խնդիրներին համապատասխան մեթոդներ, մեծամասամբ ուսուցիչները կիրառում են ավանդական մեթոդներ՝ սահմանափակելով դասարանի բոլոր երեխաների հավասար ներգրավումը դասապրոցեսին, ինչպես նաև դասը կառուցելով դասարանի բարձր առաջադիմություն ունեցող մեկ-երկու աշակերտների շուրջ:

Քաղաքացիական կրթությանն ուղղված ծրագրեր իրականացվում են տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների կողմից՝ ՍԻՎԻՏԱՍ, «Սեյվ դը չիլդրեն», «Վորլդ Վիժն»: ՍԻՎԻՏԱՍ կազմակերպության կողմից 2008-2014թթ.-ին վերապատրաստվել են 1000 հասարակագիտության ուսուցիչներ, որոնցից յուրաքանչյուրը շուրջ 15 աշակերտների հետ իրականացրել է ՔԱՂԱՔԱՑԻ նախագիծը՝ հատուկ մեթոդաբանություն ուղղված երեխայի մոտ քաղաքացիական արժեքների, գիտելիքների, հմտությունների ձևավորմանը:

Կրթության իրավունքի մեկ այլ բաղադրիչ է աղետների ռիսկերի նվազեցման (ԱՌՆ) կրթության իրականացումը Հայաստանում, որին ներգրավված են հասարակական և միջազգային կազմակերպություններ: ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը և «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպությունները իրականացնում են ծրագրեր հանրակրթական և հատուկ դպրոցներում՝ ուղղված ԱՌՆ կրթությանն ու պատրաստվածությանը: Ինչպես նշված է «Աղետների ռիսկերի նվազեցման կրթության իրականացումը Հայաստանում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների կարիքների և իրավունքների տեսանկյունից» գրքում, հանրակրթության բովանդակությունը սահմանող փաստաթղթերում՝ չափորոշիչներում և ծրագրերում բավարար չափով և ուղղակիորեն չեն արտացոլվում ԱՌՆ կրթության հարցերը, մասնավորապես չկա միասնական հայեցակարգ և մեթոդաբանություն¹⁰⁵:

Աշակվել են ձեռնարկներ ուսուցիչների համար ԱՌՆ կրթության վերաբերյալ¹⁰⁶:

¹⁰⁴ Ներառական կրթության արդյունավետության գնահատում, Երևան, 2013, էջ 9:

¹⁰⁵ Աղետների ռիսկերի նվազեցման կրթության իրականացումը Հայաստանում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների կարիքների և իրավունքների տեսանկյունից, Երևան, 2013, էջ 34:

¹⁰⁶ ՀՀ կրթության և գիտության նախարարություն, հանրակրթություն, աղետների ռիսկի նվազեցման կրթություն, <http://www.edu.am/index.php?menu1=9&menu2=528&arch=0>

3.3.3 Խոցելի խմբերի երեխաների կրթությունը

Երեխաների կրթության իրավունքը սահմանում է կրթություն ստանալու հավասար հնարավորություններ բոլոր երեխաների համար: Անդրադառնանք խոցելի որոշ խմբերի և հասկանանք, որքանով է նրանց կրթության իրավունքը իրացվում Հայաստանում:

Հաշմանդամություն ունեցող երեխաներ

Հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության իրավունքը սահմանվում է ՀՀ «Կրթության մասին» և «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց մասին» օրենքներով, ինչպես նաև համընդհանուր ներառման գաղափարախոսությամբ, ըստ որի մինչև 2022թ.-ին բոլոր դպրոցները պետք է դառնան ներառական: Այժմ Հայաստանում գործում է 139 ներառական դպրոց՝ ապահովելով ՀՀ բոլոր մարզերը, սակայն ոչ հավասարաչափ բաշխմամբ: Նույնիսկ հաշվի առնելով ՀՀ մարզերի ոչ հավասարաչափ բաշխումն ըստ բնակչության, ամեն դեպքում անհավասարաչափ են ներառական դպրոցների բաշխումն ըստ մարզերի՝ Արագածոտն, Արարատ, Արմավիր մարզերում առկա են երեքական ներառական դպրոց: Համաձայն երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016թթ. ռազմավարության՝ 2012թ.-ին ՀՀ ներառական դպրոցներում սովորել է 2000 ԿԱՊԿՈՒ երեխա, չնայած որ ԿԱՊԿՈՒ երեխաների ընդգրկվածության վերաբերյալ տվյալներն ամբողջական չեն: Քանի որ ԿԱՊԿՈՒ երեխաների բացահայտման համակարգը և ներառական կրթությունը դեռևս համատարած ներդրված չեն, հնարավոր չէ միարժեքորեն ասել թե այդ երեխաների որ մասն է կրթությունից դուրս մնում: Բացի այդ, համայնքներում խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովները ի պաշտոնե պետք է հայտնաբերեն ԿԱՊԿՈՒ երեխաներին և ապահովեն նրանց կրթությունը, իրականացնեն մշտադիտարկում: Սակայն այս ինստիտուտը հասարակական հիմունքների վրա հիմնված լինելու հետևանքով, ոչ միշտ է կատարում իր ողջ գործառույթները:

Բացի ԿԱՊԿՈՒ երեխաների հաճախումը, գոյություն ունեն նաև այլ խնդիրներ նրանց իրավունքների իրացման ճանապարհին: Ուսուցիչների մի մասը ԿԱՊԿՈՒ երեխաների նկատմամբ կանխակալ և կարծրատիպային վերաբերմունք ունեն: Որոշ դեպքերում առարկայական ուսուցիչները ԿԱՊԿՈՒ երեխաներին ընկալում են որպես անընդունակ, հիվանդ երեխաների, որոնց հետ անիմաստ է ժամանակ ծախսել, քանի որ ոչ մի լուրջ գիտելիք չեն կարող ընկալել¹⁰⁷:

Հաշմանդամություն ունեցող երեխաները կրթությունը շարունակում են ստանալ նաև հատուկ դպրոցներում. թվով 23 պետական հատուկ դպրոց է գործում: Չնայած պետական ծրագրերը հոչակում են հատուկ դպրոցների բեռնաթափման, նրանցում աշակերտների քանակի նվազման մասին, այնուամենայնիվ դրանք դեռ շարունակում են գործել: Մի շարք հետազոտություններ վկայակոչում են այնտեղ երեխաների իրավունքների ոտնահարումը՝ բռնության դեպքերը երեխաների նկատմամբ, անհատական ունակությունների զարգացմանն ուղղված ոչ պրոֆեսիոնալ մոտեցումը, մեկուսացումը հասարակությունից:

Հաշմանդամություն ունեցող յուրաքանչյուր 3 երեխայից 1-ն է հաճախում կամ հաճախել մանկապարտեզ: Գյուղական համայնքներում այս ցուցանիշը (23%) գրեթե կրկնակի ցածր է քաղաքների համեմատությամբ (44%): Հաստատություններում գտնվող հաշմանդամություն ունեցող երեխաները կրկնակի խոցելի վիճակում են գտնվում, ինչի մասին են փաստում հետազոտությունները՝ «Մանկատներում բնակվող հաշմանդամություն ունեցող երեխաները գրեթե դուրս են մնում ընդհանուր հիմնական կրթությունից: Յուրաքանչյուր 20 երեխայից միայն 1-ն է հաճախում ընդհանուր հանրակրթական դպրոց (5%), 5-ը հաճախում են հատուկ դպրոցներ (23%), իսկ 14-ը բացարձակապես դպրոց չեն հաճախում (72%)»¹⁰⁸:

¹⁰⁷ Ներառական կրթության արդյունավետության գնահատում, Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն, 2012:

¹⁰⁸ Խոսքը ներառման մասին է, UNICEF, էջ 15:

Սոցիալապես անապահով (աղքատ) երեխաներ

Սոցիալապես անապահով երեխաները խոցելի են կրթության հասանելիության տեսանկյունից՝ դպրոցից դուրս մնացած երեխաների ցուցանիշը հասնում է 35 %-ի¹⁰⁹:

Դպրոցահասակ երեխաների հետ անցկացված հարցումների արդյունքները վկայում են այն մասին, որ աղքատության և դպրոցում առաջադիմության միջև որոշակի կապ գոյություն ունի: Ցածր միջին գնահատական ունեցող աշակերտները տանը չեն կենտրոնանում իրենց դասերի վրա և ավելի պակաս ժամանակ են ունենում տնային աշխատանքների վրա ծախսելու համար¹¹⁰:


Հաստատություններում գտնվող երեխաներ (գիշերօթիկ դպրոցներ, խնամքի և դաստիարակության գիշերօթիկ հաստատություններ, մանկատներ, հատուկ դպրոցներ)

2014թ. դրությամբ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության տակ գործող երեխաների խնամքի և պաշտպանության հաստատություններում գտնվում է 1481 երեխա, որից դպրոցահասակ երեխաները՝ 74% են կազմում, իսկ նախադպրոցական տարիքի երեխաները՝ 14%: Դպրոցահասակ երեխաների միայն 77%-ն է ստանում կրթություն հանրակրթական ծրագրերով, որից՝ 76%-ը հաճախում է ընդհանուր հանրակրթական դպրոց, իսկ 19%-ը՝ հատուկ հանրակրթական դպրոց:

Նախադպրոցական տարիքի երեխաները կրթություն ստանում են հաստատություններում, սակայն ոչ միշտ է նրանց ցուցաբերվում որակյալ կրթություն:

Էթնիկ փոքրամասնություններ

Ըստ 2011թ.-ի մարդահամարի տվյալների՝ Հայաստանում մինչև 19 տարեկան 16480 ազգային փոքրամասնության ներկայացուցիչ կա, ինչը ներկայացված է ստորև՝ Սանդղակ 1-ում:



Սանդղակ 1. 0-19 տարեկան էթնիկ փոքրամասնությունների բաշխումը

Վիճակագրական շատ քիչ տեղեկություններ են հասանելի դպրոց չհաճախող երեխաների մասին: Հատկապես դժվար է ստանալ տվյալներ բաղդատված ըստ տարիքի, սեռի, բնակության վայրի, էթնիկ ծագման, կրոնական պատկանելիության եւ սոցիալ-տնտեսական իրավիճակի: ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների հանձնաժողովը Հայաստանի երրորդ եւ չորրորդ համակցված պարբերական զեկույցի նախապատրաստման համար ենթակա խնդիրների ցանկում (2012թ.), ՀՀ Կառավարությունից պահանջել է նման մանրամասն տվյալներ¹¹¹: Սակայն, ամենայն հավանականությամբ, նման տվյալներ ուղղակի գոյություն չունեն: Միաժամանակ և՛

¹⁰⁹ Հայաստանում Երեխայի իրավունքների իրավիճակի վերլուծություն, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, 2013:

¹¹⁰ «Դպրոցական կրթության հասանելիություն» հետազոտական ուսումնասիրություն, Թրփանճեանի անվան հասարակական հետազոտությունների կենտրոն, Հայաստանի ամերիկյան համալսարան, 2012, էջ 43:

¹¹¹ CRC/C/ARM/Q/3-4, էջ 3:

Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովը (ՌԵԱՀԿ) և ՄԱԿ-ի երեխաների իրավունքների հանձնաժողովը Հայաստանին վերաբերող իրենց նորացված փաստաթղթերում նշում են, որ դպրոց չհաճախող երեխաների թիվը բավականին մեծ է:

Օրենքի հետ առնչություն ունեցող երեխաներ¹¹²

ՀՀ օրենսդրությունը չունի հստակ քաղաքականություն, զարգացման ամրագրված ուղղություններ անչափահաս իրավախախտ անձանց ուղղման ու վերականգնման վերաբերյալ՝ որպես ինստիտուցիոնալ մոտեցում: Հատկապես հատկանշական է անչափահաս իրավախախտների կրթության ուղղությամբ իրավական կարգավորումների բացակայությունը և թերությունները: Որևէ իրավական ակտով չեն նախատեսվում կոնկրետ մեխանիզմներ ու քայլեր անչափահաս կալանավորվածների և դատապարտյալների կրթության կամ մասնագիտական կրթության կազմակերպման ուղղությամբ:

Անչափահաս դատապարտյալները գտնվում են Աբովյան քրեակատարողական հիմնարկում, որտեղ օրենքով սահմանված կարգով անչափահասները ստանում են պարտադիր հանրակրթական կրթություն և նախնական մասնագիտական կրթություն (հյուանություն, գյուղմեխանիկա, էլեկտրասարքավորումների մասնագետ): Ընդ որում անչափահասների քանակի և ռեսուրսների սակավության պատճառով պարտադիր կրթությունը երեխաները ստանում են կոմպլեկտավորված դասարաններում՝ մի քանի դասարանի անչափահաս դատապարտյալներ սովորում են միևնույն դասարանում: Ինչպես փաստում են հետազոտության արդյունքները, հիմնարկի տնօրինությունը դատապարտյալին այս կամ այն դասարան հրամանագրում է ըստ դատապարտյալի հայտարարության, թե որ դասարանում է սովորել մինչ ազատազրկվելը: Չեն գնահատվում դատապարտյալի կրթության կարիքները, հաշվի չի առնվում նրա նախկին առաջադիմությունը: Բացի այդ, մասնակցությունը դասապրոցեսին կրում է ձևական բնույթ՝ ներկա ստանալու համար¹¹³:

3.3.4 Երեխաների մասնակցությունը մշակութային կյանքին

ՀՀ մշակույթի նախարարությունը երեխաների գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության բնագավառում միասնական քաղաքականություն իրականացնելու նպատակով մշակել և ՀՀ Կառավարության հաստատմանն է ներկայացրել գեղարվեստական կրթության հայեցակարգը:

Համաձայն ՀՀ օրենսդրության՝ արտադպրոցական դաստիարակության նպատակը սովորողների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմաններ ստեղծելն է և նպատակաուղղված է նրանց հոգևոր, գեղագիտական, ֆիզիկական զարգացմանը, ռազմահայրենասիրական դաստիարակությանը, բնապահպանական և կիրառական գիտելիքների ձեռքբերմանը: Արտադպրոցական դաստիարակությունն իրականացվում է մանկապատանեկան ստեղծագործական և գեղագիտական կենտրոնների, երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցների, ակումբների, պատանի հայրենասերների, տեխնիկների, բնասերների և տուրիստական կայանների, մարզադպրոցների, առողջարարական ճամբարների և արտադպրոցական դաստիարակություն իրականացնող այլ կազմակերպությունների միջոցով:

Համաձայն վիճակագրական ծառայության տվյալների՝ 2013-2014 ուսումնական տարում հանրապետությունում գործել են երաժշտական, արվեստի, գեղարվեստի և մանկապատանեկան ստեղծագործական 226 դպրոց և կենտրոն՝ ընդգրկելով բոլոր մարզերը, սակայն ոչ հավասարապես:

¹¹² Օրենքի հետ գործ ունեցող երեխաները, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ:

¹¹³ Անչափահաս ազատազրկվածների կրթությունը և մասնագիտական ուսուցումը, «Սոցիալական արդարություն» ՀԿ, 2015:

2013-2014 ուսումնական տարում երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներում և մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններում սովորել է 47822 աշակերտ (65.6%-ը՝ աղջիկ), որոնց 70.3%-ը՝ վճարովի (73.3%-ը՝ աղջիկ): Այս առումով պետք է նկատել, որ տղա երեխաների մասնակցությունն առավել ցածր է:

2013/2014 ուսումնական տարում փառատոնների և մրցույթների մասնակցել է 1919 երեխա, որից շուրջ 70%-ը՝ աղջիկ:

Հիմնադրվել են դպրոցական ֆիլիարմոնիա, տիկնիկային թատրոններ, սակայն երեխաների ներգրավումը դրանցում իրական և խորը ուսումնասիրության կարիք ունի:

Հայաստանում գոյություն ունեն պետական և ոչ պետական բազմաթիվ արտադպրոցական ուսումնական հաստատություններ: Ընդ որում ՀՀ ԿԳՆ ենթակայությամբ գործում են 8 պետական արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություններ, որոնց աշխարհագրական տարածումը բավականին սահմանափակ է՝ Երևան, Տավուշ: Գումարային հաշվով այդ հաստատություններում ուսանում է մոտ 4500 սան՝ ըստ պաշտոնական տվյալների¹¹⁴:

Գեղարվեստական կրթության մատչելիության ապահովման նպատակով ՀՀ Կառավարության 2007թ.-ի հոկտեմբերի 11-ի N 1167-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային նվագարանների գծով ուսուցման ծրագիրը: Ուսման վարձավճարների փոխհատուցում ՀՀ 2009-2011թթ.-ին ստացել են 144 դպրոցների 2443 սովորողներ:

Արտաուսումնական ծրագրեր իրականացվում են հասարակական և միջազգային կազմակերպությունների կողմից, սակայն դրանց մասին հավաստի վիճակագրական տվյալները բացակայում են, մասնավորապես՝ հաճախող երեխաների սեռատարիքային, մարզային բաշխումը:

Երեխաների ժամանցի, մշակութային կյանքին մասնակցելու ոչ պետական կենտրոններում ներգրավման մասին ևս հավաստի տվյալներ չկան:

Ինչպես ներկայացված է այլընտրանքային զեկույցում երեխաների գեղարվեստական կրթության բնագավառում վերջին տարիներին զգալի դրական տեղաշարժեր են գրանցվել: Նախ բարձրացել է համայնքների կողմից երիտասարդների ու երեխաների շրջանում մշակույթի, արվեստի, սպորտի զարգացման համար միջոցների հատկացման կարևորության գիտակցումը, ավելացել են նաև գեղարվեստական կրթության զարգացմանը, երիտասարդական հաղորդաշարերի և մրցույթների, միջոցառումների կազմակերպմանն ուղղված պետական ծրագրերը: Սակայն դեռևս կան խնդիրներ: Ընդհանուր առմամբ, դպրոցներում և համայնքներում գրադարանները գտնվում են անմխիթար վիճակում, առկա գրականությունը հիմնականում ունի 20-30 տարվա վաղեմություն: Դպրոցներում մինիմալ ֆիզիկական պայմաններն ապահովված են միջոցառումներ կազմակերպելու համար՝ բեմ, մարզադահլիճներ: Սակայն դրանք ամենամյա կրկնվող միջոցառումներ են, որոնք չեն բավարարում երեխաների հետաքրքրությունները¹¹⁵:

3.3.5 Երեխաների՝ նախնական և միջին մասնագիտական կրթություն ստանալու իրավունքը

2013-2014 ուսումնական տարում հանրապետությունում գործել են նախնական մասնագիտական (արհեստագործական) ծրագիր իրականացնող 45 պետական ուսումնական հաստատություններ, որոնցից 25-ը՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) և 20-ը՝ միջին մասնագիտական: Ուսումնառությունն իրականացվել է հիմնական և միջնակարգ կր-

¹¹⁴ ՀՀ կրթության եվ գիտության նախարարության ենթակայությամբ գործող պետական արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություններ, տես <http://www.edu.am/DownloadFile/6102arm-CANK.pdf>

¹¹⁵ Այլընտրանքային զեկույց:

թության հիմքի վրա: Ուսանողների թվաքանակը կազմել է 7448, որոնց 24.1%-ը աղջիկներ են: Անվճար ուսուցման համակարգում սովորել է ուսանողների 95.6%-ը, իսկ վճարովի՝ 4.4%-ը: Ուսանողների համախառն ընդգրկվածության ցուցանիշը կազմել է 7.2% (կանանց՝ 3.7%, տղամարդկանց՝ 10.3%), գենդերային հավասարության ցուցանիշը (տղաների համախառն ընդգրկվածության ցուցանիշի նկատմամբ աղջիկների համախառն ընդգրկվածության ցուցանիշի հարաբերակցության գործակիցը)՝ 0.36:

Նախնական մասնագիտական ծրագրեր իրականացնող 28 ուսումնական հաստատություններ կան բոլոր մարզերում, բացառությամբ Վայոց Ձորի և Արարատի:

Ըստ վիճակագրական տվյալների նախնական ուսումնական հաստատություններում սովորողների թիվն աճման միտում ունի: Ոլորտի մասնագետները սա կապում են կրթության ոլորտում ընթացող մի շարք բարեփոխումների հետ՝ 12-ամյա կրթական համակարգ, պարտադիր տարկետման իրավունքի բացակայություն, նախնական մասնագիտական կրթության ոլորտում իրականացվող միջազգային ծրագրեր:

2013-2014 ուսումնական տարում նախնական մասնագիտական ծրագրով սովորել են 6193 երեխա (մինչև 18 տարեկան սովորողների թիվն է ըստ վիճակագրական ծառայության), որից շուրջ 90%-ը սովորել է անվճար հիմունքներով:

Հանրապետության 99 միջին մասնագիտական պետական և ոչ պետական ուսումնական հաստատություններում (ՄՄՈւՀ) 2013-2014 ուսումնական տարում ընդունվել է 9785 (աղջիկներ՝ 54.4%), սովորել՝ 30125 (աղջիկներ՝ 53.3%), ավարտել՝ 7019 (աղջիկներ՝ 58.9%) մարդ: Ուսումնառությունն իրականացվել է հիմնական և միջնակարգ կրթության հիմքի վրա: Ուսանողների համախառն ընդգրկվածության ցուցանիշը կազմել է 12.2% (աղջիկներ՝ 13.4%, տղաներ՝ 11.1%), գենդերային հավասարության ցուցանիշը (տղամարդկանց համախառն ընդգրկվածության ցուցանիշի նկատմամբ կանանց համախառն ընդգրկվածության ցուցանիշի հարաբերակցության գործակիցը)՝ 1.21:

2013-2014 ուսումնական տարում հանրապետությունում գործել է 82 միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատություն: Ուսանողների թվաքանակը կազմել է 28333 (մինչև 18 տարեկան սովորողների թիվը կազմել է 22259), որոնց 52.4%-ը աղջիկներ են: Վճարովի ուսուցման համակարգում սովորել է ուսանողների 60.5%-ը, իսկ անվճարում՝ 39.5%-ը:

Առաջարկություններ

Հիմնվելով վերլուծության մեջ ներկայացված տվյալների վրա՝ ներկայացնում ենք կրթական համակարգում երեխաների իրավունքների իրացման բարելավմանն ուղղված հետևյալ առաջարկությունները.

- հասանելի դարձնել նախադպրոցական կրթության կենտրոնները բոլոր համայնքներում և բոլոր երեխաների համար, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող
- կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման համար մշակել հաշվառման, մոնիթորինգի համակարգ, այդ թվում տարբեր խոցելի խմբերի երեխաների համար, այդ թվում հաշմանդամություն ունեցող, սոցիալապես անապահով և այլն
- բարելավել կրթական ծառայությունների որակը փակ հաստատություններում՝ քրեակատարողական հիմնարկ, հատուկ դպրոցներ
- ներդնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կարիքների և առաջադիմության գնահատման ճկուն մեխանիզմներ
- դպրոցներում ներդնել տարբերակված մշակութային խմբակներ
- զարգացնել աշակերտական խորհուրդների աշխատանքներում ներգրավված երեխաների հմտությունները՝ ուղղված աշակերտական ինքնակառավարման մարմինների, մասնակցության գործընթացների կազմակերպմանը
- ներդնել ուսուցիչների աջակցության առավել հասցեական և օպերատիվ համակարգ
- կրթության բովանդակության բարելավման աշխատանքներում ներգրավել աշակերտների:

3.4 ԵՐԵԽԱՅԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

3.4.1 Վերարտադրողական առողջության մատչելիություն և որակ

Որպես ԱՀԿ/Եվրոպայի գործընկեր պետություն՝ Հայաստանը ԱՀԿ-ի վերահսկողությամբ պարտավորվել է կրճատել երեխայի առողջությանը սպառնացող վտանգները, ինչպես նաև հասնել ՄԱԿ-ի հազարամյակի զարգացման նպատակներին, մասնավորապես՝ 4-րդ և 5-րդ նպատակներին, որոնք վերաբերում են մանկական մահացության կրճատմանը և մայրական առողջության բարելավմանը:

Հայաստանում վերարտադրողական տարիքի (15-49 տարեկան) կանանց թիվը մոտավորապես 1.32 միլիոն է¹¹⁶:

Օրենդրության մակարդակում վերարտադրողական առողջությունն ապահովվում է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով (ընդունված 04.03.1996թ.-ին) և «Վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքով (ընդունված 11.12.2002թ.-ին), ինչպես նաև կառավարության որոշումներով և ՀՀ առողջապահության նախարարության (այսուհետ՝ ԱՆ) կողմից մշակված չափորոշիչներով (տե՛ս հավելվածը): Ծառայությունների մակարդակում Հայաստանում վերարտադրողական առողջության պահպանումը և մայրական խնամքն իրականացվում է մանկաբարձ-բուժականների կետերի, ամբուլատոր պոլիկլինիկաների և հիվանդանոցների միջոցով: Վերարտադրողական առողջության ոլորտում առողջության առաջնային պահպանման ծառայությունները մատուցվում են կանանց կոնսուլտացիայի կլինիկաների և գյուղական առողջապահական հաստատությունների միջոցով: Ծառայությունների հիմնական փաթեթը (ԾՀՓ) ներառում է վերարտադրողական առողջության բնագավառում սահմանափակ ծառայություններ, ինչպիսիք են առաջին մակարդակի այցելությունները գինեկոլոգին, տարին մեկ անգամ ստուգում՝ սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների (ՍՓՀ) հայտնաբերման նպատակով, հղիությանը նախորդող իմունիզացիա բոլոր կանանց համար և ծառայությունների ավելի լայն սպեկտր որոշակի խոցելի խմբերի համար: ԾՀՓ-ն չի ներառում այն ծախսերը, որոնք պահանջվում են հետագա զննման, հետազոտման, լաբորատոր քննությունների կամ բուժման և անհրաժեշտ դեղորայքի համար:

Նախաձննդյան խնամքը ներառված է ԾՀՓ-ում և գործում է Հայաստանում ապրող բոլոր կանանց համար: 2010թ.-ին անցկացված Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտությունը (ՀԺԱՀ) ցույց է տալիս, որ հայ կանանց 99%-ն օգտվել է նախաձննդյան խնամքի ծառայություններից: Նրանց մեծ մասը (93%) հայտնել են, որ վերջին 5 տարիների ընթացքում կատարել են չորս կամ ավելի նախաձննդյան այցելություններ: Հիմնվելով 2010թ.-ի ՀԺԱՀ-ի տվյալների վրա՝ կանանց 74%-ը չի վճարել նախաձննդյան ծառայությունների համար, իսկ 53% տոկոսը դեղերը ստացել է անվճար: Նախաձննդյան ծառայությունների մատչելիությունը հաշմանդամ կանանց համար դեռևս չլուծված հարց է Հայաստանում, քանի որ առողջապահական հաստատությունների մեծ մասը չունի համապատասխան հարմարություններ և ֆիզիկապես մատչելի չէ անվասայակից օգտվողների համար: Տեսողական և լսողական խնդիրներ ունեցող անձինք ևս պատշաճ խնամք ստանալու ճանապարհին հանդիպում են տարբեր խոչընդոտների:

ՀՀ ԱՆ-ի տվյալները ցույց են տալիս, որ 2010թ.-ին մայրական մահացության դեպքերի թիվը կազմել է 0.12՝ 100,000 կենդանածինների հաշվով, սակայն այն աճել է վերջին երեք տարիների ընթացքում՝ 2013թ. հասնելով 0.30-ի¹¹⁷: Տնային պայմաններում ծննդաբերություն-

¹¹⁶ Հայաստանի ժողովրդագրության և առողջության վերաբերյալ հետազոտություն, 2010:

¹¹⁷ Առողջապահության ազգային ինստիտուտի և ՀՀ ԱՆ-ի վիճակագրական տարեգիրք, 2014:

ների թիվը 2000թ.-ի 9%-ից հասել է 2%-ի 2005թ.-ին, իսկ 2010թ.-ին իջել է 1%-ից¹¹⁸: ԱՆ վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ 2007թ.-ին կենդանածինների թիվը կազմել է 40055, իսկ 2008թ.-ին՝ 41258, 2009թ.-ին՝ 44306, 2010թ.-ին՝ 44330, իսկ 2013թ.-ին՝ 41668: 2008-2010թթ.-ի ընթացքում թվի աննշան աճը կարող է պայմանավորված լինել ծննդօգնության վկայագրի ներդրմամբ, սակայն սա չպետք է դիտարկել որպես միակ բացատրություն:

Վերարտադրողական առողջությունը նաև վերաբերում է ընտանիքի պլանավորման և հղիության արհեստական ընդհատման հարցերին: 2002թ.-ին Հայաստանի խորհրդարանի կողմից ընդունված վերարտադրողական առողջության և իրավունքների մասին օրենսդրության համաձայն՝ հակաբեղմնավորիչ միջոցների օգտագործումը, այդ թվում՝ կամավոր ամլացումն օրինական է Հայաստանում: Հղիության արհեստական ընդհատումը ևս օրինական է, եթե այն տեղի է ունենում հղիության 12-րդ շաբաթից առաջ: Կանանց կեսից ավելին որևէ հակաբեղմնավորիչ չի օգտագործում, իսկ որոշ շրջաններում հակաբեղմնավորիչ չօգտագործողների թիվը հասնում է 73%-ի¹¹⁹: Վերարտադրողական տարիքի 1000 կնոջ հաշվով գրանցված հղիության արհեստական ընդհատումների թիվը 2013թ.-ին 15.9 էր, ինչը շատ մոտ է վերջին 5 տարիների ընթացքում գրանցված թվին¹²⁰: Արհեստական ընդհատումներով ավարտվող հղիությունների թիվը վերջին տասը տարիների ընթացքում կրճատվել է՝ 50%-ից հասնելով 45%-ի (2000-2005թթ.), իսկ 2010թ.-ին 29%-ի: 2010թ.-ին՝ ՀԺԱՀ-ը ցույց է տալիս, որ հղիությունն արհեստականորեն ընդհատող կանանց 39%-ը որպես պատճառ նշել է, որ այլևս չի ցանկանում երեխա ունենալ: Սեռով պայմանավորված ընդհատումների թիվը նշվել է դեպքերի 9%-ում, հաճախ այն պատճառով, որ ցանկալի սեռը եղել է արականը (8%)¹²¹: Ըստ ժողովրդագրական վիճակագրության՝ սկսած 1990թ.-ից նորածինների շրջանում արական-իգական համամասնությունը փոխվել է դեպի արականի գերակայությունը: 2012թ.-ին նորածինների սեռերի հարաբերակցությունը կազմում է 114 նորածին տղա՝ 100 նորածին աղջկա հաշվով, եթե երեխան երկրորդն է ընտանիքում, մինչդեռ բնական համամասնությունն է 102-106՝ արականը՝ 100 իգականի հաշվով:

«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքում առաջարկվող փոփոխության ընդունման դեպքում երեխայի սեռը չի բացահայտվելու նախքան հղիության 30-րդ շաբաթը: 2013թ.-ից սկսած ԱՆ-ն միջազգային կազմակերպությունների աջակցությամբ մշակում է հանրային իրազեկման քարոզարշավներ, որոնք համարվում են ավելի արդյունավետ, քան օրենսդրական սահմանափակումները:

Առաջարկություններ

- Շարունակել ջանքեր ներդնել գյուղական համայնքներում մանկաբարձական խնամքի բարելավման, հատկապես նորածինների ինտենսիվ խնամքի և վերակենդանացման ծառայությունների հզորացման ուղղությամբ:
- Շարունակական վերապատրաստում անցկացնել ծննդատներում նորածնային խնամքի, թերհաս նորածինների խնամքի, մոր և մանկան առողջության կանխարգելիչ և լուսավորչական միջոցառումների, ինչպես նաև պատշաճ խորհրդատվություն տալու ոլորտում ամբուլատորիաների անձնակազմերի հետ, հատկապես՝ գյուղական վայրերում:
- Հետամուտ լինել նախածննդյան, ծննդօգնության և հետծննդաբերական խնամքի ոլորտում անօրինական վճարների և կոռուպցիոն ռիսկերի հայտնաբերմանը:
- Ապահովել առողջապահական բոլոր ծառայությունների հավասար մատչելիությունը, մասնավորապես՝ հղիության և ծննդաբերության ընթացքում հաշմանդամ կանանց համար առողջապահական ծառայությունների հավասար մատչելիությունը:
- Հաշվի առնելով թերհաս և թերքաշ նորածինների մեծ թիվը՝ ավելի մեծ ուշադրություն

¹¹⁸ Հայաստանի ժողովրդագրության և առողջության վերաբերյալ հետազոտություն, 2010:

¹¹⁹ Հայաստանի ժողովրդագրության և առողջության վերաբերյալ հետազոտություն, 2010:

¹²⁰ Առողջապահության ազգային ինստիտուտի և ՀՀ ԱՆ-ի վիճակագրական տարեգիրք, Առողջություն և հանրային առողջություն, 2014:

¹²¹ Հայաստանի ժողովրդագրության և առողջության վերաբերյալ հետազոտություն, 2010:

պետք է դարձնել մայրական առողջության վրա, հատկապես բեղմնավորումից առաջ խնամքի ծառայություններին, զույգերին և հղի կանանց նվազագույն հետազոտությունների ու բուժման փաթեթ առաջարկելու հարցին:

- Մեծացնել հսկողությունը ծնունդների բարդացումների ժամանակ ձեռնարկվող անհետաձգելի միջամտությունների նկատմամբ. մասնավորապես՝ ստուգել կեսարյան հատում վիրահատության իրականացման համապատասխանությունը սահմանված ցուցումներին:
- Տրամադրել ավելի նախաձեռնողական կրթություն ծնողներին նորածինների կերակրման, զարգացման և նորածինների հիվանդությունների ժամանակ վտանգավոր ախտանիշների ճանաչման ոլորտում:
- Հղիության արհեստական ընդհատումների թիվը կրճատելու նպատակով ուսումնասիրել բնակչության համար հակաբեղմնավորիչների հասանելիությունը և հակաբեղմնավորիչներ չօգտագործելու այլ հնարավոր պատճառները: Երիտասարդների համար առավել մատչելի ծառայություններ իրականացնել: Երիտասարդ կանանց հակաբեղմնավորիչների օգտագործման վերաբերյալ գիտելիքներ տրամադրել:
- Առավել մատչելի դարձնել, այդ թվում՝ գնի տեսանկյունից, հակաբեղմնավորիչները, հատկապես՝ գյուղական վայրերում բնակվող կանանց համար:
- Զինել ապագա մայրերին և գյուղական վայրերում առողջապահական ծառայություններ տրամադրողներին համապատասխան գիտելիքներով և պատկերացումներով հղիության ընթացքի վտանգների ախտանիշների մասին:
- Բարելավել անպտղության վաղ հայտնաբերումն ու բուժումը, ինչպես նաև ավելի մատչելի դարձնել վերարտադրողական տեխնոլոգիաները ցածր եկամուտներ ունեցող ընտանիքների համար:
- Խթանել հանրային իրազեկումը հղի կանանց առողջության և սննդակարգի վերաբերյալ՝ նվազեցնելու թերքաշ և թերհաս նորածինների թիվը:
- Ի լրումն հանրային իրազեկման արշավների և գենդերային հավասարության և հասարակությունում կանանց դերի ամրապնդման՝ կարևոր է ապահովել օրենսդրական կարգավորումներ հղիությունների սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների կանխարգելման նպատակով:
- Մայրական առողջության պահպանման նպատակով ապահովել նախաբեղմնավորման խորհրդատվություն և նախաձննդյան խնամքի փուլում հայտնաբերված պաթոլոգիաների անվճար բուժում:
- Հղի կանանց ապահովել երկաթի և ֆոլաթթվի համալրումներով:

3.4.2 Երեխայի (6-18) առողջությունն ու սնուցումը

Առողջության հետազոտման ծրագրեր և սնուցում

Նախորդ տարիքային խմբում երեխայի առողջությունն ու բարեկեցությունը հիմնականում կախված էր ծնողից և առողջապահական ծառայություններից: Ստորև ընդհանուր մահացության տվյալների հետ մեկտեղ ամփոփվում են վարքագծային ռիսկի գործոնները դպրոցական և դեռահասության տարիքում: Եթե մենք չկարողանանք դեռահասների շրջանում սերմանել առողջ վարքագիծ և առողջ ապրելակերպի հմտություններ, ապա հետագայում, մեծ տարիքում հիվանդությունների 70%-ի պատճառը կվերագրվի անառողջ կամ ռիսկային վարքագծին, որ մարդիկ ձևավորում են ավելի երիտասարդ տարիքում¹²²:

Հայաստանում երեխայի առողջության պահպանման իրավունքներն ամրագրող բոլոր ընդհանուր օրենսդրական փաստաթղթերի հետ մեկտեղ դպրոցահասակ երեխաների առողջության պահպանման իրավունքը հատուկ մատնանշված է «Նախադպրոցական և դպրոցա-

¹²² Առողջություն աշխարհի դեռահասների համար. երկրորդ հնարավորություն երկրորդ տասնամյակում, ԱՀԿ, 2014:

կան հաստատություններում երեխաների բժշկական խնամքի մասին» (09.04. 2013, N 874-Ա) հրամանում և Առողջապահության նախարարի՝ «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում երեխաների բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման չափորոշիչը հաստատելու մասին» (03.11.2013, N 70-Ն) հրամանում: Երեխաների և դեռահասների առողջության մասին տեղեկությունները և վիճակագրությունը չեն հավաքվում համակարգված եղանակով: Օրինակ՝ ՀՀ առողջապահության նախարարությունը 350-ից ավելի աշակերտ ունեցող դպրոցի համար ապահովում է մեկ բուժքրոջ ծառայություն: Եթե աշակերտների թիվն ավելի փոքր է, ապա բուժքույրն աշխատում է մեկից ավելի դպրոցում: Դպրոցական բուժքույրը կապեր ունի տեղական պոլիկլինիկայի հետ և հիմնականում պատասխանատու է առաջին օգնության և համաճարակներին արձագանքելու և ամենօրյա հետազոտումների համար: Հետազոտումները կատարվում են տարին մեկ անգամ, դրանք ամրագրված են թիվ N 70-Ն հրամանով և թիվ N 874-Ա հրամանով և ներառում են քաշը, հասակը, զարկերակային ճնշումը, տեսողական և լսողական խնդիրները, կեցվածքի շեղումները: 2008թ.-ից սկսած հոգեբանասոցիալական հարցաշարեր են լրացվել, սակայն ընդհանուր վիճակագրություն չի վարվել այս բոլոր ցուցանիշների վերաբերյալ: Որոշ փորձնական դպրոցների համար Արաբկիր բժշկական կենտրոնը իրականացնում է վիճակագրական ուսումնասիրություն, որը, սակայն չի արտացոլում ընդհանուր իրավիճակը Հայաստանում: Բուժքույրը նաև պատասխանատու է երիտասարդներին բարեկամական առողջապահական ծառայություններ (Youth Friendly Health Services) մատուցելու համար: Այդուհանդերձ, այս ծառայությունների որակը և մատուցման մակարդակը դպրոցներում խնդրահարույց է: 2003թ.-ից սկսած Ընտանիքի և առողջության համահայկական ասոցիացիայի, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի օժանդակությամբ Հայաստանում գործել են 30-ից ավելի երիտասարդներին բարեկամական առողջապահական ծառայություններ մատուցող կենտրոններ, վերապատրաստվել են մասնագետներ այդ մոտեցումների, խորհրդատվության տրամադրման և հաղորդակցության ոլորտում: Ծրագրի ավարտից հետո ծառայությունների մեծ մասը շարունակական բնույթ չի ունեցել, քանի որ պետությունից ֆինանսական օժանդակություն չի ստացվել:

Պոլիկլինիկաներից և դպրոցներից մի քանիսն ունեն հոգեբաններ, սակայն դա ԱՆ-ի պաշտոնական պահանջը չէ: Այսպիսով՝ դպրոցահասակների և դեռահասների հոգեկան առողջության վիճակը կարող է գնահատվել միայն 12-17 տարեկանում կատարված զննումների արդյունքում:

Ինչ վերաբերում է հիվանդանոցային խնամքին, ծնողները վճարում են երեխաների համար՝ սկսած 8 տարեկանից: ԱՀԿ-ի ոչ վարակիչ հիվանդությունների չորս գործոնների (ծխախոտի օգտագործում, ֆիզիկական ակտիվության բացակայություն, անառողջ սննդակարգ և ալկոհոլի վնասակար օգտագործում), ինչպես նաև հոգեկան առողջության խնդիրների կանխարգելումը պետք է սկսել դեռահասության տարիքից: Քաղաքականության մակարդակում երեխաների պաշտպանությունը թմրադեղերի, ծխախոտի և ալկոհոլի գործածումից ամրագրված է «Ծխախոտի վաճառքի, սպառման և օգտագործման մասին» ՀՀ օրենքով, «Թմրադեղերի և հոգեմետ նյութերի մասին» ՀՀ օրենքով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքով:

Հայաստանում բացակայում է պաշտոնական նոր վիճակագրություն դպրոցահասակների կողմից ալկոհոլի, թմրամիջոցների կամ ծխախոտի օգտագործման մասին: Դպրոցահասակների առողջությանը վերաբերող հետազոտությունը՝ հիմնված երեխաների հաղորդումների վրա և անցկացված Արաբկիր բժշկական կենտրոնի կողմից 2012թ.-ին ցույց է տալիս, որ 15 տարեկան տղաների 11%-ը և աղջիկների 1.5%-ը ծխում են, 15 տարեկան տղաների 18%-ը, իսկ աղջիկների 6%-ն են օգտագործում ալկոհոլ, 15 տարեկան տղաների 6%-ը և աղջիկների՝ 0.4%-ը օգտագործում են թմրամիջոցներ: Դպրոցները անց են կացնում առողջ ապրելակերպի վերաբերյալ դասընթացներ և սովորաբար այդ ծրագրերում ներառում են ծխախոտի, ալկոհոլի և թմրամիջոցների գործածության հետևանքներն առողջության համար թեմաները: Առողջությանը վերաբերող 42 դասաժամ է նախատեսված 9-11-րդ դասարանների դպրոցական ծրագրում:

Գիրությունը նույնպես համատարած երևույթ է դառնում դպրոցահասակ երեխաների շրջանում: Երեխաների սնուցման հարցը կառավարության հսկողության տակ է գտնվում և

կարգավորվում է հետևյալ օրենսդրական ակտերով և ծրագրերով՝ «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015 թթ. ազգային ծրագիր», «ՄԱԿ-ի զարգացման աջակցության 2010-2015թթ. ծրագիր» (ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ), Ալյուրի հարստացման ազգային ծրագիր, «Երեխաների սնուցման բարելավման ազգային ռազմավարությունը և 2013-2015թթ. գործողությունների ծրագիր» (2011թ.), Յոդի պակասորդի վերացման ազգային ծրագիր և սանիտարական նորմեր և դպրոցներում սննդի ապահովման մասին կանոններ (06.06.2014թ.):

Առաջարկություններ

- Շարունակել առողջ ապրելակերպի մասին կրթությունը (պատշաճ թվով առողջ ապրելակերպի մասին դասերի հետևողական անցկացում բոլոր դասարաններում) դպրոցահասակ երեխաների շրջանում՝ երեխաների ակտիվ ներգրավմամբ:
- Ապահովել առողջ ապրելակերպի դասավանդման մեթոդաբանության վերաբերյալ նախնական և ընթացիկ վերապատրաստումներ ուսուցիչների համար:
- Կրթել և իրազեկել ծնողներին, ուսուցիչներին և առողջապահության ոլորտի աշխատողներին առողջ ապրելակերպի և սեռական առողջության ոլորտի խնդիրների մասին:
- Կրթել և իրազեկել ծնողներին, մանկավարժներին և առողջապահության ոլորտի աշխատողներին դպրոցահասակների-դեռահասների առողջությանն ու սնուցմանը, առողջ ապրելակերպին և սեռական առողջությանը վերաբերող խնդիրների մասին:
- Բարելավել դպրոցահասակ երեխաների և դեռահասների սնունդը, հատկապես՝ գյուղական վայրերում: Սա ենթադրում է խթանել առողջ սնունդ օգտագործելու սովորույթների ձևավորմանը, այդ թվում՝ իրազեկման քարոզարշավներ շաքար պարունակող ըմպելիքների և «արագ սննդի» գերսպառման հետ կապված:
- Ապահովել սննդի որակին և անվտանգությանը վերաբերող համապատասխան քաղաքականության մշակում, կիրարկում և վերահսկում:
- Աջակցել երիտասարդներին բարեկամական առողջապահական ծառայությունների մոդելի զարգացմանը և շարունակականությանը:
- Ապահովել վիճակագրության կենտրոնացված տվյալների բազա դպրոցներում իրականացված զննությունների վերաբերյալ, որոնք կարող են հետազայում ևս օգտագործվել դպրոցահասակ երեխաների շրջանում առողջապահական խնդիրների բացահայտման և լուծման համար:
- Ապահովել ծխախոտի և ալկոհոլի ապառման և գովազդի մասին օրենսդրության կիրարկումը, հատկապես ուշադրությունը բևեռելով մինչև 18 տարեկան երեխաների համար ծխախոտի և ալկոհոլային խմիչքների հասանելիության սահմանափակման վրա:

3.4.3 Դպրոցական առողջությունն ու սնուցումը

Դպրոցական առողջությունն ու սնուցումը համապարփակ հասկացություն է: Այն ընդգրկում է մի շարք բաղադրիչներ, որոնք ուղղված են 6-18 տարեկան երեխաների առողջական ռիսկերի ու խնդիրների արդյունավետ կանխարգելմանը:

Զափազանց կարևոր է դպրոցականների համար համապատասխան պայմանների ստեղծումը՝ նրանց բառի լայն իմաստով առողջ պահելու նպատակով, ինչը իր հերթին կապահովի արդյունավետ կրթական համակարգ, ուսուցառման արդյունքներ և հետագա հաջողություններ կյանքում:

Դպրոցահասակ երեխաները խոցելի են որոշ առողջական ռիսկերի նկատմամբ, ինչը պայմանավորված է իրենց ֆիզիոլոգիական և վարքագծային յուրահատկություններով:

Սեյվ դը չիլդրենը Հայաստանում իրականացրել է դպրոցական առողջության իրավիճակի գնահատում՝ կիրառելով միջազգայնորեն ընդունված Ռեսուրսների կենտրոնացում ար-

դյունավետ դպրոցական առողջության վրա (ՌԿԱԴԱՀ) կառուցվածքը, որը ներառում է չորս հիմնական բաղադրիչներ. (1) Դպրոցական առողջապահության և սնուցման ամբողջական քաղաքականության առկայություն և իրականացում; (2) Ապահով ֆիզիկական և սոցիալ-հոգեբանական միջավայրի ապահովում; (3) Հմտությունների վրա հիմնված առողջապահական կրթություն և (4) Դպրոցահեն առողջապահական և սնուցման ծառայությունների ամբողջական և անվճար տրամադրում:

Ստացված արդյունքները փաստում են, որ չի կատարվել երկրի դպրոցական առողջության իրավիճակի ներկայացուցչական վերլուծություն: Դպրոցական երեխաների առողջության վերաբերյալ հասանելի վիճակագրությունը թերի է կամ հնացած: Որոշ ցուցանիշների վերաբերյալ տվյալները բացակայում են (գիրություն, բերանի խոռոչի առողջություն, բռնություն դպրոցում, ճիճվակրության տարածվածություն և այլն):

Բացի այդ գոյություն ունեն տարբեր քաղաքական փաստաթղթեր, որոնք երաշխավորում են արդյունավետ դպրոցական առողջություն և սնուցում, սակայն կա այդ փաստաթղթերի լուսաբանման և տեղեկացվածության խնդիր, ինչպես նաև առկա քաղաքականությունների հետևողական իրականացման և մշտադիտարկման պակաս:

Դպրոցներում ապահով ֆիզիկական միջավայր երաշխավորող քաղաքական փաստաթղթերը ներառում են կրթական հաստատություններին ներկայացվող հիմնական պահանջները, դպրոցի շենքի շինարարության նորմերը, ջրամատակարարման և սանիտարահիգիենիկ ստանդարտները, դպրոցական սնունդի որակն ու անվտանգությունը կարգավորող նորմերը, ֆիզիկական կուլտուրայի դասերի համար նախատեսված հարմարությունների, ինչպես նաև աղետների ռիսկի նվազեցման չափորոշիչները: Միևնույն ժամանակ տվյալ նորմերն ու ստանդարտները պատշաճ կերպով լուսաբանված և հասանելի չեն դպրոցներին: Վերջին սանիտարահիգիենիկ նորմերը մշակվել և հաստատվել են ՀՀ կառավարության կողմից 2002թ., սակայն դրանք չեն ներառում այնպիսի կարևոր կետեր ինչպիսիք են՝ հաշմանդամ խմբերի երեխաների հատուկ կարիքները, հիվանդությունների կանխարգելումը և այլ: Սեյվ դը չիլդրենի կողմից իրականացված թիրախային դպրոցների հարմարությունների տարբեր գնահատումները բացահայտել են զգալի անհամապատասխանություններ սանիտարահիգիենիկ նորմերին, այդ թվում խմելու ջրի և ձեռք լվալու հարմարանքների բացակայություն, սանհանգույցների, ինչպես նաև ճաշարանի և մարզադահլիճի վատ պայմաններ:

Դպրոցներում ապահով սոցիալ-հոգեբանական միջավայրը երաշխավորող մեխանիզմների պակաս կա; չկա որևէ արտաքին և ներքին համապարփակ քաղաքականություն, որը հասցեագրում է դպրոցներում բռնությունը, ահաբեկումը, փոքրամասնությունների նկատմամբ խտրական վերաբերմունքը, ինչպես նաև թմրադեղերի ու ալկոհոլի օգտագործումը: Աշխատակազմը և երեխաները բավականաչափ չեն իրազեկվում երեխաների իրավունքների և երեխաների պաշտպանության հարցերի վերաբերյալ:

Ինչ վերաբերում է առողջական կրթությանը, հմտությունների վրա հիմնված առողջական կրթությունը չի ուսուցանվում պատշաճ և բավարար կերպով բոլոր դպրոցներում: Յուրաքանչյուր թեմային տրամադրված ժամանակը, ինչպես նաև ուսուցման մեթոդների անհետևողական իրականացումը բավարար չեն երեխաների մոտ անհրաժեշտ հմտություններ ձևավորելու և առողջ ապրելակերպ սերմանելու համար:

Չնայած ուսումնական պլանի մեջ ներառված է երեխաների ֆիզկուլտուրայի դասերը, այնուամենայնիվ գոյություն չունեն այլընտրանքային (հատուկ) դասեր առողջական խնդիրներ կամ սահմանափակումներ ունեցող երեխաների համար (օր՝ կարճատեսություն, գիրություն):

Այս ամենի հետ մեկտեղ սահմանված դպրոցահեն առողջապահական և սնուցման ծառայությունները բավարար չեն դպրոցականների առողջապահական կարիքները (լայն իմաստով) պատշաճ ուսումնասիրելու և հասցեագրելու համար: Նման խնդիրներից են հոգեբանական կարգավիճակը, միջանձնային հարաբերությունների հետ կապված խնդիրները, սեռային խնդիրները, ալկոհոլի կամ թմրանյութի չարաշահումը, ինքնասպանության փորձերը և այլն:

Առաջարկություններ

- Պետական համապատասխան կառույցները վերանայեն և բարելավեն սանիտարահիգիենիկ նորմերը:
- Պետությունն առաջնահերթություն տա և ավելի շատ միջոցներ հատկացնի դպրոցականների առողջության համար, համապատասխան քաղաքականության հետևողական կիրառման համար, ինչպես նաև բարելավի դրանց իրականացման վերահսկումը:
- Ամրապնդվի պետական միջոլորտային համագործակցությունն ու համակարգումը դպրոցական առողջության և սնուցման քաղաքականության մշակման/վերանայման ու իրականացման գործընթացում: Երաշխավորվի հաշմանդամություն ունեցող երեխաների հատուկ կարիքների հասցեագրումը
- Հնարավորություն ստեղծվի դպրոցական մակարդակում ՌԿԱԴԱՀ գնահատում իրականացնելու համար, որպեսզի ուսումնասիրվի տեղեկատվության տարածումը վերևից ներքև ու առկա ազգային քաղաքականությունների փաստացի կիրառումը:
- Հնարավորություն ստեղծվի ազգային դպրոցական առողջության իրավիճակի վերլուծություն իրականացնելու համար ներառյալ կլինիկական ու վարքային հետազոտությունները
- Բարելավվի կրթական և առողջապահական տեղեկատվական համակարգերը՝ հաշվի առնելով շահագրգիռ կողմերի կարծիքը համակարգի արդյունավետության վերաբերյալ:
- Համակարգվեն ջատագովության ջանքերը՝ տարրական և միջնակարգ դպրոցներում առողջական կրթության ուսուցանումը բարելավելու համար
- Ներդրվի դպրոցների սոցիալ-հոգեբանական միջավայրը կարգավորող համընդհանուր դպրոցական քաղաքականություն: Այն ներառում է բռնության կանխարգելում, համացանցի ապահով օգտագործում, խտրականության և պիտակավորման կանխարգելում, ինչպես նաև հոգեներգործող նյութերի օգտագործման հսկողություն:
- Համապատասխան աշխատանք տարվի՝ սահմանափակ կարողություններով երեխաների համար (կարճատես, գեր) այլընտրանքային ֆիզիկական կրթության դասեր ներդնելու համար:

3.4.4 Հայրուկ կարիքներով երեխաների առողջությունը

ԱՀԿ-ն սահմանում է հաշմանդամությունը՝ որպես խանգարումներ և գործունեության ու մասնակցության սահմանափակում: Հաճախ հաշմանդամություն ունեցող երեխաներն արգելքների են հանդիպում առողջապահական և վերականգնողական ծառայություններից օգտվելու հարցում, հատկապես՝ գյուղական վայրերում:

Քաղաքականության մակարդակում հաշմանդամ անձանց և երեխաների իրավունքները պաշտպանվում են «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով (1993թ.), «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ազգային ռազմավարության 2005-2015թթ. ծրագրով և «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայով (վավերացված՝ 17.05.2010թ.-ին): Օրենսդրության համաձայն՝ անձը բժշկական և սոցիալական ստուգման արդյունքում ճանաչվելով հաշմանդամ ստանում է հաշմանդամ երեխայի կարգ (I, II, III կարգ), իսկ 18-ից ցածր տարիքի երեխան ստանում է հաշմանդամ երեխայի կարգ: Առկա է նաև «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներգրավման մասին» օրենքի նախագիծը, որն արտացոլում է հաշմանդամության նկատմամբ սոցիալական մոտեցումը:

Գոյություն ունեն պետական մի շարք բժշկական և սոցիալական աջակցության ծրագրեր, որոնք տրամադրում են անվճար ծառայություններ հատուկ կարիքներ ունեցող երեխաներին: Համաձայն ՀՀ օրենսդրության՝ վերականգնողական սարքավորումները անվճար են հաշմանդամ երեխաների համար: Կա անվճար անհատական վերականգնողական ծրագիր, որը հաշմանդամ երեխային պետք է տրամադրվի սոցիալական ծառայություններ տրամադ-

րող տարածքային մարմինների կողմից: Անհատական ծրագիրը երեխային ապահովում է պրոթեզավորման-օրթոպեդիկ միջոցներով, տեխնիկական միջոցներով, սարքավորումներով: Սակայն հասարակական կազմակերպությունների տվյալներով («Լիարժեք կյանք» ՀԿ, 2012թ.)՝ անհատական վերականգնողական ծրագրերը ձևական բնույթ են կրում: Համաձայն ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի 2012թ.-ի զեկույցի՝ հաշմանդամություն ունեցող հաշվառված երեխաները կազմում են երեխաների ընդհանուր թվի 1 տոկոսը (հաշվառված է 8000 երեխա): Համաձայն նույն զեկույցի՝ գոյություն ունի հաշվարկ, ըստ որի եթե հաշմանդամություն ունեցող հաշվառված երեխաների համաշխարհային միջինը բնակչության 2,5%-ն է, ապա պետք է գոյություն ունենա հաշմանդամություն ունեցող մոտ 12000 երեխա, որոնք ինչ-ինչ պատճառներով հաշվառված չեն: Այսպիսով՝ այս երեխաները ներգրավված չեն սոցիալական և վերականգնողական ծրագրերում: Սկսած 2005թ.-ից ԵՄ-ի ֆինանսավորմամբ Հայաստանը կիրառում է երեխաների պաշտպանության եռաստիճան համակարգ, որը պետք է հայտնաբերի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին ազգային և մարզային մակարդակներում: Սակայն իրականում այս համակարգը արդյունավետ չի գործում հատուկ կարիքներ ունեցող երեխաների հայտնաբերման տեսանկյունից:

Ցանկացած տիպի բժշկական խնամք անվճար է 18-ից ցածր տարիքի հաշմանդամ երեխաների համար: Հաշմանդամ երեխաներին տրվում են անվճար դեղամիջոցներ բժշկի նշանակմամբ: Անվճար դեղամիջոցների տրամադրման չափորոշիչները և քաղաքացիների արտոնված խմբերը ամրագրված են կառավարության 23.11.2006թ.-ի թիվ 1717-Ն որոշմամբ: Սակայն ՄԻՊ-ի գրասենյակն արձանագրել է դեպքեր, երբ հաշմանդամություն ունեցող անձինք, այդ թվում՝ երեխաները չեն ստանում դեղամիջոցներ իրենց տարածքային առողջության առաջնային պահպանման հաստատություններից:

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի վերջին (2012թ.) ուսումնասիրությունը հաշմանդամություն ունեցող երեխաների համար առողջապահական ծառայությունների մատչելիության և այդ ծառայություններից ծնողների գոհունակության առնչությամբ բացահայտել է, որ քաղաքային վայրերում հաշմանդամ երեխաների 19%-ը, և գյուղական վայրերում հաշմանդամ երեխաների 25%-ը չեն գտնվում մանկաբույժի հսկողության ներքո: Ծնողների 48%-ի կարծիքով՝ նման ծառայությունների կարիք չկա, 26%-ը չի կարողանում վճարել այդ ծառայությունների համար, 16%-ը նշել է իր համայնքում նման ծառայությունների բացակայության մասին, 12%-ը նշել է, որ իրազեկված չի եղել ծառայության մասին, իսկ 12%-ը նշել է, որ առկա ծառայությունների որակը բավարար չի եղել: Գյուղական համայնքներում պատասխանողներն ավելի հաճախակի հիշատակել են ծառայությունների բացակայությունն ու ֆինանսական արգելքները:

Կան նաև հատուկ կարիքներով երեխաներին պետական սոցիալական և բժշկական ծրագրերում չներգրավելու այլ պատճառներ, ինչպիսիք են, օրինակ, ծնողների շրջանում տեղեկատվության բացակայությունը: Օրինակ, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի 2012թ.-ի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հատուկ կարիքներով երեխաների միայն 23%-ն է ստանում ծառայություններ անհատական վերականգնողական ծրագրերի շրջանակներում, ընտանիքների 32%-ը չի վճարել բժշկական ծառայությունների դիմաց, 52%-ը վճարել է դեղամիջոցների դիմաց, 28%-ը վճարել է բուժզննության դիմաց, 6%-ը՝ տեխնիկական հարմարությունների և 22%-ը՝ բժիշկներին և բուժքույրերին: Ծնողների կեսից ավելին հիշատակել են, որ տեղյակ չեն եղել անհատական վերականգնողական ծրագրերի կամ անվճար դեղերի ցանկի մասին: Ի լրումն՝ ՄԱԿ-ի կոմիտեն հիշատակել է, որ մարզերում բնակվող հատուկ կարիքներով երեխաների համար մատչելի չեն պատշաճ որակի խնամքն ու ծառայությունները:

Մյուս խնդիրը հենաշարժիչ համակարգի հիվանդություններով պայմանավորված հաշմանդամություն ունեցող երեխաների համար առողջապահական ծառայությունների ֆիզիկական մատչելիությունն է: Տեսողական խնդիրներ ունեցող երեխաները զրկված են առողջական դիսկերի մասին՝ իրենց տեղեկություններ ստանալու իրավունքի իրականացման հնարավորությունից, քանի որ բրայլյան լեզվով, նշանների լեզվով նման տեղեկություններ գոյություն չունեն, իսկ նշանների լեզվով կամ սուբտիտրերով որևէ հեռուստահաղորդում չի հեռարձակվում:

Առաջարկություններ

- Առաջարկվում է բարելավել հաշմանդամության հաշվառման և հաշվետվողականության համակարգը, որպեսզի հաշմանդամություն ունեցող երեխաները դուրս չմնան պետական աջակցության ծրագրերից և չզրկվեն առողջապահական ծառայություններից անվճար օգտվելու իրենց իրավունքից:
- Բարձրացնել հատուկ կարիքներ ունեցող երեխաների ծնողների իրազեկվածությունը գործող օրենսդրության և պետության կողմից հաշմանդամ երեխաներին մատուցվող աջակցության վերաբերյալ: Տեղեկությունները կարող են տարածվել լրատվամիջոցների, սոցիալական աշխատողների կամ բուժաշխատողների կողմից, ովքեր անմիջական շփում ունեն ընտանիքների հետ:
- Իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով այն սոցիալական խմբերի և դասերի ցանկը, որոնք իրավունք ունեն անվճար կամ արտոնյալ պայմաններով ստանալու դեղամիջոցներ, պրոթեզներ կամ առողջապահական ծառայություններ, պետք է հրապարակել առողջության առաջնային պահպանման հաստատություններում կամ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների գրասենյակներում: Շահառուներին կարելի է բաժանել նաև բուկլետներ:
- Բարելավել բուժհաստատությունների ֆիզիկական մատչելիությունը և պայմանները՝ էլ ավելի մատչելի դարձնելու դրանք հաշմանդամ երեխաների համար:
- Նախատեսել լրացուցիչ սոցիալական փաթեթներ հաշմանդամ երեխաների ծնողների համար:
- Կատարելագործել անհրաժեշտ վերականգնողական ծրագրերը և ծառայությունները (արդիականացված սարքավորումներ, ծառայությունների հասանելիությունը համայնքներում) հատկապես՝ գյուղական վայրերում:
- Տրամադրել առողջությանը վերաբերող նյութեր բրայլյան լեզվով տեսողական խնդիրներ ունեցող դպրոցահասակների համար: Հեռարձակել բժշկական կրթական հաղորդումներ, որոնք համապատասխանում են լսողական խնդիրներ ունեցող երեխաների կարիքներին՝ ժեստային թարգմանության կամ սուբտիտրերի միջոցով:
- Ամրապնդել միջգերատեսչական համագործակցությունը հաշմանդամություն ունեցող երեխաների աջակցության համար:

